ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԻԱՄ ԽԱՆԶԱԴՅԱՆ



# ՊՈԼԻՏՈԳԵՆԵԶԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ

ՊՈԼԻՏՈԳԵՆԵԶԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ

9789939901268

ՄԱՐԻԱՄ ԽԱՆՁԱԴՅԱՆ

# ՊՈԼԻՏՈԳԵՆԵԶԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 930.85:141.155
ԳՄԴ 63.3(0)+87
Խ 240

Նվիրում եմ ծնողներիս՝
Գագիկ Խանզադյանին և Հռիփսիմե Առաքելյանին

Խմբագիր՝ Ա. Քոսյան

Խանզադյան Մ.

Խ 240 ՊՈԼԻՏՈԳԵՆԵԶԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ / Մ. Խանզադյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2022.-192 էջ:

Աշխատությունում ներկայացված են պոլիտոգենեզի այն տեսությունները, որոնք մշակվել և ներկայացվել են դարաշրջանի կարևորագույն հայեցակարգի՝ էվոլյուցիոնիզմի շրջանակներում: Ժամանակագրորեն աշխատությունն իր մեջ է ներառում XIX դարից մինչև XX դարի 1980-ական թվականների էվոլյուցիոնիստական հիմնական հայեցակարգերը (բուն էվոլյուցիոնիզմի և նեոէվոլյուցիոնիզմի փուլերը):

Աշխատությունը կարող է օգտակար լինել պատմաբաններին և վաղ պետականության տեսական հարցերով զբաղվող մասնագետներին:

ՀՏԴ 930.85:141.155
ԳՄԴ 63.3(0)+87

ISBN 978-9939-9012-6-8
DOI: 10.54503/978-9939-9012-6-8

© Խանզադյան Մարիամ, 2022
© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2022

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զարգացման հայեցակարգի ծավալման արդյունքում ձևավորված էվոլյուցիոնիզմը յուրօրինակ և բազմաշերտ գիտական ուղղություն էր, որն ասպարեզ մտավ XIX դարում, ունեցավ որակական զարգացման իր փուլերը և շարունակում է մնալ բազմաթիվ գիտական ուսումնասիրությունների հիմքում առ այսօր:

Էվոլյուցիոնիստական տեսությունների ուշադրության կենտրում ի սկզբանե մարդկային հասարակության ամենավաղ շրջանների պատմությունն էր:

Եթե XIX դարի և XX դարասկզբի գիտական ուղղությունններն ու աշխատությունները կարելի է դիտարկել մեկ միասնական հարացույցում, ապա XX դարի առաջին կեսում պոլիտոգենեզի հայեցակարգերը բաժանվեցին երկու խոշոր հատվածների՝ մարքսիստական-խորհրդային և արևմտյան: Ամենևին չնսեմացնելով խորհրդային գիտական ժառանգությունը, պետք է փաստել, որ արևմտյան մասնագետների աշխատությունները դուրս մնացին խորհրդային (այդ թվում նաև խորհրդահայ) գիտնականների գիտական գործիքակազմից: Խոսքը մասնավորապես է նեոէվոլյուցիոնիստական հայեցակարգերի մասին է, որոնք մեծ տարածում էին ստացել արևմտյան գիտության մեջ 1950-1970-ական թթ.:

Սույն աշխատության հիմնական նպատակը հայաստանյան գիտական շրջանառության մեջ պոլիտոգենեզի նեոէվոլյուցիոնիստական գիտական ձեռքբերումների ներբերումն է:

Մանրամասն ներկայացված են Լեսլի Ուայթի, Ջուլիան Սթյուարդի, Մորթըն Ֆրիդի, Էլման Սերվիսի, Մարշալ Սալինզի և Ռոբերտ Կարնեյրոյի աշխատությունները, որոնց մեծ մասը թարգմանվել է բնագրից:

Աշխատության նպատակներից է պետականաստեղծ գործընթացների դասական էվոլյուցիոնիստական տեսությունների համակարգված ներկայացումը, ներառյալ Կ. Վիտֆոգելի տեսության, և այդ թեմայով խորհրդահայ հեղինակների աշխատությունների համակարգումը:

Շնորհակալություն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի վարիչ Արամ Քոսյանին իր մեծ համբերության, մանրակրկիտ խմբագրման և արժեքավոր խորհուրդների համար, ինչպես նաև շնորհակալություն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ղեկավարությանը և Հին Արևելքի բաժնի աշխատակիցներին, հատկապես՝ Ռ. Մանասերյանին:

Շնորհակալություն եմ հայտնում Տաթև Հովհաննիսյանին և Զարուհի Թավադյանին իրենց անուրանալի օգնության համար:

Շնորհակալություն եմ հայտնում Ալին Հովսեփյանին (Ֆրանսիա) և Սաթենիկ Մարտիրոսյանին (Գերմանիա) արևմտյան գիտական աշխատություններն ինձ հասանելի դարձնելու համար:

# ԳԼՈՒԽ I

# ՊՈԼԻՏՈԳԵՆԵԶԻ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ

Պետությունը սոցիալական կազմակերպման առանձնահատուկ ձև է: Նրա ձևավորումը մորֆոգենետիկ գործընթաց է[1], որի արդյունքում մարդկային հանրույթը թևակոխեց սոցիալական էվոլյուցիայի հիմնովին նոր փուլ:

Պետության հիմնախնդիրներով հասարակական միտքը զբաղվել է վաղնջագույն շրջանից սկսած, և ժամանակի հետ պետության ձևավորման պատճառների և առանձնահատկությունների ուսումնասիրությունները հետազոտական վիթխարի հենք են ստեղծել՝ արդյունքում վերածվելով ընդարձակ մարդաբանական նախագծի (anthropological project)[2]:

## *Պոլիտոգենեզի տեսությունների համառոտ ակնարկ*

### *Պոլիտոգենեզ*

Պոլիտոգենեզ (պետականաստեղծ գործընթացներ կամ պոտեստար[3]-քաղաքական ազգագրություն) եզրույթն

---

[1]**Штомпка** 1996: 37.

[2]**Abélès** 2005: 794.

[3]«Պոտեստար» եզրույթի կիրառությունը պայմանավորված էր խորհրդային պատմագիտության այն դրույթով, որ քաղաքական հարաբերությունները կարող են ի հայտ գալ միայն մեկ դասակարգի կողմից մյուսին շահագործման ենթարկելու պայմաններում: Այդ իսկ պատճառով նախադասակարգային շրջանի իշխանության և կառավարման հետ կապված հարաբերությունները բնորոշվում էին որպես պոտեստար: Տե՛ս **Бочаров** 2001: 46.

ինքնին XX դարի ծնունդ է. այն առաջարկել և գիտական շրջանառության մեջ է մտցրել խորհրդային հնագետ Լ.Կուբելը: Պոլիտոգենեզի ուսումնասիրության կենտրոնում նախադասակարգային և վաղդասակարգային հասարակական համակարգերում իշխանության և իշխելու ավանդական հարաբերություններն են, նրանց հետ կապ ունեցող ինստիտուտների և համակարգերի ձևավորումը, գործառույթները, խնդիրները, նրանց համեմատական ուսումնասիրությունը և տիպաբանությունը[4]:

Հետխորհրդային տարիներին կարևորվեց այն դրույթը, որ էվոլյուցիոն զարգացման արդյունքում կարող են ձևավորվել պոլիտիաներ, որոնք դեռևս պետություն չեն հանդիսանում: Ռուսաստանյան գիտնականներ Ա.Կորոտաևը, Ն.Կրադինը, Վ.Լինշան, Լ.Գրինինը և այլոք լրամշակեցին Լ.Կուբելի եզրույթը, և արդի ընկալմամբ պոլիտոգենեզը դա ոչ միայն պետականության, այլև ցանկացած տիպի բարդ քաղաքական կազմակերպության[5] (ցեղապետություն [chiefdom], քոչվորական քաղաքակրթություններին բնորոշ սոցիոքաղաքական միավորում և այլն) ձևավորումն է, արխաիկ համայնքի էվոլյուցիայի մասնավոր դեպքերից[6] մեկը:

---

[4]**Куббель** 1988: 3.

[5]*«Պետությունը հետնախնադարյան հասարակության քաղաքական կազմակերպման միակ ձևը չէ. նախնադարը գործ ունի ոչ թե պետականության բացակայության, այլ քաղաքական և սոցիալական կազմակերպման..., մշակույթի տեղային համակարգի հետ: Նախնադարի հաղթահարումը սոցիալ-քաղաքական կազմակերպման ոլորտում վերհամայնքային կառուցվածքի և ինստիտուտների ի հայտ գալն է»,* տե՛ս **Бондаренко** 1999: 128.

[6]**Крестовская** 2012: 102.

Արևմտյան գիտության մեջ որպես պոլիտոգենեզի համարժեք հանդես է գալիս քաղաքական մարդաբանությունը (political anthropology)՝ դիսցիպլին, որը ձևավորվել է որպես կիրառական գիտություն XIX դարի վերջերին և XX դարի սկզբին գաղութներում իրականացվող ուղղակի կամ անուղղակի կառավարման պայմաններում[7]: Քաղաքական այդ գործընթացները նպաստեցին գիտական նոր ուղղությունների ձևավորմանը (Բ.Մալինովսկիի, Ա.Ռեդկլիֆ-Բրաունի, Է.Էվանս-Պրիչարդի և այլոց աշխատություններով): Ֆրանսիացի գիտնական Ժ.Բալանդյեն քաղաքական մարդաբանությունը համարում է տարաբնույթ սոցիալական ինստիտուտների բացահայտման և ուսումնասիրման գործիք[8], որը «*դիտարկում է մարդուն որպես homo politicus և ուսումնասիրում պատմական և աշխարհագրական տեսակետից տարբերվող պետական կազմակերպությունների ընդհանուր հատկանիշները, ապա նկարագրում և վերլուծում է պարզունակ կամ արխաիկ համարվող հասարակություններին բնորոշ քաղաքական համակարգերը (կառուցվածքը, գործընթացներն ու պատկերացումները)*[9]»:

***Քաղաքակրթություն հասկացությունը***

Պատմագիտական գրականության մեջ հաճախ որպես պետականության համարժեք հանդես է գալիս ***«քաղաքակրթություն»*** եզրույթը: Եզրույթն ինքնին արևմտաեվրոպական ապակրոնականացված մարդակենտրոն աշխար-

---

[7]**Куббель** 1988: 8-11, Бочаров 2001: 39.
[8]**Баландье** 2001: 15.
[9]**Там же**: 13.

հատեսության արգասիք է[10]: Այն մտավ արևմտյան գիտական շրջանառության մեջ *«մշակույթ»* եզրույթից հետո, կրոնական աշխարհատեսության ազդեցության թուլացման պայմաններում[11]: Հասարակագիտական հայացքների զարգացմանը զուգընթաց եզրույթը ձեռք բերեց հետևյալ իմաստները:

Նախ, *«քաղաքակրթությունը»* դիտարկվում է որպես առանձնահատուկ համակարգ, որն ունի գոյության ժամանակագրական և տարածական չափանիշներ, վերելքի և վայրեջքի փուլեր (առաջարկվել է նաև «քաղաքակրթական ճոճանակ» ձևակերպումը[12]), լայն առումով՝ որոշակի մարդկային խմբի կոլեկտիվ՝ նյութական, մտավոր, քաղաքական և սոցիալական կյանքը: Եզրույթի այս իմաստն է կազմում քաղաքակրթական հայեցակարգի բովանդակությունը, և այն ընկած է Օ. Շպենգլերի[13], Ա.Թոյնբիի[14], և այլոց «քաղա-

---

[10]**Хачатурян** 2010: 334.

[11]**Ерасов** 1998: 9.

[12]Եզրույթի հեղինակն է Ա.Ախիեզերը:

[13] Շպենգլերի յուրօրինակ հայեցակարգը, որի հիմքում՝ *«Բնությունն անհրաժեշտ է ուսումնասիրել գիտականորեն, իսկ պատմության մասին պետք է բանաստեղծություններ գրել»* (**Шпенглер** 1998: 252) մոտեցումն է, պահանջում է ավելի շատ փիլիսոփայական, քան պատմագիտական վերլուծություն, ինչը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից: Սահմանափակվենք քաղաքակրթությունների շպենգլերյան բնորոշման և քաղաքակրթությունների շարքի թվարկումով. նախ, *«քաղաքակրթությունը՝ ամենաբարձր և ամենից արհեստական վիճակն է, որին ունակ է հասնելու մարդկանց ամենից բարձր տեսակը»* (**Шпенглер** 1998: 163-164), իսկ քաղաքակրթություններն, ըստ Շպենգլերի, ութն են՝ անտիկ, արևմտյան, հնդկական, բաբելոնյան, չինական, եգիպտական, արաբական և մեքսիկական քաղաքակրթությունները (**Шпенглер** 1998: 147):

[14]Թոյնբիի «Պատմության ուսումնասիրությունը» (A Study of History) աշխատության մեջ քաղաքակրթության առաջացման գործոնները բաժանված

քաղաքակրթությունների» տեսությունների հիմքում): Ավելի ուշ, XX դարի բարդ քաղաքական վերաձևումների արդյունքում

---

են երկու խմբերի՝ դրական և բացասական: Բացասական է, ըստ Թոյնբիի, ավանդույթյամբ արտահայտված իներցիայի ուժը, որը հասարակությունները զրկում է դինամիկայից՝ մի վիճակից մյուսին անցնելու հնարավորությունից (տե՛ս **Тойнби** 2010: 100-101). Դրական գործոնների թվին են պատկանում ռասայական և միջավայրի գործոնները: Թոյնբին բացառում է քաղաքակրթության ռասայական պայմանավորվածությունը՝ համարելով, որ քաղաքակրթության առաջացման համար անհրաժեշտ են մեկից ավելի ռասաների ստեղծագործական ճիգեր (նույնը, էջ 107), միջավայրի գործոնն էլ դիտարկելիս եզրակացնում է, որ ցանկացած կլիմայական և տեղագրական պայմաններ կարող են քաղաքակրթության առաջացման հարմար միջավայր դառնալ (նույնը՝ էջ 113): Որպես առանցքային գործոն Թոյնբին առաջարկում է դիտարկել *«մարտահրավեր-պատասխանը»* ("Challenge and Response"). *«հասարակությունն իր կյանքի ընթացքում բախվում է մի շարք խնդիրների հետ, որոնք նա լուծում է իր համար ընդունելի կերպով: Յուրաքանչյուր նման խնդիր պատմության մարտահրավերն է»* (նույնը, էջ 30): Մարտահրավերին պատասխանելով՝ հասարակությունը լուծում է իր առջև ծառացած խնդիրը, ինչի շնորհիվ էլ անցնում է առավել բարձր և համակարգի բարդության տեսակետից առավել կատարյալ վիճակի: Մարտահրավերների բացակայությունը աճի և զարգացման խթանների բացակայությունն է (նույնը, էջ 126): Մարտահրավերները Թոյնբին խմբավորել է 5 խմբերում՝ դժվարին կլիմայական պայմաններով երկրների (The Stimulus of Hard Countries), նոր հողերի (The Stimulus of New Ground), հարվածների (Stimulus of blows), ճնշման (The Stimulus of Pressures) և սահմանափակման/պատժի (Stimulus of penalization) մարտահրավերներ (տե՛ս էջ 178)՝ շարունակելով «մարտահրավեր-պատասխան» բանաձևի վերհանումը տարբեր քաղաքակրթությունների օրինակով: Նշենք, որ Թոյնբիի աշխատանքը թե՛ տարածական, թե՛ ժամանակագրական առումներով խիստ լայնածավալ է և լեցուն պատմափիլիսոփայական և աստվածաբանական շեշտադրումներով: Նրա համար պատմությունն, ըստ էության, մարդկային ստեղծագործական ուժի արտահայտությունն է տարաբնույթ քաղաքակրթությունների տեսքով, որպես նախախնամության ընձեռած հնարավորությունների իրագործում: Թոյնբիի աշխատանքի այս առանձնահատկություններին Լյուսյեն Ֆևրը տվել է դիպուկ մի բնորոշում՝ *«քաղաքակրթություններով աճպարարություն»*, և Թոյնբիի տեսության առանցքը՝ «մարտահրավեր-պատասխանը» դիտարկել է որպես փիլիսոփայական, բայց ոչ պատմական կատեգորիա (**Февр** 1991a: 81, 90):

արևմտյան քաղաքակրթական համակարգին զուգահեռ արժևորվեցին և աստիճանաբար առաջ մղվեցին ոչ արևմտյան (հնդկական, ճապոնական, չինական և այլն) քաղաքակրթությունները, ինչը լրացուցիչ խթան հանդիսացավ վերոհիշյալ հայեցակարգի զարգացման համար: Սակայն այս հայեցակարգի դիտարկումը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից:

Մեզ հետաքրքրող նշանակությամբ[15] *«քաղաքակրթություն»* եզրույթը հանդես է գալիս պատմագիտական գրականության մեջ նոր շրջանում, որպես որոշակի չափանիշներով բնութագրվող հասարակական զարգացման մակարդակի համարժեք: Այս մոտեցումը տվեց ***«քաղաքակրթություն – պետականություն»*** իմաստային հանգուցակապը, մանավանդ նախորդող թերի զարգացած փուլերի հետ համեմատության համատեքստում: Ձևավորվեց ***«վայրենություն, բարբարոսություն, քաղաքակրթություն»*** սխեման, որը տեղ գտավ Ա.Տյուրգոյի[16], Ա.Ֆերգյուսոնի, Ու.Ռոբերտսոնի[17], այնուհետև՝ Լյուիս Մորգանի[18] աշխատություններում, ***քաղաքակրթության փաստ չափորոշիչներ*** առաջարկեց Գորդոն Չայլդը[19], նույն համատեքստում են օգտա-

[15]«Քաղաքակրթություն» եզրույթն ունի ևս մեկ իմաստային հարթություն. բարոյական և նյութական առումով ավելի վեհ, ավելի բարձր մակարդակի և հիմնականում եվրոպացիների կողմից տարածվող մշակույթ: Եզրույթի պատմությունը տե՛ս **Февр** 1991b: 239-281:

[16]**Илюшечкин** 1996: 26.

[17]**Аверкиева** 1979: 16-17.

[18]**Морган** 1935.

[19]**Childe** 1950: 9-16.

գործում *«քաղաքակրթություն»* եզրույթը Էդուարդ Թեյլորը[20], Ռոբերտ Ադամսը[21], Էլման Սերվիսը[22], Քենթ Ֆլանններին[23] և այլոք:

Ըստ այդմ էլ ստադիալ զարգացման համատեքստում կիրառվող *«քաղաքակրթություն»* եզրույթն արդի գիտական և փիլիսոփայական գրականության մեջ ունի հետևյալ բովանդակությունը. քաղաքակրթությունը ներքուստ ամբողջական և յուրահատուկ սոցիոմշակութային կազմավորում[24] է, որն հաջորդել է նախնադարին, այլ կերպ ասած՝ վաղ պետականության կամ կոմպլեքս հասարակության համարժեքն է[25]:

## *Պոլիփոգենեզի հայեցակարգերը մինչև XIX դարը*

Պետության ձևավորման հայեցակարգերը սկզբնավորվում են առաջին պետականությունների ձևավորմանը զուգընթաց՝ հինարևելյան պետությունների ստատիկ, իսկ հետագայում՝ հունական դինամիկ զարգացող պոլիսային աշխարհատեսության ազդեցության տակ: Այս հայեցակարգերի հիմքում պետության աստվածային բնույթի մասին դրույթն է: Եգիպտոսում այն արտահայտվել է *մա'ապ*[26]-ի (ma'at) հայեցակարգով՝ երկրի վրա տիրող բացարձակ խա-

[20]**Tailor** 1865; **Tailor** 1867.
[21]**Adams** 1966.
[22]**Service** 1975.
[23]**Flannery** 1972.
[24]**Павленко** 1998: 156.
[25]**Крадин** 2006: 191.
[26]**Assman** 2006:28. **Kákosy** 1964: 206. **Ассман** 1999: 19.

ղաղության և բնության կատարյալ ներդաշնակության գաղափարով: Պետականությունը, տվյալ դեպքում փարավոնի իշխանությունը, ընկալվում էր որպես *մա՛աթի* բաղկացուցիչ մաս, իսկ արքայությունը (nswyt)՝ մարդկանց համար ստեղծված աշխարհի անքակտելի մաս, որը դարերով փոխանցվում է կառավարչից կառավարչի և դինաստիայից մյուս դինաստիայի աստծո կամքով, այն ծառայություն է (iAwt), որը դրվում է արքայությունը կրողի վրա[27]:

Ժամանակաշրջանի տեսակետից զուգահեռ գաղափար մշակվել է նաև Հնդկաստանում, դա *ռիտան* էր՝ ունիվերսալ տիեզերական օրենքը, հին հնդկական առասպելաստեղծության առանցքային գաղափարներից մեկը: Ռիտան պահպանում է տիեզերքի, հասարակության, մարդու գոյության հիմնական պայմանները[28]:

Հին Միջագետքում տարածված էր *«արքայությունը իջել է երկնքից»*[29] հայեցակարգը: Այս արտահայտությամբ է սկսվում Շումերի արքայական ցուցակը, որը կազմվել է Ուրի III հարստության շրջանում՝ մ.թ.ա. XXII-XXI դդ., ենթադրաբար Ուտուխեգալի կառավարման ժամանակ[30] և արքայության, իմա՝ պետության, երկնային բնույթը կարող էր կապ-

---

[27]**Ладынин** 2005: 68.

[28]**Топоров** 1988: 384.

[29] [nam]-lugal an-ta ed3-de3-a-ba /eridug\ki nam-lugal-la Շումերական արքայացանկի առաջին տողերն են, որոնք թարգմանվում են հետևյալ կերպ. *«Երբ արքայությունը իջավ երկնքից, Էրեդուն դարձավ արքայականության վայր»*. Տե՛ս **Jakobsen** 1939: 58.

[30]**Ibid**: 138, 160.

ված լինել Ուրի III հարստության կառավարիչների իշխանության իրավունքի ընդգծման հետ[31]:

Անտիկ փիլիսոփայական միտքը դեռևս մ.թ.ա. V-II դդ. նախանշեց պոլիտոգենեզի ապագա մի շարք տեսությունների ուրվագծերը: Այսպես, պետության[32] առաջացման սոցիալ-տնտեսական գործոնների վերլուծությունը գտնում ենք Պլատոնի մոտ (*«կարիքներն են ստեղծում պետությունը»*[33]), քանակական փուլային աճի (*ընտանիք – գյուղ - պոլիս)* հայեցակարգն են առաջարկում Արիստոտելը[34], Պրոտագորասը, էպիկուրեսը[35]: Ստոիկները և էպիկուրականները համարում էին, որ սկզբնապես մարդիկ ազատ էին և քաղաքական ու տնտեսական տեսակետից հավասար (ընդ որում ստոիկների համար այդ սկզբնական վիճակը բնական համակեցությունն էր, էպիկուրականների համար՝ *«յուրաքանչյուրի պատերազմը բոլորի դեմ»*), և որ միայն աստիճանական տարբերակման արդյունքում ի հայտ եկավ պետությունն իր դասակարգերով: Կիկերոնը միավորում է այդ երկու տեսակետները. պետության նախապատճառ նա համարում

[31]**Дьяконов** 1983: 163.

[32] Անտիկ հասարակագիտական մտքի մասին խոսելիս պետություն հասկացությունը պայմանականորեն հավասարեցվում է անտիկ ***ἡ πολις, civitas*** եզրույթներին, տե՛ս **Утченко** 1977:117, սակայն պետք է նշել, որ պատմագիտության մեջ կան տեսակետներ, ըստ որոնց անտիկ պոլիսը չի կարող համարվել պետություն: Խնդրի քննարկումն ու գրականության ցանկը տե՛ս **Медведев** 2006.

[33]*«Շատ բաների կարիք զգալով՝ մարդիկ հավաքվում են միասին, որպեսզի ապրեն միասին և միմյանց օգնեն: Նման համատեղ բնակությունը մենք անվանում ենք պետություն»*, տե՛ս **Платон** 2007: 157 (Государство, Книга II, 369).

[34]**Аристотель** 1983: 378.

[35]**Илюшечкин** 1996: 15.

է մարդկանց՝ միասին ապրելու բնական մղումը, սակայն պետական հաստատությունների ձևավորումն անհնար կլիներ առանց *«իրավունքի հարցերում որոշակի համաձայնության»* (iuris consensus)[36]:

Առանձնահատուկ հայեցակարգով ներկայանում է պետականության[37] խնդիրը Հին Կտակարանում: *«Հին Կտակարանի աշխարհը «օլամ» է՝ ժամանակային կատարման (свершение) հոսք, որն իր մեջ է ներառում ամեն ինչ, իմա՝ աշխարհը ներկայանում է որպես պատմություն»*[38]: Հին Կտակարանը պատում է «սրբազան պատմության» մասին, որը ծավալվում է մարդ-աստված ուղղահայաց կապի շուրջ: Երկիրը, պատմությունը, ժամանակը, տարածությունը, որոշակի փուլում՝ պետությունը, դրանք սուբստանցիաներ են, որոնք ստեղծվել են ոչ թե տիեզերական գործընթացի ծավալման արդյունքում, այլ որպես ետնախորք, հիմք արարչագործության իմաստային նշանակետի՝ մարդու համար: Հին Կտակարանի կենտրոնում Եհովայի ուխտն է մարդու հետ՝ b<sup>e</sup>rith-ը, որին ծառայեցվում են մնացած բոլոր թեմաներն ու սյուժեները, ամենակարևորներից մինչև ծայրամասային (պերիֆերային)[39]:

Ըստ էության, հինկտակարանյան այս հարացույցը շարունակությունն էր հինարևելյան՝ պետականության աստ-

---

[36]**Утченко** 1977: 139.

[37]Արքա պահանջելու և ստանալու սյուժեն հինկտակարանյան մատուցմամբ ինքնին շեղում է ի վերուստ նախանշված ուղուց (Առաջին Թագավորաց 8:5. *«Արդ, մեզ վրայ մի թագաւոր դի՛ր, որ մեզ դատաւորութիւն անի, ինչպէս բոլոր ազգերի մօտ է»*):

[38]**Аверинцев** 1977: 88.

[39]**МНМ** I:588 (Иудаистическая мифология, 581-591).

վածային նախախնամության մի մաս կազմելու գաղափարի, որին տվյալ դեպքում ավելանում է պատմության հստակ միագիծ լինելու դրույթը:

Հաջորդ փուլում այս գաղափարները զուգորդվում են անտիկ աշխարհատեսական ձեռքբերումների հետ, ինչի արդյունքում ստեղծվում է պետականության քրիստոնեական ընկալումը: Այն իր վերջնական ձևավորումը կստանա Օգոստինոս Երանելու[40] *«De Civitate Dei contra paganos»* աշխատության մեջ: Ըստ Օգոստինոսի՝ պետականության առաջացումը տեղի է ունենում հասարակության զարգացման երրորդ փուլում՝ ընտանիքի և քաղաքի կազմավորումից հետո[41] (ըստ էության կրկնվում է Արիստոտելի սխեման), երկրային պետության գերագույն նպատակը քաղաքացիների համատեղ կարգավորումն ու կազմակերպումն է՝ *Concordia civium*-ը[42] (եկեղեցուն ծառայելուց բացի) և արդարության

[40]Ավելի ուշ՝ XIII դարում, Թովմա Աքվինացին փորձեց վերաիմաստավորել արիստոտելյան «Պոլիտիկան» քրիստոնեական աստվածաբանության ծիրում, մանավանդ պետության ծագման արիստոտելյան դրույթը: Աքվինացին գտնում է, որ մարդն, ի սկզբանե լինելով հասարակական և քաղաքական էակ և ի վիճակի չլինելով միայնակ բավարարել սեփական նյութական և հոգևոր կարիքները, ձգտում է միավորվել այլ մարդկանց հետ և ստեղծել պետություն: Սա է քաղաքական կազմակերպությունների առաջացման պատճառը: Թովմա Աքվինացին այս բանաձևին նոր բովանդակություն է հաղորդում՝ պետությանը վերագրելով աստվածային ծագում: Սակայն ինչպես և բնությունը, պետությունն ի սկզբանե որոշ ինքնուրույնություն և ստեղծագործական հատկություններ ունի: Այստեղ Աքվինացու մոտեցումը տարբերվում է Օգոստինոսի մոտեցումից. վերջինիս համար բնության և հասարակության ցանկացած երևույթ աստվածային նախախնամության անմիջական արդյունք էր: Տե՛ս **Срединская** 1990: 218-219.

[41]О граде божьем XIX: 7, online - https://www.civisbook.ru/files/File/Avgustin_18-22.pdf

[42]О граде Божьем, IV:4, **Августин 1998**: 150, **Епифанова** 2012: 143

(*justitia*) հաստատումը[43]: Պատմությունը ոչ այլ ինչ է, քան աստվածային պլան: Պատմության գաղափարը Օգոստինոսի մոտ վերածվում է պատմության աստվածաբանության, սակայն հեռավոր պատմական հեռանկարում դա նշանակում էր, որ Օգոստինոսի աշխատությամբ սկիզբ է առնում պատմության փիլիսոփայությունը[44].

Ուրույն հայեցակարգ է առաջարկել միջնադարյան արաբ մտածող Իբն Խալդունը[45]: Նա աշխարհը դիտարկում էր որպես միասնական երևույթ, որտեղ ամեն ինչը փոխկապակցված է և փոխպայմանավորված, տարբեր ազգերի բնավորությունների ու ավանդույթների տարբերությունը նա բացատրում է բնական, մանավանդ կլիմայական պայմանների տարբերությամբ, իսկ սոցիալական երևույթների հիմքը համարում է տնտեսական գործոնները[46]: Նրա ուսմունքի համաձայն, ցանկացած հասարակություն *«զսպող սկզբունքի»* կարիք ունի. այն հակազդում է ագրեսիային և միմյանց ոչնչացնելու մարդկանց *«բնական»* ձգտմանը, և նման հարկադրական բնույթ ունեցող իշխանությունը քաղաքակրթության մակարդակի ցուցիչն է[47]: Քաղաքական իշխանությունը փուլային բնույթ ունի, ըստ նրա՝ այդ փուլերը (ṭaūr) հինգն են, դրանց ընթացքում է տեղի ունենում քաղաքական իշխա-

---

[43] О граде Божьем, IV:4, **Августин 1998**: 150.

[44]**Барг** 1987: 83.

[45]XIV դարի արաբ մուսուլման պատմաբան, փիլիսոփա, պետական և հասարակական գործիչ, պատմության գիտական փիլիսոփայության հիմնադիրներից մեկը:

[46]**Илюшечкин** 1996: 16-17.

[47]**Service** 1975: 23. **Сюкияйнен** 2000: 144.

նության (daūla) հաստատումը, զարգացումն ու կործանումը[48]:

Վերածննդից սկսած՝ պոլիտոգենեզի դրույթները դուրս եկան աստվածային նախախնամության շրջանակներից և ընթացան ռացիոնալացման ուղիով՝ գիտական շրջանառության մեջ վերադարձնելով անտիկ հասարակական մտքի ձեռքբերումները, որոնք ավարտուն տեսք ստացան նոր շրջանի սոցիալ-փիլիսոփայական համակարգերում: Այսպես, *հասարակական պայմանագրի* հայեցակարգը զարգացրեցին Թ.Հոբսը (1651)[49], Ջ.Լոկը (1686-1690)[50] և Ժ.Ռուսսոն (1762)[51], *«անհրաժեշտության»* հայեցակարգը՝ Ա.Սեն-Սիմոնը և Կ.Մարքսը, սոցիալական զարգացման և առաջադիմության ուրվագծերը փորձեցին տալ Իսահակ Իզելինը, XVIII դարում՝ Ա.Ֆերգյուսոնը, Ա. Սմիթը, Ա. Բարնավը[52], Ն.Կոնդորսեն[53] և ուրիշները:

---

[48]**Բազինյան** 2015: 250-251:

[49]*«Համաձայնությունը մշտական և երկարատև դարձնելու համար անհրաժեշտ է ընդհանուր իշխանություն..., որը կպաշտպանի մարդկանց օտարների հարձակումից և միմյանց պատճառվող անարդարություններից... դրան հնարավոր է հասնել միայն իշխանության կենտրոնացումով մեկ անձի կամ ժողովի մեջ, որը կարողանա քաղաքացիների կամքը միավորել մեկ կամքի մեջ... Դա է պետությունը* (Թ. Հոբսի մոտ՝ Commonwealth)», **Гоббс** 2001: 118-119.

[50]*«Սկիզբը ամեն քաղաքական հասարակության և այդ հասարակությունը փաստացի կազմողը մեծամասնության համաձայնությունն է միավորվել և կազմել նման հասարակություն..., և միայն դա է օրինական կառավարման սկիզբը»*, **Локк** 2020: 320-321.

[51]*«Մարդկանց մեջ ցանկացած օրինական իշխանության հիմք կարող է լինել միայն համաձայնության գալը»*, **Руссо** 1998: 201, 207.

[52] Տե՛ս **Илюшечкин** 1996: 32-43.

[53] Ըստ Ն. Կոնդորսեի, մարդը կենդանուց տարբերվում է մշակույթով, ինչը լեզվի, բարոյականության և կայուն սոցիալական կարգի հանրագումարն

Նոր շրջանի գիտության զարգացումն ու ձեռքբերումները հիմնովին ձևափոխեցին հասարակության աշխարհայացքը: XVII դարի փիլիսոփաները առաջին պլան մղեցին բնական օրենքները, և, բնության ու մարդու միասնականությունից ելնելով, փորձեցին ստեղծել մաթեմատիկայի, աստղագիտության և մեխանիկայի վրա հենվող ուսմունք հասարակության մասին, այլ կերպ ասած՝ սոցիալական ֆիզիկա (physique sociale), ինչ թեև չիրականացած, բայց լայնախոհ նախաձեռնություն էր[54]:

Իր հերթին XIX դարը նշանավորվեց փիլիսոփայության ձեռքբերումներով, մանավանդ մեծ ազդեցություն ունեցավ Գ. Հեգելի ուսմունքը *«զարգացման սկզբունքի համընդհանուր լինելու (քանակական փոփոխությունների անցում որակականի) մասին և զարգացման համընդհանուր մեխանիզմի ու աղբյուրի՝ հակասությունների ծագման, պայքարի և հաղթահարման մասին»*[55]: Շեշտակի վերելք ապրեցին բնագիտությունն ու տեխնիկան, մասնավորապես առարկաների ձևաբանական և ֆունկցիոնալ բնութագրումների և նրանց փախկապակցվածության խնդիրների վերհանումը[56]: Ժ.Լամարկից սկսած՝ կենսաբանության մեջ հաստատվեց բոլոր օրգանիզմների՝ պարզագույն նախնական ձևերից առաջա-

---

է: Նա պատմական 10 փուլեր է առանձնացրել, որոնցից առաջին երեքը՝ նախնադարյան, նախապատմական (ընդ որում 3-րդ փուլն աչքի է ընկնում նստակեցությամբ, սոցիալական կառուցվածքի բարդացմամբ, պատերազմներով, այս փուլը կարելի է համարել պետականության առաջացման փուլ) մնացած 7-ը՝ պատմական: Տե՛ս **Никишенков** 2008: 37-38.

[54]**Спекторский** 2006: 8.

[55]**Юдин** 1975: 410.

[56]**Чешев**1982: 357.

ցած լինելու մասին հայեցակարգը, որն իր ազդեցությունը թողեց նաև հասարակական գիտությունների վրա՝ հանգեցնելով բնության և հասարակության մեջ միագիծ և անդառնալի փոփոխությունների մասին պատկերացումներին[57]: Կարևոր դեր խաղացին հասարակության՝ զարգացող օրգանիզմի հետ համանմանությունը, *«ցածրագույնից դեպի բարձրագույն»* դասակարգումը, գիտական շրջանառություն մտած բջջի հասկացությունը *(այն թույլ տվեց դիտարկել հասարակական կառույցը որպես ավելի մանր բազմաթիվ մասնիկների հանրագումար[58])*, պոզիտիվիստական մեթոդի *(բնագիտական մոտեցում, որը ենթադրում է փաստերի սահմանում դրանց անմիջական զգայական ընկալմամբ և օրենքների մշակում ինդուկտիվ մտահանգմամբ փաստերի ընդհանրացման միջոցով[59])* տարածվելը: Բնագիտական հետազոտական մեթոդները ներբերվեցին հասարակագիտական ուսումնասիրությունների ոլորտ: Ձևավորվեց հրապարակում հասարակական զարգացման հստակ տեսություններ ունենալու, պատմական ժամանակի կառուցվածքը վեր հանելու և հասարակական զարգացման հիմնարար պատճառները գտնելու պահանջարկը:

[57]**Юдин** 1975: 409.
[58]**Курсков** 2011: 240.
[59]**Коломийцев**2004: 39; **Савельева** 2007: 73

### *Էվոլյուցիոնիզմ*

*Էվոլյուցիոնիզմի ձևավորումը*

Զարգացման հայեցակարգի ծավալման արդյունքում ձևավորվեց էվոլյուցիոնիզմը, տեսություն, որն ամեն ինչը դիտարկում է էվոլյուցիայի (լատ. evolutio - ծավալում)՝ աստիճանական էքստենսիվ կամ ինտենսիվ զարգացման, իմա՝ անդառնալի և ուղղորդված փոփոխության, մեկ վիճակից մյուսին անցման, արդեն գոյություն ունեցող որակապես նորի կամ նրա առաջացման տեսակետից: Նման աշխարհայացքի տարրեր նկատելի են դեռ անտիկ փիլիսոփայության շրջանից, սակայն էվոլյուցիոնիզմն իր ժամանակակից ընկալմամբ բնագիտական և հումանիտար գիտակցության մեջ ներթափանցել է XVIII դարում շնորհիվ Ժ.Բյուֆոնի, Ի.Կանտի, Յ.Հերդերի աշխատությունների: Գ.Հեգելի զարգացման համընդհանուր ձևերի մասին ուսմունքը, Հ.Սպենսերի աշխատությունները և Չ.Դարվինի տեսակների առաջացման տեսությունն էլ ավելի նպաստեցին նրան, որ էվոլյուցիոնիզմը դառնա XIX դարի գիտական հայացքների պարտադիր բաղադրիչը[60] և եվրոպական մշակույթի աշխարհատեսական հիմքը:

Իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ Լուսավորության դարաշրջանի առաջընթացի գաղափարները անմիջական կապ ունեին քրիստոնեական գոյաբանության այն ուղղության հետ, որը մարդկության փրկությունը տեսնում էր կատարելագործման ուղու մեջ[61]: Առաջադիմության և հետա-

---

[60]**Субботин** 2010: 408.

[61]**Орлова** 2004: 277

գայում ֆորմացիոն մոտեցման կողմնակիցները փոխառեցին քրիստոնեական գոյաբանության այն կարևոր դրույթները, ըստ որոնց պատմությունը համապարփակ է և ունի որոշակի օրինաչափություններ, պատմությունը հնարավոր է բաժանել փուլերի, բացի այդ պատմությունն ունի նախախնամականություն (providentialism) և, հետևաբար՝ որոշակի ուղղվածություն և այլն[62]:

Պատմագիտության մեջ XIX դարի կեսերից գերակա դարձավ պատմականության սկզբունքը, ըստ որի և՛ անցյալի, և՛ ժամանակակից ինստիտուտներն ու մշակույթը զարգացել են աստիճանաբար, և յուրաքանչյուր պատմական փուլ պատմական գործընթացի որոշակի և անհրաժեշտ օղակ է[63]:

Կարևորվեց նաև առաջադիմության սկզբունքը. բարձրագույնը սկսեց զուգորդվել առաջադիմության գաղափարի հետ՝ սկիզբ դնելով ***ստադիալ***[64] *(արդեն մարքսիստական հայեցակարգում՝ ֆորմացիոն)* ***զարգացման տեսությանը***,

---

[62]**Пивоваров** 2004: 241-242.

[63]**Савельева** 2007: 72-73.

[64] Զուգահեռաբար ստադիալ զարգացման հայեցակարգը իր տեղը գտավ նաև հնագիտության մեջ: Առաջին պլան մղվեց համակարգումն ըստ աշխատանքային գործիքների նյութի: Այսպես, առաջինը երեք դարերի (քար, բրոնզ, երկաթ) համակարգն առաջարկեց Կոպենհագենի Ազգային թանգարանի տնօրեն Ք.Տոմսենը, ըստ էության դա հնագիտության առաջին հիմնարար հայեցակարգն էր (տե՛ս **Бочкарев** 2009: 87): Այն շարունակեց Ջոն Լյոբոկը, որը 1865թ. նախապատմական շրջանը բաժանեց 4 խոշոր փուլերի (պալեոլիթ, նեոլիթ, բրոնզ, երկաթ) (**Леббок** 2011): Ժամանակի հետ դասակարգման մեջ ավելացան նոր ենթախմբեր (մեզոլիթ, էնեոլիթ, վաղ երկաթ և այլն): Ստադիալ զարգացման այս հայեցակարգերը դուրս են մեր ուսումնասիրության շրջանակներից:

որն իր առաջին ձևակերպումները ստացավ Ա.Սեն-Սիմոնի, Օ.Կոնտի, Է.Դյուրկհեյմի և այլոց տեսություններում:

***Ա.Սեն-Սիմոնը*** (1760-1825) առանձնացրեց մարդու մտավոր և արտադրողական ունակությունների աճի չորս փուլեր՝ *կռապաշտություն* (նախնադարյան հասարակարգ), *պոլիտեիզմ* (անտիկ ստրկատիրական հասարակարգ), *մոնոթեիզմ* (ավատատիրական հասարակարգ) և *ֆիզիցիզմ* («արդյունաբերական համակարգ»), իսկ հասարակական զարգացման հիմքում դրեց հասարակության կայուն («կազմակերպչական», «օրգանական») կամ ստեղծագործական և անկայուն («կրիտիկական») կամ կործանարար փուլերի հերթագայությունը[65]: Պատմական զարգացումն, ըստ Ա.Սեն-Սիմոնի, օբյեկտիվ պատճառա-հետևանքային գործընթաց է, որի ընթացքը որոշվում է գիտական և քաղաքական հեղափոխությունների մշտական հերթագայությամբ[66], և հենց Ա.Սեն-Սիմոնին ենք մենք պարտական պատմությունը համայնապատկերային դարձնելու համար[67]:

***Օ.Կոնտը*** (1798-1857) առաջ քաշեց բոլոր գիտությունների համար մեկ միասնական մեթոդի՝ համակարգայնության տեսակետը: Առանձնահատուկ բարդ համակարգերի (կենսաբանական և հասարակական) ուսումնասիրության համար նա առաջարկում էր համեմատական մեթոդը, որը թույլ կտար վեր հանել ոչ միայն ստատիկայի, այլ նաև դինամիկայի օրենքները, ինչն, իր հերթին, թույլ կտար դասակարգել ժամանակի մեջ զարգացող համակարգերը՝ առաջ-

[65]**Павлов, Растимешина** 2017: 62
[66]**Там же** 2017: 62
[67]**Нисбет** 2020: 379.

նորդվելով իրենց ներքին էվոլյուցիայիով[68]: Ժամանակակից դարաշրջանը հասկանալու համար անհրաժեշտ է այն դիտարկել առավել լայն պատմական ենթատեքստի հիման վրա, քանի որ ժամանակակից հասարակությունը ոչ թե պատահականություն է, այլ նախորդող գործընթացների օրինաչափ արդյունք[69]:

Օ.Կոնտն իր աշխատություններում[70] մարդկային հասարակության պատմությունը բաժանեց երեք փուլերի, որոնք համապատասխանում են մարդկային մտածողության զարգացման փուլերին. աստվածաբանական (երևակայական մտածողություն), մետաֆիզիկական (ֆորմալ, վերացական մտածողություն) և պոզիտիվ (գիտական մտածողություն)[71]:

*Աստվածաբանական* փուլը (հնագույն շրջանից մինչև 1300 թ. Ք.հ.) ամփոփում է իր մեջ հին շրջանը և վաղ միջնադարը և ունի ենթափուլեր՝ ֆետիշիզմ, պոլիտեիզմ, մոնոթեիզմ, *մետաֆիզիկական* փուլը (1300-1800 թթ.) քրիստոնեության և միջնադարյան պետության և կրոնի միջև ներդաշնակության փուլն է, *պոզիտիվ* փուլը (1800թ. հետո) գիտության և նրա առանձին ճյուղերի զարգացման, նրանց

[68]**Никишенков** 2008: 50.

[69]**Штомпка** 1996: 136.

[70] «Prospectus des travaux scientifiques nécessaires pour réorganiser la société» (Հասարակության վերակառուցման համար անհրաժեշտ գիտական աշխատության նախագիծ), 1822, «Discours sur l'esprit positif» (Պոզիտիվ փիլիսոփայության ոգին), 1844.

[71]**Соловьев** 1895: 125.

հասարական նշանակության աճի և պոզիտիվիզմի ուսմունքի ստեղծման փուլն է[72]:

***Է. Դյուրկհեյմը*** (1858-1917) իր «*De la division du travail social*» (Հասարակական աշխատանքի բաժանման մասին) աշխատության մեջ հասարակության պատմական զարգացումը դիտարկեց որպես շարժում մեխանիկական համերաշխությունից դեպի օրգանական համերաշխություն: Մեխանիկական համերաշխության գերակայման փուլը *հասարակական զարգացման առաջին փուլն է*. հասարակությունն իրենից ներկայացնում է հատվածավոր կազմակերպություն՝ կլանային հիմքով[73], որին բնորոշ են բռնատիրական կառավարումը[74], կոլեկտիվ սեփականությունը, իշխանություն-անհատ հարաբերությունների նմանությունը մարդ-իր հարաբերություններին[75] և այլն: Միասնականությունը մեխանիկական համերաշխության շրջանում պահպանվում է *«ընդհանուր գիտակցության»* շնորհիվ, և *«կառավարող իշխանութ-*

[72]**Осипова** 1979: 32-33.

[73]**Дюркгейм** 1996: 193.

[74]Դյուրկհեյմը հետաքրքիր մեկնաբանություն է տալիս առաջնորդի ֆենոմենին: Նա համարում է, որ *«Առաջնորդներն, ըստ էության, առաջին անհատներն են, որոնք առանձնացել են սոցիալական զանգվածից: Նրանց արտոնյալ դիրքը թույլ է տալիս նրանց հասնել գերակայության: Իհարկե, նրանց իշխանության աղբյուրը համայնքն է, բայց հենց իշխանությունը ինքնակազմակերպվում է, այն դառնում է ինքնուրույն և առաջնորդին անձնական գործունեության հնարավորություն է ընձեռում. ապա ի հայտ է գալիս նախաձեռնության՝ նախկինում գոյություն չունեցող աղբյուր: Այսուհետ կա մեկը, որը կարող է նոր բան ստեղծել և նույնիսկ որոշ առումներով դեմ գնալ կոլեկտիվ ավանդույթներին: Հավասարակշռությունն արդեն խախտվել է»*, տե՛ս **Дюркгейм** 1996: 204-205. Այս բնութագրումը մեջբերում է նաև Էլման Սերվիսը ցեղապետությունների (chiefdom) առաջնորդներին քննարկելու ժամանակ, տե՛ս **Service** 1975: 56.

[75]**Дюркгейм** 1996: 188.

*յան առաջին և հիմնական գործառույթը կոլեկտիվ սովո-րույթների, ավանդույթների, հավատալիքների՝ ընդհանուր գիտակցության հանդեպ հարգանքի հաստատումն է, նրա պաշտպանությունը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամիներից*[76]*»:*

Դանդաղ էվոլյուցիայի արդյունքում սոցիալական այս կազմակերպությունը վերածվում է *տարածքային կազ-մակերպում ունեցող հասարակության* (որում մեխանիկա-կան համերաշխությունը թեև թուլանում է, բայց դեռ պահ-պանված է[77]), և, վերջապես՝ *աշխատանքային կամ պրոֆե-սիոնալ բաժանում*[78] *ունեցող հասարակության*, որին արդեն հատուկ է համերաշխության օրգանական տեսակը: Այս փո-խակերպման շարժիչ ուժը, ըստ Է. Դյուրկհեյմի, *աշխատան-քի բաժանումն է*[79]: Այն ստանձնում է նույն դերը, որը ժամա-նակին կատարում էր ընդհանուր գիտակցությունը, նա է գլխավորապես պահպանում բարձր կարգի սոցիալական միացքների (տվյալ դեպքում՝ համակարգը կազմող տարրե-րի ամբողջություն) միասնականությունը[80]:

---

[76]**Дюркгейм** 1996: 92.
[77]**Там же**: 194.
[78]**Там же**: 195-198.
[79]**Там же**: 136.
[80]**Там же**: 181.

***Դասական էվոլյուցիոնիզմ՝ Հ.Սպենսեր, Է.Թեյլոր, Լ.Մորգան***

Դասական էվոլյուցիոնիզմը զարգացավ զուգահեռաբար Բրիտանիայում (Է.Թեյլոր (տե՛ս ստորև), Հ. Մեյն[81], Ջ. ՄակԼենան[82]), ԱՄՆ-ում (Լ.Մորգան, տե՛ս ստորև) և Գերմանիայում (Յ. Բախոֆեն[83], Ա. Բաստիան[84])[85]: Նշվածներից պո-

---

[81]**Sir Henry James Sumner Maine** (1822-1888), «նահապետական ընտանիքի» տեսության հիմնադիր: Հասարակական զարգացումը Մեյնը դիտարկում է որպես մի կողմից՝ ընտանեկան կախվածության աստիճանական թուլացման, իսկ մյուս կողմից՝ անհատական պարտականությունների աճի գործընթաց: Ազգակցական հարաբերություններից բխող իրավունքների և պարտականությունների ամբողջությունը փոխարինվում է անհատին հասարակության կողմից պարտադրվող իրավունքներով և պարտականություններով, ազգակցական կապերով միավորված խմբերը փոխարինվում են քաղաքական համակարգեր կազմող տարածքային խմբերով:

[82] **John Ferguson McLennan** (1827-1881), ընտանիքի և ամուսնության ունիվերսալ էվոլյուցիոն զարգացման տեսության հեղինակ (հիմնական աշխատությունն է «Primitive Marriage», 1865): Ընտանիքը համարում էր հասարակական զարգացման ուշ փուլում առաջացած երևույթ՝ տոհմից և ցեղից հետո:

[83]**Johann Jakob Bachofen** (1815-1887), զբաղվել է նախապատմական մայրիշխանության և նրա՝ հասարակության, կրոնի և բարոյականության ձևավորման հարցերով, հիմնական աշխատությունն է «Das Mutterrecht» (1861):

[84]**Adolf Bastian** (1826-1905), հիմնական աշխատությունն է «Der Mensch in der Geschichte» (1860), Բաստիանն առաջարկել է մարդկության ընդհանուր հոգեկան միասնության որոշակի տարրական գաղափարներ, որոնք ընդհանուր են բոլոր ժողովուրդների համար, այդ տարրական գաղափարների տեսությունը շարունակել է Կարլ Յունգը որպես կոլեկտիվ անգիտակցականի տեսություն: Ըստ Բաստիանի, յուրաքանչյուր ժողովրդին բնորոշ մշակութային գծերը պայմանավորված են մշակութային էվոլյուցիայի օրենքներով և աշխարհագրական դետերմինիզմով:

[85]Էվոլյուցիոնիզմի զուգահեռ զարգացման մասին տե՛ս **Upadhyay&Pandey** 1993: 22.

լիտոգենեզի հարցերով զբաղվել են Լ. Մորգանը և Է.Թեյլո-րը, որոնց մենք կավելացնենք նաև բրիտանական էվոլյու-ցիոնիզմի ևս մեկ կարկառուն ներկայացուցչի՝ Հերբերտ Ս-պենսերին:

***Հերբերտ Սպենսեր***

Էվոլյուցիոն հայեցակարգն ավարտուն տեսք ստա-ցավ հենց Հերբերտ Սպենսերի (1820-1903) աշխատություն-ներում: Հ.Սպենսերին հաջողվեց մշակել մարդկային հասա-րակությունների առաջացման և առաջադիմական զարգաց-ման ուրույն և ամբողջական էվոլյուցիոն հայեցակարգ: Այդ իսկ պատճառով Հ.Սպենսերին համարում են առաջադի-մության գաղափարի բարձրագույն մարմնավորումը[86]: Հ.Ս-պենսերի ունիվերսալ էվոլյուցիոնիզմը՝ բոլոր մակարդակնե-րում (ինֆուզորիաներից մինչև իր ժամանակակից հասարա-կությունը) էվոլյուցիայի օրինաչափությունների վերհանման փորձը նախորդել է Չ.Դարվինի կենսաբանական էվոլյուցիո-նիզմին. վերջինս հենց Հ.Սպենսերից է փոխառել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են *«գոյության համար պայ-քար»* և *«առավել հարմարվածի գոյատևում»*, ինչպես նաև *«էվոլյուցիա»* հասկացությունը[87]:

Հ.Սպենսերի ուսմունքի հիմքում մարդկային հասա-րակությունը կենսաբանական տեսակի, իսկ սոցիալական հաստատությունները՝ կենսաբանական օրգանների հետ նույնացնելն է և էմպիրիկ փորձի շնորհիվ ձեռք բերված օբ-

[86]**Нисбет** 2007: 351.

[87]**Harris** 1968: 128, **Гринин, Коротаев, Марков** 2013: 11, **Никишенков** 2008: 50.

յեկտիվ փաստերի վերլուծությամբ նաև մարդկային հասարակության ծագումնաբանության և էվոլյուցիայի՝ *«ոչ կապակցված համասեռությունից կապակցված փարասեռության անցման»* ուրվագծումն է[88]:

Էվոլյուցիան, ըստ Սպենսերի, կառուցվածքային-ֆունկցիոնալ տարբերակումների գործընթացն է, որը շարժվում է 1) պարզից դեպի բարդ, 2) ամորֆությունից դեպի հստակություն, 3) համաձնությունից (հոմոգենությունից) դեպի տարասեռություն, 4) շարժունակությունից դեպի կայունություն: Դա ունիվերսալ գործընթաց է[89]:

Ըստ Հ. Սպենսերի՝ կենդանի ագրեգատների (կենդանի համակարգերն են կենսաբանական օրգանիզմներն ու հասարակությունները) զարգացումը պայմանավորված է ներքին և արտաքին գործոնների փոխազդեցությամբ («original extrinsic» and «original intrinsic» factors[90]): Ընդ որում գործոնները բազմաթիվ են, այդ առումով Հ. Սպենսերին կարելի է համարել պատմական գործընթացի բազմագործոն հայեցակարգի առաջին ներկայացուցիչը[91]: Այդ փոխազդեցությունը առաջացնում է շարունակական փոփոխություններ միջավայրի և ագրեգատի միջև, մինչև չձևավորվի շարժուն հավասարակշռություն[92]: Հանգամանքների արմատական փոփոխությունը առաջացնում է հանրույթի կառուցվածքի փոփոխություն կամ նրա անդամների ներքին

[88]**Коломийцев** 2004: 38.
[89]**Штомпка** 1996: 139.
[90]**Harris** 1968: 130.
[91] **Шувалов** 2012: 1142.
[92]**Harris** 1968: 130.

բնույթի փոփոխություն, ինչը հանգեցնում է նոր փոփոխությունների[93]:

Հ. Սպենսերը համարում է, որ սոցիալական էվոլյուցիայի մեխանիզմի հիմքում խորքային անհավասարությունն է, և ի սկզբանե մարդիկ գտնվում են անհավասար պայմաններում (ձեռքբերված ժառանգության, անհատական փորձի, կենսապայմանների, բաժին ընկած մարտահրավերների և այլնի առումով): Այս պայմաններում ի հայտ է գալիս դերերի, գործառույթների, իշխանության, սեփականության տարբերակում, որը գնալով խորանում է: Նման կարգավիճակներ ունեցող մարդիկ ձգտում են միավորվել, և այդպես առաջանում են դասակարգային, ազգային կամ մասնագիտական տարբերակում ունեցող խմբերը, հետո ի հայտ են գալիս այդ խմբերը պահպանող կազմակերպությունները, և նախկին համածին (հոմոգեն) վիճակն այլևս վերականգնել հնարավոր չէ[94]:

Պետությունը կենսաբանական օրգանիզմի նման անցնում է զարգացման իր փուլերը, որոնք կրկին պայմանավորված են մասնագիտացում առաջացնող սոցիալական տարբերակմամբ[95]: Զարգացմամբ պայմանավորված տարբերակման աճի դրույթն առհասարակ արտահայտվում է հասարակական զարգացման բոլոր ոլորտներում՝ ինչպես տնտեսական (որպես աշխատանքի խորացող բաժանում),

[93]**Harris** 1968: 130.
[94]**Штомпка** 1996: 139.
[95]**Курсков** 2011: 240.

այնպես էլ լեզվի և սոցիալական հաստատությունների զարգացման ոլորտում[96]:

Մարդկային հասարակության զարգացման փուլերն են. ***1) պարզ, մեկուսացված հասարակություններ***, որոնց ինտեգրման գործում կարևոր են ընդհանուր զգացմունքները, գաղափարները և հավատալիքները[97], նրանց փոխարինելու են գալիս ***2) բարդ հասարակությունները,*** որտեղ կա աշխատանքի և գործառույթների բաժանում, և որտեղ կենտրոնական նշանակություն է ձեռք բերում հիերարխիկ քաղաքական կազմակերպությունը *(այս փուլը մեզ հետաքրքրող վաղ պետականությունն է)*, իսկ հաջորդ փուլում ձևավորվում է ***3) կրկնակի բարդություն ունեցող հասարակություն,*** որն ունի մշտական տարածք և մշտապես գործող օրենսդրություն, և, վերջապես, հաջորդ փուլում ի հայտ են գալիս ***4) առավել բարդ քաղաքական ամբողջություններ՝*** ազգային պետություններ, համադաշնություններ և կայսրություններ[98]:

Ըստ Հ.Սպենսերի՝ հասարակական փոխակերպումների մեջ կարևոր դեր ունի ***պատերազմը***[99], այն ոչ միայն հասարակության զարգացման, այլ նաև կազմակերպման

---

[96]**Коломийцев** 2004: 40.

[97]**Perrin** 1995: 801. **Harris** 1968: 130.

[98]**Штомпка** 1996: 140.

[99] Պետության առաջացման մեջ պատերազմների առանցքային դերի մասին հայեցակարգի արմատները գալիս են դեռ անտիկ շրջանից, իսկ ավարտուն տեսք *«բռնության տեսությունը»* ստացավ XIX դարում: Տեսության հիմնադիրն է Լյուդվիգ Գումպլովիչը: Լ. Գումպլովիչը և Կ.Կաուցկին գտնում էին, որ պետությունները առաջացել են արտաքին բռնության միջոցով, այսինքն՝ հաղթող ժողովրդի իշխանությունը ամրապնդելու նպատակով: Ե.Դյուրինգը առաջ էր քաշում ներքին բռնության հայեցակարգը, ըստ որի պետությունը առաջացել է, երբ հասարակության ներսում սոցիալական մի խումբը ձեռք է բերել իշխանություն մյուս խմբերի նկատմամբ:

պատճառն է[100]: Պատերազմներում ի հայտ եկող համագործակցությունն է սոցիալական ինտեգրման գլխավոր պատճառը[101], իսկ վերջնականապես հասարակությունը ձևավորվում է միայն այն ժամանակ, երբ ինտեգրմանն ավելանում է համագործակցությունը[102]:

Ըստ Սպենսերի՝ պետության ձևավորման հարցում կարևոր են.

- *նսփակեցությունը*[103],
- *ընդհանուր նախնուց սերված լինելը*[104],
- *ազգակցային հարաբերությունների փոխակերպումը փեղագրականի (բնագրում՝ փոպոգրաֆիկ), դրանք էլ իրենց հերթին փոխակերպվում են ընդհանուր կազմակերպության վարչական կապերի*[105],
- *կրոնական բաղադրիչը*[106],
- *ռելիեֆը. Հ. Սպենսերը գփնում է, որ լեռնային ռելիեֆը թույլ է փալիս ինփեգրում միայն ցեղի մակարդակով, և նման կազմակերպությունները պահպանողական են, ավանդական և արփաքին ազդեցությունների հանդեպ կայուն, իսկ օրինակ Եգիպփոսի պես փարածքը կարողանում է ապահովել բնակչության մեծ խփություն և բնակչության առանձին հափվածների վրա ուժային ներգործության ավելի մեծ հնարա-*

---

[100]**Спенсер** 1997: 345.
[101]**Там же**: 333.
[102]**Спенсер** 2014: 18.
[103]**Спенсер** 1997: 335.
[104]**Там же**: 333.
[105]**Там же**: 334.
[106]**Там же**: 338, 339.

*վորություն, և, հետևաբար, Եգիպտոսում ձևավորվում է հասարակական կազմակերպության այլ տեսակ*[107]:

Առաջնային քաղաքական համակարգն ըստ Սպենսերի ***ռազմական կառույցի*** բնույթ ունի: Այդպիսին են առանց բացառության հին աշխարհի բոլոր պետական միավորումները: Միայն զարգացման հաջորդ փուլում, թշնամական միջավայրի բացակայության, մասնավոր գործունեության սահմանափակումների վերացման, միայն բացասական կարգավորման[108], hիերարխիկ հարաբերությունների՝ պայմանագրային հարաբերություններով փոխարինվելու, արդյունաբերության աճի և այլ գործոնների[109] զարգացման դեպքում է ձևավորվում պետության ***արտադրական*** տեսակը՝ այնպիսի պետության, որի առաքելությունը անհատների, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունն է, այլ ոչ թե հակառակը[110]:

***Լյուիս Մորգան***

1877 թ. ամերիկացի գիտնական Լյուիս Մորգանը (1818-1881 թթ.) հրատարակեց իր ***«Ancient society, or, researches in the lines of human progress from savagery through barbarism to civilization»*** ("Հին հասարակությունը կամ մարդկային առաջընթացի ուղղությունների (վայրենությունից դեպի բարբարոսություն և դեպի քաղաքակրթություն) ուսումնասիրություն") աշխատությունը, որին

---

[107]**Шувалов** 2012: 1141.

[108] Բացասական կարգավորումը հասարակության կարգավորումն է արգելքների միջոցով:

[109]**Спенсер** 1997: 358-363.

[110]**Там же**: 360.

վիճակված էր մոտ կես դար լինել էվոլյուցիոնիզմի, իդեալիզմի, մարքսիզմի և ստրուկտուրալիզմի մասին իմացաբանական վեճերի կենտրոնում[111]: Այս աշխատությունում Լ.Մորգանը իրոկեզների երկարամյա ուսումնասիրման հիման վրա և պատմական մեծաթիվ աղբյուրների ներառմամբ փորձեց տալ սոցիալական էվոլյուցիայի իր սխեման:

Մարդիկ, ըստ Լ.Մորգանի, միանման բազային ճանաչողական կառուցվածք ունեն, այդ իսկ պատճառով էվոլյուցիոն ուղին բոլոր հանրույթներում նույնն է. ուսումնասիրելով հանրույթը և համեմատելով այն մյուս հանրույթների տիպական գծերի հետ, կարելի է որոշել ոչ միայն նրա դիրքը էվոլյուցիոն սանդղակում, այլև կարելի է որոշել, թե ինչ տեսք ունեին ավելի վաղ հանրույթները և ինչ զարգացում կապրեին նրանք հետագայում, եթե զարգանային առանց արտաքին ազդեցության[112].

Ըստ Լ.Մորգանի, մարդկային հասարակության զարգացումը պրոգրեսիվ է՝ ստորինից վերընթաց, նախորդ շրջանի ձեռքբերումները յուրացնելուն համընթաց[113]: Պատմությունը նա բաժանեց երեք «էթնիկ շրջանների», որոնք են՝ *վայրենություն* (ստորին, միջին, բարձրագույն), *բարբարո-*

[111]**Vincent** 2013: 575.
[112]**Warms, McGee** 2013: 562.
[113]**Морган** 1935: 20.

*սություն*[114] (ստորին, միջին, բարձրագույն), *քաղաքակրթություն* (հին և ժամանակակից)[115]:

Սոցիալական զարգացման փուլերը, ըստ Լ.Մորգանի, չորսն են՝ ***տոհմ, ֆրատրիա, ցեղ, ազգ.*** այս օրգանական շարքն է արտահայտում կառավարման գաղափարի զարգացումը մինչև քաղաքական հասարակության հիմնադրումը[116]: Կառավարման այս տարբերակը Լ.Մորգանը քննարկում է հունական բասիլեայի օրինակի վրա և առաջարկում է այն կոչել ***«ռազմական դեմոկրատիա»***: Մեջբերելով բասիլեայի արիստոտելյան սահմանումները՝ Լ.Մորգանը ձևակերպում է ռազմական դեմոկրատիայի չափորոշիչները: Դրանք են.

- *առաջնորդն ունի միայն ռազմական և քրմական գործառույթներ,*
- *նրա իշխանությունը վերահսկվում է ժողովրդի կողմից, և ժողովուրդն էլ կարող է նրան անհրաժեշտության դեպքում զրկել իշխանությունից,*
- *բասիլևսը չունի բացարձակ ժառանգական իշխանություն և քաղաքացիական իշխանություն*[117]*:*

Սոցիալական զարգացման հաջորդ փուլն, ըստ Լ.-Մորգանի, տարածքի և մասնավոր սեփականության վրա

---

114 Ընդ որում բարբարոսության շրջանի ձեռքբերումները (ցեղերի համադաշնություն, բույսերի մշակում, այբուբեն կերակուր, մանածագործություն, բրուտագործություն և այլն) հարաբերական առումով գերազանցում են մնացած բոլոր շրջանների ձեռքբերումները, **Там же**: 23-24.

115 **Там же**: 8-10.

116 **Там же**: 140-141.

117 **Там же**: 145-146.

հիմված հասարակությունն է, բուն քաղաքական հասարակությունը կամ պետությունը՝ civitas-ը[118]:

Քաղաքային համայնքը կամ շրջանը, որոշակի սահմաններով ու շրջանակներով, այնտեղ գոյություն ունեցող սեփականությամբ, կազմում է պետության հիմքը կամ միավորը, իսկ քաղաքական հասարակությունը նրա արտահայտման ձևն է: Քաղաքային համայնքի էվոլյուցիան հետևյալն է. ***քաղաքային համայնք – քաղաքային համայնքների միավորում կամ կանտոն -- կանտոնների միավորում կամ ազգային շրջան***, որի բնակչությունը միավորված է մեկ քաղաքական միասնության մեջ[119]: **Տարածքային կառավարումն այն է,** երբ հասարակությունը անցնում է կառավարման տոհմային տարբերակից տարածքի և սեփականության (որի դերը խիստ կարևոր է, որպես սահմանափակումներ հաստատող գործոնի[120], վերափոխման զսպանակի[121]) վրա հիմնված քաղաքական կառավարման[122] (Լ.Մորգանն այն անվանում է *«կառավարման երկրորդ մեծ պլան»*): Ըստ Լ.Մորգանի՝ սա է քաղաքակրթության կամ պետության իրական ցուցիչը[123], տոհմային և պետական հասարակությունների միջև իրական սահմանազատումը[124]: Քաղաքակրթության մյուս ցուցիչներն են, ըստ Լ.Մորգանի, **երկաթի կիրառու-**

---

[118]**Морган** 1935: 7.
[119]**Там же.**
[120]**Там же.**
[121]**Там же**: 126.
[122]**Там же.**
[123]**Там же**: 7.
[124]**Abélès** 2005: 794.

**մը**[125] և **գիրը**, որի շնորհիվ ստեղծվում է առհասարակ *պատմության* հասկացությունը[126]:

Անկախ այն բանից, որ նրա դրույթների մի մասը (մասնավորապես՝ ընտանիքի էվոլյուցիայի մորգանյան սխեման) հետագայում հերքվեց[127], և անկախ Մորգանի՝ իր ժամանակի գիտության մակարդակով պայմանավորված որոշ սխալ պատկերացումների (մասնավորապես ռասիստական որոշ հայացքների[128]), Լ.Մորգանի (ինչպես նաև Օ.Կոնտի և Հ.Սպենսերի) էվոլյուցիոն սխեմաները ահռելի ազդեցություն ունեցան գիտության հետագա զարգացման վրա[129]՝ ձևավորելով ոչ միայն համակիրների և հետնորդների, այլև հակառակորդների բանակներ: Վերջիններից առավել հայտնի է Ֆ.Բոասի «Պատմական դպրոց» ուղղությունը, որի հայեցակարգը մեծապես ձևավորվել է ի հակադրություն մորգանյան հայեցակարգի[130]:

Լ.Մորգանի հայեցակարգը մեծապես փոխառվեց Էնգելսի կողմից՝ դառնալով մարքսիստական պոլիտոգենեզի հիմքը, ինչի մասին տե՛ս ստորև:

---

[125]**Морган** 1935: 330.

[126]**Там же**: 21.

[127]**Джонсон, Эрл** 2017: 67

[128]*«Լ. Մորգանը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում Ս.Հ.Մորթընի աշխատությանը, որը տարբեր ռասաներին ուղեղի տարբեր ծավալներ էր վերագրում: Լ. Մորգանը գտնում էր, որ քաղաքակիրթ մարդկանց ուղեղն ավելի զարգացած է, և սոցիալական էվոլյուցիայի գործընթացը կենսաբանական հիմք ունի: Էվոլյուցիան հանգեցրեց ուղեղի ծավալի մեծացմանը, և ենթադրվում էր, որ դա համարաբերակցության մեջ է մտնում տրամաբանությունն ու ռացիոնալիզմը օգտագործելու ունակության հետ»:* Տե՛ս **Warms, McGee** 2013: 562.

[129]**Савельева** 2007: 73.

[130]**Warms, McGee** 2013: 562.

***Էդուարդ Թեյլոր***[131]

Է. Թեյլորը (1832-1917) XIX դարի ականավոր գիտնականներից մեկն է, ով զգալի ներդրում է ունեցել նախնադարյան մշակույթի օրինաչափությունների վերհանման մեջ: Ազգագրության առաջին՝ էվոլյուցիոնիստական գիտատեսական դպրոցի հիմնադիրներից մեկն է: Համարում էր, որ մարդկությունն իրենից ներկայացնում է մեկ կենսաբանական տեսակ՝ ***մշակութային նորարարությունների զուգահեռ հայտնագործման հնարավորություններով հանդերձ***[132]: Նա մարդկային հասարակության զարգացումը դիտարկում էր որպես բնության էվոլյուցիայի անքակտելի մաս:

Ըստ Է.Թեյլորի, քաղաքակրթությունը միշտ չէ որ մշտական շարժման մեջ է կամ մշտական առաջընթաց է ցուցաբերում. այն կարող է և կանգ առնել, և հետընթաց ապրել[133], բայց հանրագումարում զարգացումն ընթանում է առաջ: Զարգացումն աստիճանական բնույթ ունի՝ նախորդ վիճակից աճելով կամ զարգանալով դեպի ավելի բարդը[134]:

---

[131]Է. Թեյլորին Լ. Մորգանից հետո անդրադառնալու մեր որոշումը պայմանավորված է հասարակական զարգացման մասին նրանց աշխատությունների հրապարակման հաջորդականությամբ: Լ. Մորգանի վերոհիշյալ աշխատությունը լույս է տեսել 1878 թ., Թեյլորի «Anthropology. an introduction to the study of man and civilization» (Մարդաբանություն. ներածություն մարդու և քաղաքակրթության ուսումնասիրության) աշխատությունը՝ 1881թ. (չնայած առհասարակ էվոլյուցիոն ստադիաների մասին Է. Թեյլորը խոսում է արդեն 1871 թ. լույս տեսած «Primitive culture» երկհատորյակում):

[132]**Рогалевич** 2007: 647.

[133]**Тайлор** 1898: 23.

[134]**Там же**: 27.

Է.Թեյլորն, ինչպես և Լ.Մորգանը, համարում էր, որ հասարակությունը զարգանում է պարզից բարդ սխեմայով, և հանրույթներն իրենց զարգացման մեջ անցնում են երեք փուլ՝ վայրենություն – բարբարոսություն – քաղաքակրթություն: Քաղաքակրթության ցուցիչ նա նույնպես համարում է գիրը[135]:

Ձևավորվող հասարակության հիմքը ինքնակառավարվող ընտանիքն է նահապետի գլխավորությամբ[136], ընտանիքի հիմքում արական գծով ժառանգումն է[137]: Նման հասարակարգը զարգանում է միայն ռազմական առաջնորդների և կառավարման նոր համակարգի ի հայտ գալով[138]: Այդ համակարգն իր մեջ ներառում է կրոնական, քաղաքացիական և ռազմական կառավարման հարթությունները[139], գերագույն իշխանությունն էլ, որպես կանոն, այս տարրերի համակցություն է[140]: Զարգացման հաջորդ փուլը ցեղերի միությունն է, որից ձևավորվում է ազգը կամավոր դաշինքի կամ նվաճման արդյունքում[141]: Պատերազմը և ռազմական իշխանությունն են ձևավորում ազգը, դա, ըստ Է.Թեյլորի, պատմության ամենապարզ դասերից մեկն է[142]:

Լ.Մորգանի և Է. Թեյլորի աշխատություններով սկսվեց նոր փուլ պատմագիտության մեջ. *«Նախ, նրանք ա-*

[135]**Тайлор** 1898: 405.
[136]**Там же**: 421.
[137]**Там же**: 424-425.
[138]**Там же**: 425.
[139]**Там же**: 426.
[140]**Там же**: 426-427.
[141]**Там же**: 427-428.
[142]**Там же**: 428-429.

*վարտին հասցրին ազգագրության՝ որպես ինքնուրույն գիտակարգի կազմավորումը, և այնուհետև ազգագրական մեծածավալ փաստական նյութի, դաշտային հետազոտությունների, գրավոր աղբյուրների տվյալների հիման վրա, պատմահամեմատական եղանակով կատարված պատմական վերակազմության միջոցով մշակվեցին նոր տեսություններ նախնակենցաղ ժողովուրդների... հասարակական հաստատությունների ու հասարակական հարաբերությունների մասին, նորովի ներկայացան մշակույթի պատմությունը, մարդկային հասարակության պատմական էվոլյուցիան»*[143]:

***Մարքսիզմ***

Պետք է նշել, որ պոլիտոգենեզի ամբողջական հայեցակարգ Կ.Մարքսը և Ֆ.Էնգելսը չեն ստեղծել: Մեզ հետաքրքրող հասկացությունների առավել հստակ ձևակերպումներն ամփոփված են 1859 թ. *«Քաղաքական տնտեսագիտության քննադատություն»* աշխատության, իսկ պետականաստեղծ գործընթացների վերաբերյալ թե՛ Կ.Մարքսի, թե՛ Ֆ.Էնգելսի պատկերացումները տեղ են գտել Ֆ.Էնգելսի *«Անտիդյուրինգ»* և ավելի ուշ՝ *«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը»* աշխատություններում: Վերջինս Ֆ.Էնգելսը գրել է Կ.Մարքսի մահից հետո՝ օգտագործելով, ըստ էության, Լ.Մորգանի հավաքած փաստական նյութը, Լ.Մորգանի աշխատության մարքսյան կոնսպեկտը և սեփական բազմաթիվ ուսումնասիրությունները

---

[143]**Գևորգյան** 2003:6:

(*«Հին գերմանացիների պատմությունից»*, *«Ֆրանկական շրջանը»* և այլն)[144]:

Ֆ. Էնգելսի հիմնական եզրահանգումներն են. պետությունը հավիտյան չէ, որ գոյություն ունի, այն ի հայտ է գալիս տնտեսական զարգացման որոշ աստիճանի դեպքում, որը անհրաժեշտաբար կապված է հասարակության՝ դասակարգերի պառակտվելու հետ[145]. «*Բաշխման մեջ ի հայտ եկող տարբերությունների հետ մեկտեղ երևան են գալիս և դասակարգային տարբերությունները: Հասարակությունը բաժանվում է դասակարգերի՝ արտոնյալ և ընչազուրկ, շահագործող և շահագործվող, տիրապետող և ճնշված, և պետությունը, որին հանգեցին միացեղ համայնքների տարերայնորեն կազմավորված խմբերն իրենց զարգացման արդյունքում, որը սկզբնապես զուտ մի նպատակ ուներ՝ ապահովել իրենց ընդհանուր շահերը (օրինակ Արևելքում դա ոռոգումն էր) և պաշտպանել արտաքին թշնամիներից, այսուհետ ձեռք է բերում իր նշանակությունը՝ բռնության միջոցով ապահովել կառավարող դասակարգի գոյության և տիրապետության պայմանները ճնշված դասակարգի դեմ*»[146]:

Դասակարգերի ի հայտ գալը, աշխատանքի բաժանումը և փոխանակությունը միավորող ապրանքային արտադրությունը հեղաշրջում են առաջացնում նախորդ հասարակության մեջ՝ վերացնելով տոհմական կարգը[147]: Պետութ-

[144] **Андреев** 1979: 135.
[145] **Էնգելս** 1965:242:
[146] **Энгельс** 1950: 139.
[147] **Էնգելս** 1965:243:

յունն այսպիսով շահագործվող դասակարգին հպատակության մեջ պահելու համար նախատեսված մեքենա է[148]:

Մարքսը և Էնգելսը շարունակեցին զարգացնել ֆորմացիոն մոտեցումը. պատմական զարգացումը մարքսիստական հայեցակարգում նույնպես ներկայանում է մարդկային հասարակության առաջադիմական զարգացման փուլերի՝ հասարակական-քաղաքական ֆորմացիաների հերթագայության տեսքով: *«Ֆորմացիան առաջանում է արտադրության որոշակի հասարակական ձևի հիմքի վրա և, հետևաբար, բնութագրվում է արտադրողական ուժերի զարգացման որոշակի մակարդակով, արտադրական հարաբերությունների տեսակով և նրանց վերևում գտնվող վերնաշենքով (պատմականորեն կանխորոշված հասարակական հաստատությունների, գաղափարների և հասարակական գիտակցության ձևերի)»*[149]:

Այսպիսով, ըստ մարքսիստական հայեցակարգի, հասարակության զարգացման հիմքում **արտադրության զարգացումն** է: Արտադրողական ուժերի աճը հանգեցնում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգերի փոփոխությանը. փոխվում են հասարական արտադրության տեսակները՝ արտադրության միջոցները, և հասարական-տնտեսական մի ֆորմացիան փոխարինվում է մեկ այլ՝ ավելի առաջադեմ ֆորմացիայով: Արտադրական հարաբերությունները հանդես են գալիս որպես **հենք**, և նրանց հիմքում սեփականության որոշակի ձևն է: Հենքից վեր քա-

[148]**Էնգելս** 1965:246:
[149]**Нуреев** 2010: 133.

ղաքական և իրավական **վերնաշենքն** է՝ հասարակական գիտակցության որոշակի ձևը: Պետությունը ունի դասակարգային բնույթ, քանի որ արտահայտում է տիրապետող դասակարգի կամքը և շահերը:

***Արտադրության ասիական եղանակը (ԱԱԵ):***

Մարքսիստական պոլիտոգենեզի հայեցակարգի մեջ անհրաժեշտ է առանձնացնել արտադրության ասիական եղանակի հայեցակարգը[150]: Այս հայեցակարգը քննարկել են ամբողջ XX դ. ընթացքում թե՛ խորհրդային, թե՛ արևմտյան պատմաբանները և սոցիոլոգները: Դրա որոշ դրույթներ Կարլ Վիտֆոգելի «հիդրավլիկ տեսության» (տե՛ս համապատասխան ենթավերնագիրը) հիմքն են հանդիսացել, իսկ 1960-90-ական թթ. ԱԱԵ քննարկումը գաղափարախոսական աքցաններով սեղմված խորհրդային պատմաբանների համար հնարավորություն էր քիչ թե շատ դուրս գալ քարացած կարծրատիպերի սահմաններից, և այդ քննարկումները մեծապես նպաստեցին խորհրդային տեսական պատմագիտության զարգացմանը:

1853 թ. «**New-York Herald Tribune**» ամսագրում Կ. Մարքսը *«The British Rule in India» (Բրիտանական կառավարումը Հնդկաստանում)* հոդվածում[151] քննարկեց արևելյան հասարակությունների *«դեսպոտիզմը»*՝ այն պայմանավորելով կլիմայական առանձնահատկություններով, աշխարհագրական միջավայրով և արհեստական ոռոգման ցանց ստեղ-

---

[150]Արտադրության ասիական եղանակի մասին տե՛ս **Խանզադյան** 2019:

[151] Անգլերեն՝ https://www.marxists.org/archive/marx/works/1853/06/25.htm, ռուսերեն՝ http://lugovoy-k.narod.ru/marx/09/22.htm

ծելու և զանգվածային հասարակական աշխատանքների մի-ջոցով պահպանելու անհրաժեշտությամբ: Այդ կացութաձևն, ըստ Կ.Մարքսի, գոյություն է ունեցել անհիշելի ժամանակնե-րից և էական որևէ փոփոխման չի ենթարկվել:

1859 թ. Կ.Մարքսն իր «Քաղաքական տնտեսագի-տության քննադատությունը» աշխատությունում տալիս է հետևյալ ձևակերպումը. *«Ընդհանուր առմամբ՝ արտադրութ-յան* ***ասիական****, անտիկ, ֆեոդալական և ժամանակակից բուրժուական եղանակները կարող են դիտարկվել որպես հասարակության տնտեսական ձևավորման* ***առաջադիմա-կան*** *փուլեր»*[152]: Առավել հանգամանորեն ԱԱԵ հայեցակար-գին Կ.Մարքսն անդրադառնում է իր *«Արտադրության կա-պիտալիստական եղանակին նախորդող ձևերը»* աշխա-տության[153] մեջ և բազմաթիվ նամակներում[154], որոնցում քննարկում է Լ. Մորգանի և այլ ազգագրագետների աշխա-տությունները, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի երկրնե-րի ագրարային հարցերը[155]:

ԱԱԵ հայեցակարգը Կ. Մարքսը դիտարկում է իր ար-տադրության եղանակների տեսության հիմքի վրա: *«Ար-տադրության եղանակի հայեցակարգը Մարքսի տեսության առանցքային հայեցակարգն է, հայեցակարգ, որը ձևավոր-վում է՝ սկսած «Գերմանական գաղափարախոսությունից» (1846 թ.): Արտադրության «եղանակը» մատերիալիստական*

[152]**Маркс** 1949: 8.
[153]**Маркс** 1980: 267-270.
[154]**Milios** 1997: 5.
[155]**Тер-Акопян** 1973: 217. **Годелье** 2007: 5.

*«կարգի» («maniere») և սոցիալական «կարգի» («maniere») համակցությունն է»*[156]*:*

Մատերիալիստական կարգն իր մեջ է ամփոփում հասարակությունը որոշակի դարաշրջանում բնորոշող նյութական և մտավոր արտադրողական ուժերը: Սոցիալական կարգը հարաբերությունների ամբողջությունն է, որով մարդիկ ներազդում են բնության վրա՝ իրենց գոյության նյութական պայմաններն արտադրելու և բաշխելու համար: Այս հարաբերություններն է Կ. Մարքսն անվանում *հասարակական արտադրական հարաբերություններ*. դրանք պատմականորեն հաջորդում են մեկը մյուսին՝ համապատասխանելով արտադրողական ուժերի որոշակի մակարդակներին, իսկ սոցիալական ինստիտուտները (ընտանիքի, կրոնի, կառավարման և այլնի ձևերը) իրենց հերթին համապատասխանում են արտադրության տարբեր ձևերին և նրանց հետ միասին կազմում են առանձնահատուկ հասարակական ամբողջություններ, որոնք նա անվանում է հասարակական և տնտեսական ֆորմացիաներ[157]:

ԱԱԵ հիմքում, ըստ Կ. Մարքսի, արևելյան համայնքն է և ***համայնական հողային սեփականությունը***: *«Հողն է այն մեծ լաբորատորիան, զինանոցը, որն ապահովում է և աշխատանքի միջոցներով, և աշխատանքի նյութով, և կացարանով, այսինքն՝ կոլեկտիվի հենքն է»*[158]*:* Այս համայնական հողի սեփականությունը («***սեփականության ասիական***

---

[156]**Годелье 2007:** 4.

[157]**Там же:** 3.

[158]**Маркс** 1980:468. http://www.marxism-leninism.narod.ru/Library/Marx/Marx3.htm

***ձևը***») Մարքսն համարում է ***ի սկզբանե***, բնական ճանապարհով ձևավորված համայնքներին (տոհմերի վերաձված ընտանիքներ կամ նմ.) հատուկ սեփականություն[159]: Մանր համայնքները միավորող ընդհանուր ուժը հանդես է գալիս որպես գերագույն սեփականատեր կամ միակ սեփականատեր, որպես հայր, որը տրամադրում է հողակտորն առանձին մարդուն այն համայնքի միջոցով, որին այդ մարդը պատկանում է: Որպես միավորող ընդհանուր ուժ կարող է հանդես գալ ամենաազդեցիկ ընտանիքի հայրը, կամ էլ այդ դերը կարող են ստանձնել մի քանի ընտանիքների գլխավորները: Ըստ այդմ այդ հասարակության ձևը կլինի կամ ավելի բռնատիրական կամ ավելի ժողովրդավարական[160]:

Ընդհանուր միջավայրը, ասիական ժողովուրդների տնտեսության մեջ մեծ նշանակություն ունեցող ջրանցքները, կապի միջոցները և այլնը այս դեպքում առավել բարձր ընդհանուր սկզբունքի՝ բռնատիրական կառավարման արդյունքն են, և  քաղաքներն այս դեպքում առաջանում են կամ արտաքին առևտրի համար բարենպաստ վայրերում, կամ էլ այն վայրերում, որտեղ պետության ղեկավարը և նրա պաշտոնյաները օգտագործում էին իրենց եկամուտը (հավելյալ արդյունքը)՝ համայնականների աշխատանքը փոխհատուցելու համար[161]:

Փորձենք ի մի բերել մարքսյան ԱԱԵ հայեցակարգի հիմնական դրույթները.

---

[159]**Там же**: 467.
[160]**Там же**: 470.
[161]**Там же**.

1. Դա պատմության վաղնջագույն շրջանից գոյություն ունեցող համայնքն է, **ասիական բառն այստեղ պայմանական բնույթ է կրում.** այդպիսին են եղել ի սկզբանե բոլոր մայրցամաքներում ձևավորված համայնքները[162]: Կ. Մարքսի համար այնքան էլ պարզ չէին հինարևելյան սոցիոպատմական օրգանիզմներում տիրող սոցիալտնտեսական հարաբերությունները, բայց նա չէր կասկածում, որ դրանք միատիպ են և որակապես տարբերվում են թե՛ անտիկ, թե՛ ավատատիրական հարաբերություններից: Այդ իսկ պատճառով ասիական տնտեսական ֆորմացիան նա համարում է դասակարգային հասարակության առաջին պատմական ձևը[163]:

2. Պատմական տեսակետից այս առաջին համայնքներում Կ. Մարքսը չի բացառում իշխանության սակրալ բնույթը. *«իրական յուրացումը աշխատանքի պրոցեսի միջոցով տեղի է ունենում այնպիսի նախադրյալների հետևանքով, որոնք աշխատանքի արդյունք չեն, բայց ընկալվում են որպես դրա բնական կամ* ***աստվածային*** *նախադրյալներ»*[164]:

3. ԱԱԵ համայնքում **չկա մասնավոր սեփականություն**, այլ կա հողի համայնական՝ պետական, իմա՝ թագավորական սեփականություն: Եվ հողն է արտադրության գլխավոր միջոցը:

---

[162]**Гарушьянц** 1966: 87; **Тер-Акопян** 1973: 168.

[163]**Семенов** 2003: 2.4.3 https://scepsis.net/library/id_1079.html

[164]**Маркс** 1980: 468. http://www.marxism-leninism.narod.ru/Library/Marx/Marx3.htm

4. ԱԱԵ պայմանավորված է արևելյան քաղաքակրթություններին բնորոշ ոռոգման ցանց ստեղծելու և պահպանելու անհրաժեշտությամբ:

5. Կ. Մարքսը գտնում է, որ ասիական հասարակություններում պետությունը և՛ հողատերն է, և գերիշխանը (սուվերենը), և այս դեպքում ***հարկն ու ռենտան համընկնում են***, կամ, ավելի ճիշտ ասած՝ չկա հարկ, որը տարբերվի հողային ռենտայի այդ ձևից: Պետությունն է հողի գերագույն սեփականատերը, չկա մասնավոր սեփականություն, սակայն կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրապետում[165]: Այլ կերպ ասած՝ տիրող դասակարգը յուրացնում էր հավելյալ աշխատանքի արդյունքները, և այդ յուրացումը նման էր բոլոր ագրարային կամ քաղաքային համայնքների կողմից պետությանը վճարվող հարկին[166]:

Հատկանշական է, որ 1850-ական թթ. հետո Կ. Մարքսն այլևս չի հիշատակում «արտադրության ասիական եղանակ»[167] արտահայտությունը[168]: Նա տվեց ընդամենը ու-

---

[165]**Маркс, Энгельс** 1962:354.

[166]**Miios** 1999.

[167]Նշենք, սակայն, որ նրա աշխատություններում հանդիպում են **«ասիական ֆորմացիա»**, **«ասիական հասարակություն»**, **«ասիական համայնք»**, **«գյուղական համայնքների համակարգ»** արտահայտությունները, որոնք երբեմն հանգեցնում են այդ հասկացությունների արտահամատեքստային նույնականացմանը, տե՛ս **Даниленко** 2018: 42.

[168]Ն. Տեր-Հակոբյանը գտնում է, որ հետագա աշխատություններում ԱԱԵ ձևակերպման բացակայությունը պայմանավորված է նրանով, որ Մարքսը 1868 թ. արդեն ծանոթացել էր Գ. Մաուրերի աշխատանքներին, որոնցում գտել էր իր տեսության հաստատումը. *«հնարավոր է, որ Մարքսը և Էնգելսը հրաժարվել են եզրույթից՝ դրա աշխարհագրական բնույթից ելնելով, ինչպես օրինակ նույն կերպ հրաժարվել են «արփադրության անփիկ եղանակ» եզրույթից: Կամ կարելի է ենթադրել, որ ԱԱԵ եզրույթը օգփագործվում է միայն*

սումնասիրման աշխատանքային ուրվագիծը, սակայն չստեղծեց ավարտուն հայեցակարգ[169], քանի որ նրա ուշադրության կենտրոնում առհասարակ կապիտալիստական արտադրության ձևերն էին[170], և, ըստ որոշ ուսումնասիրողների՝ Կ. Մարքսի կարծիքն այս հարցում մնաց անորոշ ու հակասական[171]:

Կ. Մարքսի մահից հետո Ֆ.Էնգելսը հրատարակեց երկու աշխատություն, որտեղ անդրադարձավ հասարակության պատմական ձևերին՝ *«Անտի-Դյուրինգ»* (1878) և *«Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը»* (1884) ուսումնասիրությունները: «Անտի-Դյուրինգ»-ում կա ԱԱԵ հայեցակարգի դրույթներից մեկի հիշատակումը (բռնատիրությունների և արհեստական ոռոգման փոխկապակցվածության համատեքստում)[172], սակայն երկրորդ աշխատությունում որևէ անդրադարձ այդ հայեցակարգին չկա: Այս հանգամանքը տեղիք է տվել կասկածելու, որ Ֆ.Էնգելսը հրաժարվել է այդ տեսակետից, սակայն Ն.Տեր-Հակոբյանը գտնում է, որ այդ աշխատությունում Ֆ.Էնգելսն առհասարակ իր առջև հասարակական ֆորմացիաները և արտադ-

---

*փնփեսագիփական սփեղծագործություններում»:* Տե՛ս **Тер-Акопян** 1973: 203, հղում №2:

[169]**Гарушьянц** 1966: 87.

[170]**Milios** 1997: 3.

[171]**Sofri** 1969: 15; **Васильев** 1997: 94.

[172]**Энгельс** 1931: 109.*«Պարսկաստանում և Հնդկաստանում վերելք և անկում ապրող բազմաթիվ բռնապետությունները արփակարգ փեղյակ էին, թե որն է իրենց գլխավոր պարփականությունը, այն է՝ հոգ փանել հովիփների ոռոգման մասին, քանի որ առանց ոռոգման այդ երկրներում հողագործությունն անհնար է»:*

րության ձևերը քննարկելու նպատակ չի դրել[173]: Հանգամանալից, և՛ խորհրդային, և՛ արևմտյան տեսակետների վերլուծությամբ այս հարցը քննարկված է Վ.Լինշայի 1995 թ. լույս տեսած «Էնգելսի հանելուկը» հոդվածում[174]:

Ամփոփելով՝ ասենք, որ յուրաքանչյուր աշխատություն կամ տեսակետ անհրաժեշտ է դիտարկել այն գաղափարախոսական-հասարակական հարացույցում, որտեղ նա ստեղծվել է: ԱԱԵ հայեցակարգի զարգացումը Կ.Մարքսի և Ֆ.Էնգելսի աշխատություններում կապված է XIX դարի երկրորդ կեսին կոնկրետ գիտությունների զարգացման հետ[175], և այդ տեսակետից Կ. Մարքսի հիմնական խնդիրը ոչ թե ***«ասիական հետամնացության»*** թեզն էր, այլ ***ոչ կապիտալիստական հասարակությունների՝ կապիտալիստականի վերածվելու պատճառների*** քննարկումը[176]: Մարքսը որևէ ենթադրություն չի արել ԱԱԵ-ին բնորոշ լճացման մասին, նա ընդամենը արձանագրել է էմպիրիկ փաստի տեսական բացատրությունը, այն, որ Ասիայի առանձին հատվածներ ցուցաբերում են սոցիալական էվոլյուցիայի տեսակետից անփոփոխ վիճակ[177]:

Ավելին, Մարքսը կարողացել է արևելյան բռնատիրության հին հասկացությունը վերափոխել պետականաստեղծ գործընթացների յուրովի մեկնաբանության՝ բխեցնելով ***պետությունը*** հասարակության սեփականության, աշ-

---

[173]**Тер-Акопян** 1973: 70, 168.
[174]**Лынша** 1995.
[175]**Тер-Акопян** 1973: 219.
[176]**Milios** 1997: 5.
[177]**Ibid:**9.

խատանքի և կազմակերպման համայնական ձևերի զարգացումից[178]:

Մարքսիստական հայեցակարգը լուրջ առաջադիմական քայլ էր XIX դարի պատմագիտական և սոցիոլոգիական ուսմունքների համատեքստում: Պ.Բլեքլեջը կարևորում է Մարքսի և մարքսիստների ներդրումը պատմագիտության մեջ, մասնավորապես այն, որ *«մարքսիստները մշակեցին մարդաբանությունը և լեզվի համապատասխան տեսությունը, որը թույլ է տալիս հասկանալ իրական աշխարհի բնույթը, և, երկրորդը՝ մարքսիստները մշակեցին գիտական մեթոդ, որի օգնությամբ մենք կարող ենք ուսումնասիրել աշխարհի բնույթը լեզվի շրջանակներից անդին»*[179]:

Մարքսիստական գաղափարները և ուսմունքը դինամիկ և փոփոխվող էին, դրանց հեղինակները չեն հավակնել վերջնական դոգմատիկ ձևակերպումների: Սակայն Ռուսաստանում 1917 թվականից հետո մարքսիզմը դարձավ պետական գաղափարախոսություն, և նրա հետագա գերակայությունը պայմանավորված էր թե՛ XIX-XX պետաիրավական գիտելիքների մակարդակով, թե՛ Ռուսաստանի հասարակական կյանքի կոնկրետ պատմական պայմաններով, և թե՛ ստալինյան ամբողջատիրական վարչակարգի առանձնահատկություններով: Պետության բռնի ուժի շեշտադրումը միանգամայն համապատասխանում էր խորհրդային հասարակության պետաիրավական առանձնահատկություններին, ինչն էլ հանգեցրեց Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Լենինի վի-

[178]**Годелье** 2007: 12.
[179]**Blackledge** 2006: 3-4.

ճելի տեսական դրույթների բացարձակեցմանը[180]: Հասարակական ֆորմացիաների տեսությունը 1930-50-ական թվականներին կանոնականացման ենթարկվեց իր ծայրահեղ պարզեցված, գռեհկացված ստալինյան մեկնաբանմամբ, որը հանգեցրեց ՀՖՏ-ն ֆորմացիաների հնգամաս սխեմայի հանդես գալուն[181]:

Է.Սերվիսը ընդգծում էր *հեփմարքսյան* մարքսիզմի ևս մեկ տեսական առանձնահատկությունը. եվրոպական հասարակությունն ընթացավ զարգացման հատուկ ճանապարհով, դրա նախապայմանները Հռոմեական կայսրության ժամանակավոր գերակայումն էր, նրա անկումից հետո ձևավորված քաղաքական ապակենտրոնացումը, իշխանության վակուումը և տնտեսական ինքնաբավությունը: Ահա այդ առանձնահատուկ ճանապարհը վերածվեց բոլոր հասարակությունների համար ընդհանուր փուլի: Դա առաջացրել է լուրջ դժվարություններ մարքսիստական հայեցակարգը համաշխարհային մշակութային էվոլյուցիային հարմարացնելու առումով. առաջնային արխաիկ քաղաքակրթությունների դերն իջեցվել է, իսկ ավատատիրությանը վերագրվել է մի մակարդակ, որին այն երբեք չի հասել[182]:

Մյուս կողմից, ինչպես նշում է ռուս հետազոտող Վ. Լինշան, որոշ առումներով խորհրդային ստադիալիստները հանդես էին գալիս որպես դասական էվոլյուցիոնիզմի (Է. Թեյլոր, Հ.Սպենսեր, Լ.Մորգան) ուղիղ ժառանգորդներ (վեր-

---

[180]**Венгеров** 2006: 18-19. **Лынша** 2001: 4-5. Մարքսիստական հայեցակարգի ժամանակակից վերաիմաստավորումը տե՛ս **Семенов** 2013.

[181]**Илюшечкин** 1996: 7.

[182] **Service** 1975: 36.

ընթաց միագիծ զարգացում, էվոլյուցիայի համապարփակ օրենքներ, միանշանակ ֆունկցիոնալ կապեր տեխնոլոգիական կառուցվածքի, սոցիալական կառուցվածքի և գաղափարախոսության միջև և այլն), բայց և ունեին որոշ տարբերություններ, որոնցից՝ առաջադիմության դիալեկտիկ մեկնաբանությունը որպես պարուրաձև վերընթաց թռիչքաձև զարգացում, դիֆուզիայի և միգրացիաների ժխտումը (տեղական ծագման տեսությունը, автохтонизм), պետության դասակարգային տեսությունը և արտադրական դետերմինիզմը[183]:

***Կ.Վիտֆոգելի «հիդրավլիկ փեսությունը»:***

Որպես մարքսիստական հայեցակարգի ևս մեկ ճյուղավորում նշենք Կ.Վիտֆոգելի ***«հիդրավլիկ փեսությունը[184]»***: Կարլ Աուգուստ Վիտֆոգելը (1886-1998 թթ.) գերմանական և ամերիկյան չինագետ, սոցիոլոգ և պատմաբան էր, մարքսիստական հայեցակարգի հետևորդ: Իր գլխավոր աշխատության՝ ***«Oriental despotism. A comparative study of total power»*** (Արևելյան բռնապետություն: Ամբողջատիրական իշխանության համեմատական ուսումնասիրություն [1957 թ.]) մեջ նա առաջ է քաշում հիդրավլիկ պետությունների տեսությունը, որի համաձայն ոչ եվրոպական հասարակարգերի հետամնացությունն ու բռնատիրությունը բացատրվում են ոռոգովի երկրագործության (կամ ցանկացած

[183]**Лынша** 2001: 4-5.

[184] «Հիդրավլիկ հասարակություն» հոմանիշներն են, ըստ Կ. Վիտֆոգելի, «արևելյան հասարակությունն» ու «ագրոկառավարչական հասարակությունը», ինչպես նաև «արևելյան բռնատիրությունը», տե՛ս **Wittfogel** 1957: 8.

այլ լայնածավալ հասարակական աշխատանքների) համար անհրաժեշտ սոցիալական կառույցների ազդեցությամբ[185]:

Կ. Վիտֆոգելն ընդգծում է աշխարհագրական պայմանների կարևորությունը. *«Հավասար ինստիտուցիոնալ պայմանների դեպքում բնական պայմանների առանձնահատկություններն են կանխորոշում կամ արգելակում տեխնոլոգիայի նոր ձևերի, գոյության միջոցների և սոցիալական վերահսկողության զարգացումը»*[186]:

Այդուհանդերձ, Կ.Վիտֆոգելը չի ընդունում միագիծ էվոլյուցիոն զարգացման հայեցակարգը[187], նա գտնում է, որ յուրաքանչյուր նման համակարգի կայացումը պայմանավորված է կոնկրետ աշխարհագրական և պատմական պայմաններով. դա չորային կլիման է, պոտենցիալ բերրի հողերը, ջրամատակարարման մատչելի և հուսալի աղբյուրները[188]: Նման համակարգը, չնայած իր չափսերին և դիմացկունությանը, շերտավորված հասարակությունների տեսակներից մեկն է միայն[189]:

Հողագործությունը, որը ենթադրում է հողային ռեսուրսների կամ մշակովի բույսերի հետ գործողություններ,

---

[185]Գրքում որպես ծայրահեղ բռնատիրության օրինակներ քննարկված են նաև խորհրդային և նացիստական ամբողջատիրական համակարգերը, որոնք ինչ-ինչ խնդիրներ լուծելու համար մոբիլիզացնում էին հասարակության ողջ ներուժը. Կ. Վիտֆոգելը համարում էր, որ ոռոգման խնդրի լուծումը մասնավոր դեպքերից մեկն է միայն: Այդ պատճառով Կ. Վիտֆոգելի աշխատությունները Խորհրդային Միությունում արգելված էին:

[186]**Wittfogel** 1957: 11, 18-19.

[187]**Ibid**: 7, 413.

[188]**Ibid**: 15.

[189]**Ibid**: 415. Հիդրավլիկ հասարակությունների տեսակների մասին տե՛ս **Ibid**: 226.

տարբերվում է այն հողագործությունից, որը պահանջում է ջրամատակարարման հետ կապված տեխնիկական խնդիրների լուծումներ (բուն հողագործական աշխատանքներ, ոռոգման համակարգի նախապատրաստական և ջրհեղեղների կանխարգելման աշխատանքներ[190]): Այն տեխնիկական խնդիր է, որը կամ հաղթահարվում է զանգվածային աշխատանքով, կամ չի հաղթահարվում առհասարակ[191]:

Բայց նույնիսկ այս պայմանների առկայության դեպքում էլ ջրային տնտեսության խոշոր համակարգերը չեն վերաճի հիդրավլիկ հասարակարգի, եթե նրանք առավել ընդարձակ, ոչ հիդրավլիկ համակարգի մի մասն են կազմում[192]:

Հիդրավլիկ հասարակության ձևավորման համար անհրաժեշտ է սոցիալական զարգացման այն մակարդակը, որը բարձր է արտադրող բնամթերային տնտեսության մակարդակից և ցածր է սեփականության վրա հիմնված արտադրական քաղաքակրթության մակարդակից[193]: Հիդրավլիկ աշխատանքների ազդեցությունը հասարակության վրա Կ. Վիտֆոգելը համեմատում է ծանր արդյունաբերության ազդեցության հետ. երկուսն էլ իրենց ազդեցությամբ համապարփակ են և ծանր, այդ իսկ պատճառով հիդրավլիկ հողագործության խոշոր համակարգերը կարելի է բնորոշել որպես *«ծանր հիդրոտեխնիկ կառույցներ»*[194]:

---

[190]**Wittfogel** 1957: 24.
[191]**Ibid**: 15.
[192]**Ibid**: 12, 18-19.
[193]**Ibid**: 12.
[194]**Ibid**: 27-28.

Հիդրավլիկ տնտեսության հիմնական բնութագիրներն են՝ աշխատանքի բաժանման հատուկ ձևը, մշակովի բույսերի աճեցման ինտենսիֆիկացումը, լայնամասշտաբ համագործակցությունը[195]:

Այս աշխատանքների արդյունավետ կառավարումը ներառում է կազմակերպչական ցանց, որն ընդգրկում է երկրի բնակչության դինամիկ միջուկը, որպես հետևանք՝ նրանք, ովքեր վերահսկում են այդ ցանցը, միանշանակ պատրաստ են գերագույն քաղաքական իշխանությունը յուրացնելուն, ընդ որում պատմական արդյունքի տեսակետից կարևոր չէ, թե հիդրավլիկ կառավարությունների ղեկավարները ի սկզբանե ինչ գործառույթներ են ունեցել՝ եղել են խաղաղ, թե՞ ռազմական առաջնորդներ, քրմեր, քուրմ-առաջնորդներ, թե՞ հիդրավլիկ աշխատանքները ղեկավարող պաշտոնյաներ[196]:

Վիտֆոգելի տեսությունը լայն արձագանք առաջացրեց: Մասնավորապես, Ռ.Ադամսը[197], համաձայնելով, որ մեծ է ոռոգմանը ուղեկցող սոցիալական գործոնների ազդեցությունը հասարակական կյանքի վրա (աշխատանքի բարձր արդյունավետություն, հավելյալ արդյունքը և աշխատուժը՝ այլ ոլորտներ մղելու հնարավորություններ), գտնում է, որ վիտֆոգելյան խիստ ավտորիտար (մենատիրական), կենտրոնացված և բյուրոկրատական համակարգը Միջագետքի

[195]**Wittfogel** 1957: 22.

[196]**Ibid**: 27.

[197]Միջագետքի և Կենտրոնական Ամերիկայի վաղ հասարակությունների հետազոտող, հնագետ Ռոբերտ Ադամս (Robert McCormick Adams Jr., 1926-2018):

համար նորմա չի եղել, և նման կառուցվածքով հասարակություն ձևավորվել է միայն ծայրահեղ իրավիճակներում[198]:

Ռ. Ադամսը գտնում է, որ ոռոգման համակարգի բարելավումները մեծամասամբ ոչ թե պլանավորված շինարարության արդյունք են, այլ բազմադարյա մանր ձևափոխումների և բարելավումների հետևանք: Առանձին ջրանցքները կարող էին կառուցել տեղական իշխանությունները, և չկան ապացույցներ, որոնք ենթադրեն պետության մասնակցությունը տեղական ջրաբաշխման և ջրաբաժանման գործընթացներում: Պետությունը կարող էր նախաձեռնել և միջոցներ հատկացնել ջրանցքների կառուցման համար, բայց դրանց իրագործումն իրականացվում էր տեղական միջոցներով[199]:

Ռ. Ադամսը նաև գտնում է, որ Վիտֆոգելը առաջին պլան է մղել բարդ փոխկապակցված համակարգի մի փոփոխականը, գտնելով, որ որոշիչ դեր են ունեցել ջրամատակարարման անհամաչափությունը և անկանխատեսելիությունը[200]: Միջագետքյան քաղաքների պատմությունն իրոք կարելի է դիտարկել որպես ջրի այդ պարբերական, անկանխատեսելի պակասին հարմարվելու փորձ[201]: Ոռոգման հետ կապված այդ անորոշությունները իրոք լուրջ խթան են հանդիսացել քաղաքների և նրանցում հիերարխիկ կազմակերպված ինստիտուտների, ինչպես նաև սոցիալական շերտավորման համակարգերի աճի համար:

[198]**Adams** 1981: 243.
[199]**Ibid**: 246.
[200]**Ibid**: 243.
[201]**Ibid**: 244.

Սակայն մյուս կողմից՝ ոռոգման անմիջական ազդեցությունը կենտրոնացված իշխանության աճի, իրավասությունների, ձևերի և այլնի վրա մեծ չի եղել[202]: Ոռոգման համակարգի և պետության հիմնական ինստիտուտները համագոյակցում էին, բայց նրանց սերտ փոխազդեցության կամ փոխկապակցվածության ապացույցները քիչ են, ավելի ճիշտ կլինի այդ ապացույցները դիտարկել ոչ թե որպես ոռոգման վերահսկողության միջոցով ավելի ընդարձակ քաղաքական լծակներ ձեռք բերելու ապացույցներ, այլ որպես փաստարկ հօգուտ այն բանի, որ ոռոգումը մեկն էր այն միջոցներից, որոնցով պետությունը փորձում էր ընդլայնել իր վերահսկողությունը գյուղական վայրերի հանդեպ[203]:

Կ.Վիտֆոգելի «հիդրավլիկ տեսությանը» անդրադարձել է նաև Ռ. Կարնեյրոն, որը նշել է, որ Վիտֆոգելի բերած օրինակներում՝ Միջագետքում, Չինաստանում և Մեքսիկայում, զարգացած պետությունն առաջացել է լայնամասշտաբ ոռոգման աշխատանքներից առաջ, ոչ թե հետո, հետևաբար, ոռոգումը չէր կարող պետականության ձևավորման պատճառ լինել, և այն չի խաղացել այն դերը, որը նրան վերագրում է Կ.Վիտֆոգելը[204]:

[202]**Adams** 1981: 248.
[203]**Ibid**: 246.
[204]**Carneiro** 1970: 734.

***Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակություն-ները մարքսիստական հայեցակարգի ներքո***

Խորհրդային մարքսիզմի դոգմատիկ համակարգը գերակայող էր խորհրդային և խորհրդահայ պատմագիտության մեջ մինչև ԽՍՀՄ փլուզումը: Ըստ այդմ էլ Հայկական լեռնաշխարհի վաղնջագույն պետականությունների առաջացումը քննարկվել և ուսումնասիրվել է հենց այդ ծիրում: Հայկական լեռնաշխարհի վաղ պետական միավորումները (Հայասա, Իսուվա, Ալզի) խորհրդային պատմագիտության մեջ հանդես են գալիս *«ցեղային միություն»* և *«ռազմական դեմոկրատիա»* բնորոշումների ներքո:

Մինչև 1920 թ. Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների սոցիալ-հասարակական տիպաբանության հարցերը չեն արծարծվել: Այս խնդրին չի անդրադարձել նաև Ն.Ադոնցը, բացառությամբ Խուկկանայի և Սուպպիլուլիումաս I-ի կարգավիճակային հավասարության մասին դրույթից, որն այժմ հերքվում է[205]: Արդեն խորհրդային պատմագիտությունը, որն ամբողջապես գործում էր մարքսիստական հայեցակարգի շրջանակներում, Հայկական լեռնաշխարհի վաղ պետական միավորները դասեց

[205]**Քոսյան** 2016: 130: Հ. Մանանդյանը նույնպես չի անդրադարձել Հայասային, Իսուվային և այլ վաղ պետական միավորներին: Նա գրում է արմենների սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին, Քսենոփոնի նկարագրած Արմենիային վերագրելով *«փոխմային հարաբերությունների որոշ բեկում և փոխմապետների ու առաջնորդների իշխանության և հեղինակության ուժեղացում»* (տե՛ս **Մանանդյան** 1977:68)՝ *«հին արմենները, ինչպես և մ.թ.6-7-րդ դարերում հին սլավոնները, գտնվել են «ռազմական դեմոկրատիայի» այն ընթացաշրջանում, որը հիշապակված է Էնգելսի մոտ»* (նույնը, էջ 88):

մարքսիստական *«ռազմական դեմոկրատիայի»* և *«ցեղային միության»* փուլին. այդ կազմավորումներում դեռևս մեծ է տոհմական ավագանու կամ ծերակույտի դերը, և, ըստ ուսումնասիրողների, առաջնորդի իշխանությունն էլ դեռևս ամուր հիմքեր չուներ:

Հավելյալ կռվան գիտնականների համար դարձավ արխաիկ հասարակություններին բնորոշ իրավական որոշ նորմերի առկայությունը Հայասայում, մասնավորապես սորորատի իրավունքը: Այս տեսակետն է ներկայացված Գր.Ղափանցյանի[206], Ի.Դյակոնովի[207] և Գ.Մելիքիշվիլիի[208] աշ-

---

[206]**Капанцян** 1947: 116.

[207]Մասնավորապես, Դյակոնովը նշում է, որ *«Հայասա-Ազզին պետք է դիտարկել որպես ցեղային միություն, չնայած խեթական աղբյուրը նրա կառավարչին անվանում է «թագավոր»: Համենայն դեպս, Հայասայի «թագավորի» հետ մեկտեղ պայմանագրերում որպես հավասար իրավունքներով օժտված կողմ նշված է Հայասայի ժողովուրդը, ըստ երևույթին ցեղային ժողովրդական ժողովը»* (տե՛ս **Дьяконов** 1968: 81): Նույն կարծիքն է արտահայտված նաև «История Древнего Востока» (այսուհետ՝ ИДВ) երկհատորյակում (հեղինակներ՝ Ի. Դյակոնով, Վ.Արծինբա, Ն.Յանկովսկայա). *«Կարծես թե Հայասան, չնայած որ իր կառավարիչն արքայական փիփղոս ուներ, դեռևս նախնադարյան հասարակության մակարդակի վրա էր»* (տե՛ս **ИДВ** 1988: 146): Նշենք, որ Հայասայի կառավարչին խեթական արքան ընդամենը մեկ անգամ է անվանում թագավոր: Մյուս բոլոր դեպքերում օգտագործվում է “հայասացի” եզրույթը:

[208]Գ.Մելիքիշվիլին, անդրադառնալով Հայասայի հասարակական զարգացման մակարդակին, համարում է, որ «Հայասայի մարդկանց» որպես պայմանագրի կողմ նշելն ապացույցն է այն բանի, որ հայասական հասարակությունը դեռ դուրս չէր եկել զարգացման նախնադարյան-համայնական փուլից: Նա համադրում է Հայասայի հասարակական ինստիտուտները կասկերի ռազմական դեմոկրատիայի հետ, որն ուներ իր ինստիտուտները՝ ցեղային ժողով, ցեղային ավագանու ժողով, ոչ ժառանգական իշխանությամբ օժտված առաջնորդ: Ըստ այդմ, կասկերի մոտ այս ընթացքում ցեղի առաջնորդը վերածվում է սուվերեն և ժառանգաբար կառավարող կառավարչի, ինչը նաև ենթադրում է հասարակության սոցիալ-տնտեսական շերտավորում, ազատ համայնականների հիմնական զանգ-

խատանքներում: Առավել հանգամանալից այս խնդրին անդրադարձել է Լ.Բարսեղյանը[209]: Մասնավորապես, նա գտնում է, որ Հայասայում *«թագավորը չնայած խոշոր հարստություն էր կուտակել, այնուամենայնիվ, սուվերեն ժառանգական իրավունքից ամբողջովին չի կարողանում օգտվել: Նրա իրավունքները սահմանափակվում են ավագանու խորհրդի կողմից»*[210]: Ըստ Լ.Բարսեղյանի, Սուպպիլուլիումասը, քրոջը Խուկկանային կնության տալով, ցանկանում էր ապահովել նրա որդիների ժառանգական իրավունքները: Դա է պատճառը, որ նա «Հայասայի մարդկանցից» պահանջում է հաշվի առնել այդ հանգամանքը:

«Հայասայի մարդկանց» կամ ցեղային ավագանուն Լ.Բարսեղյանը մեծ դեր է վերագրում. *«Տեղային ավագանուն կամ ավագների խորհրդին էր վերապահված ցեղային միության առաջնորդի ընտրությունների անցկացումը, նրա իրավունքների և գործունեության վերահսկումը, իշխանազուրկ անելը և նոր թեկնածուի առաջադրումը:*

*Խեթական արձանագրություններում հիշատակվող «Հայասայի մարդիկ» և «Երկրի ավագները»* (LÚ$^{MEŠ}$ ŠU.GI

---

վածից ազնվականական խավի առանձնացում և այլն: Ընդ որում, չնայած այդ մակարդակի վրա է Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան հատվածի շրջանների մեծ մասը, բայց ահա Հայասայում, ըստ Մելիքիշվիլիի, այդ գործընթացն ավելի է առաջ գնացել, իսկ դատելով Խուկկանայի պայմանագրում տեղ գտած Սուպպիլուլիումասի (նաև իր հնարավոր ժառանգների) խոստումից հավատարիմ մնալ Խուկկանային, եթե վերջինս իր հերթին հավատարիմ մնա Սուպպիլուլիումասին և իր որդիներին, կարելի է ենթադրել, որ Խուկկանայի իշխանությունն արդեն ժառանգական բնույթ էր կրում, տե՛ս **Меликишвили** 1959: 170-171:

[209]**Բարսեղյան** 1963: 103-106: Բարսեղյան 1964: 78:

[210]**Բարսեղյան** 1963: 102:

KUR[TI]) *ակտիվորեն մասնակցում և միջամտում էին ոչ միայն միության ներքին, այլև արտաքին գործերին: Նրանք կարող էին ազդել պատերազմների ընթացքի վրա, զինադադար կնքել, բանակցությունների մեջ մտնել թշնամու հետ»*[211]: Այս արտահայտությունը պետք է հասկանալ միմիայն որպես ցեղային ավագանի. այն, ըստ Լ. Բարսեղյանի, որևէ կապ չի կարող ունենալ ողջ հայասական ժողովրդի հետ[212]:

Մարքսյան հայեցակարգի շրջանակներում են նաև ***«Հայ ժողովրդի պատմության»*** ակադեմիական հրատարակության առաջին հատորի՝ սոցիալական հարաբերությունների զարգացմանը վերաբերող հատվածները: Փոքր Ասիայի արևելյան հատվածի քաղաք-պետությունները և Թեգարամա, Մելիդու և Կումմուխու քաղաք-պետություններն, ըստ հեղինակների, գտնվում են *«ռազմական դեմոկրատիայի»*[213] փուլում, և նրանց առաջնորդները առաջին անգամ «թագավոր» են անվանված ասսուրական տարեգրություններում՝ մ.թ.ա. XIII դարի վերջում[214]:

Որպես պետականաստեղծ ազդակ դիտարկվում են պատերազմները[215]. զինական հաճախակի բախումները և երկրի քաղաքական անհանգիստ վիճակը բարձրացնում էր տոհմացեղային ավագանու դերն ու հեղինակությունը, դարձնում նրա իշխանությունն ավելի հաստատուն և տևա-

---

[211]**Բարսեղյան** 1963: 104:
[212]**Նույնը**: 106:
[213]**Մարտիրոսյան** 1971: 229:
[214]**Դյակոնով, Երեմյան** 1971: 195, 196:
[215]**Պիոտրովսկի** 1971: 284:

կան[216], *«զինված ջոկատները ամրապնդում էին ցեղային ավագանու դիրքերը հասարակության մեջ, որով փաստորեն ներկայանում էր պարզունակ պետական իշխանության սաղմը, դեռևս սոցիալական խոր անկում ապրող տոհմացեղային կարգերի ընդերքում»*[217]: Իր նշանակությունն է ունեցել նաև որոշ շրջանում համայնքի ներուժի կուտակման գործոնը. *«Հայկական լեռնաշխարհում, արտաքին ներխուժումներից զերծ գրեթե երկուհարյուրամյա զարգացումը հնարավորություն ստեղծեց դասակարգային հասարակության ձևավորման և պետական կազմավորումների առաջացման համար»*[218], իշխող խավի առանձնացումը. *«Հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ տոհմացեղային ավագանին առանձնացել էր որպես հասարակական իշխող խավ..., ավագանու խավին էին պատկանում ոչ միայն ռազմական ավագանու ներկայացուցիչները, այլև քուրմերի, անասնապահների և արհեստավորների նախապետական այն ընտանիքները, որոնք բարձր եկամուտներ էին ստանում մասնագիտացված արհեստագործության մթերքների փոխանակման ու առևտրի միջոցով»*[219]:

Հետխորհրդային շրջանում հայ պատմագիտության մեջ մարքսիստական էվոլյուցիոնիստական տիպաբանության հարցեր չեն քննարկվել[220]:

---

[216]**Մարտիրոսյան** 1971: 223:

[217]**Նույնը:** 224, 228.

[218]**Դյակոնով** 1971: 292:

[219]**Մարտիրոսյան** 1971:224:

[220]2010 թ. Արատտայի պետություն կամ նախապետություն լինելու հարցի վերաբերյալ լույս է տեսել Ա.Մովսիսյանի և Ե.Դանիելյանի «Հայկական լեռնաշխարհում պետականության սկզբնավորման խնդրի շուրջ» հոդվածը,

## ԳԼՈՒԽ II

## ՊՈԼԻՏՈԳԵՆԵԶԻ ՆԵՈԷՎՈԼՅՈՒՑԻՈՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ

### *Գորդոն Չայլդ*

XX դարի առաջին տասնամյակներին Ֆ.Բոասի դպրոցի գերակայության պատճառով էվոլյուցիոնիզմը դուրս մնաց արևմտյան գիտական շրջանակներից: Գիտական բանավեճերի հարթություն այն վերադարձրեցին Գորդոն Չայլդը, Լեսլի Ուայթն ու Ջուլիան Սթյուարդը:

Բրիտանացի պատմաբան Գ.Չայլդը (1892-1957) XX դարի մեծագույն հնագետներից մեկն էր: Նա մարքսիստ էր և սերտ հարաբերություններ ուներ խորհրդային գործընկերների հետ, մի քանի անգամ այցելել էր ԽՍՀՄ, այդուհանդերձ բուն մարքսիստական հայեցակարգի հետևորդ էր, ոչ թե ստալինյան վուլգար մարքսիզմի:

Գ.Չայլդի գիտական ժառանգությունը ներառում է թե՛ հնագիտական[221], թե՛ գիտահանրամատչելի[222] աշխատություններ: Նրա առաջին աշխատությունները (մասնավորա-

---

որտեղ բերված են պետության իրավական հանրագիտարանային բնորոշումները, տե՛ս **Մովսիսյան, Դանիելյան** 2010.

[221]The Dawn of European Civilization (1925), The Danube in Prehistory (1929), Prehistory of European Society (1957), The Bronze Age (1930), New Light on the Most Ancient East (1935) և այլն:

[222] Man Makes Himself (1936), What Happened in History (1942), տե՛ս **Tringham** 1983: 86.

պես՝ «The Dawn of European Civilization», Եվրոպական քաղաքակրթության հիմքերը, 1925) բրիտանական դիֆուզիոնիզմի շրջանակներում էին. Գ. Չայլդը համարում էր, որ տեխնոլոգիական և մշակութային նորամուծությունները Եվրոպա են եկել Առաջավոր Ասիայից:

Գ.Չայլդը արհեստական էր համարում բախումը էվոլյուցիոնիզմի և դիֆուզիոնիզմի միջև՝ պնդելով, որ «էվոլյուցիա» եզրույթը չի հավակնում մշակութային փոփոխությունների մեխանիզմի նկարագրությանը: *«Էվոլյուցիան չի բացատրում, թե ինչու են մշակույթները փոխվում – դա պատմության խնդիրն է, այլ բացատրում է, թե ինչպես են նրանք փոխվում»*[223].

Գ.Չայլդը պնդում էր, որ եթե ուսումնասիրության առանցքում լինեն պատմական ամենամանր դետալները, ապա դժվար կլինի վեր հանել պատմական օրինաչափությունները, բայց եթե մի կողմ քաշվել և նայել պատմությանը առավել լայնախոհ հայացքով, այդ օրինաչափությունները ինքնըստինքյան կերևան[224]:

Սոցիալական զարգացումն, ըստ Գ. Չայլդի, երկրագնդի տարբեր մասերում ընթացել է դիվերգենցիայի[225], այլ ոչ թե զուգահեռականության սկզբունքով, ինչը սակայն, չի

[223]**Childe** 1951: 14.

[224]**Sanderson** 1997: 94.

[225]Դիվերգենցիա՝ *էվոլյուցիայի ընթացքում օրգանիզմների հատկանիշների տարամիտում,* կոնվերգենցիա՝ *օրգանիզմների արտաքին կամ ներքին կառուցվածքի հատկանիշների միանմանությունը, որը հիմնված է ոչ թե ծագման միասնություն, այլ գոյության նման պայմաններին հարմարվելու վրա,* տե՛ս Աշոտ Հայրապետյան, Օտար Բառերի Բառարան, online http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=114

ժխտում ո՛չ էվոլյուցիա եզրույթի կիրառումը սոցիալական զարգացման պարագայում, ոչ էլ ենթադրվող նմանություն-ները սոցիալական և օրգանական էվոլյուցիաների միջև[226]:

Գ.Չայլդը փորձեց տարբերակել կենսաբանական և մշա-կութային էվոլյուցիաները, ընդգծելով առաջինի դիվերգեն-տիվ բնույթը, իսկ երկրորդի դեպքում՝ դիֆուզիայի և կոն-վերգենցիայի նշանակությունը[227]: Ըստ Գ.Չայլդի, հնագիտա-կան տվյալների աչքի ընկնող գիծը տարբերակումն է՝ խոշոր միատարր մշակույթների տրոհումը առանձին տեղական մշակույթների, սակայն ի մի բերված հաջորդականություն-ների համեմատությունը ի հայտ է բերում ոչ միայն դիվեր-գենցիա և տարբերակում, այլև կոնվերգենցիա և ձուլում:

*«Բնական ընտրությունը հանգեցնում է տվյալ ոլորտում ասիմիլյացիայի՝ բազմաթիվ տարատեսակների բացառման (էլիմինացիա) ճանապարհով միևնույն տեսակի շրջանակնե-րում: Երբ միևնույն տեսակի տարբեր գենետիկ խմբերը մրցակցում են տվյալ շրջանի սահմանափակ բնական ռե-սուրսների համար, վաղ թե ուշ առավել հարմարված խումբը կվերացնի բոլոր մրցակիցներին»*[228]:

Չայլդը գիտական շրջանառության մեջ վերադարձրեց մորգանյան *«վայրենություն – բարբարոսություն – քաղա-քակրթություն»*[229] բաժանումը, որին, հնարավոր է, փորձեց համապատասխանեցնել իր երեք էվոլյուցիոն փուլերը՝ պա-

---

[226]**Childe** 1951: 168.
[227]**Upadhyay&Pandey** 1993: 26.
[228]**Childe** 1951: 168-169, տե՛ս նաև 162-163.
[229]Մորգանյան սխեմայի մասին տե՛ս **Лынша** 2001: 4.

լեոլիթը, նեոլիթն ու ուրբանիզացիան[230], տվեց «մշակույթ» եզրույթի իր մեկնաբանումը. *«Առանձին մարդկային անհատը չէ, որ հարմարվում է միջավայրին, այլ մարդկային հասարակությունն է կարգաբերվում, շրկվում, և այդ շրկումն է որ կոչվում է մշակույթ: Իր հերթին առանձին մարդը որոշվում է իր հասարակության մշակույթով»*[231]: Այդուհանդերձ, Գ.Չայլդը ավելի հակված էր դեպի բազմագիծ, քան դեպի Լ.-Մորգանի միագիծ էվոլյուցիան[232]:

Գ.Չայլդը գտնում էր, որ տնտեսական գործունեության վկայությունները չափազանց քիչ են, և դժվար է դրանց վրա հենվելով տալ վաղ հասարակությունների պարբերականացումը[233], սակայն, այնուամենայնիվ, առաջարկեց երկու կարևոր և ընդհանրացնող հայեցակարգեր, որոնք են *«նեոլիթյան»* և *«քաղաքային հեղափոխությունները»*՝ քաջ գիտակցելով նման ընդհանրացումների դրական և բացասական կողմերը և կիրառման շրջանակները[234]: Հեղափոխություն եզրույթը տվյալ դեպքում նշանակում է *«ոչ թե հանկարծակի բռնի աղետ, այլ փնփեսական և սոցիալական համակարգերում պրոգրեսիվ փոփոխությունների գագաթնակետ»*[235]:

Նեոլիթն, ըստ Գ.Չայլդի, առանցքային է հողագործական-անասնապահական կենսակերպին անցնելու և մարդկության համար արմատական, հեղափոխական հետևանք-

[230]**Smith** 2009: 5.
[231]**Childe** 1979: 94.
[232]**Orenstein** 1954: 202. **Лынша** 2001: 10.
[233]**Childe** 1979: 95.
[234]**Лынша** 2001: 9.
[235]**Childe** 1950: 3.

ների ծավալման առումով[236]: Փոփոխությունների պատճառն, ըստ նրա, պլեյստոցենի դարաշրջանի վերջում տեղի ունեցող կլիմայական փոփոխություններն էին, որոնց արդյունքում մարդկությունը ստիպված էր սննդի նոր աղբյուրներ փնտրել[237]: Ընդ որում չկա մեկ միասնական նեոլիթյան մշակույթ, կան բազմաթիվ տեղական մշակույթներ[238]: Նեոլիթյան բնակավայրերի ընդարձակման, տրոհման արդյունքում տոհմերի մի մասը ենթարկվում էր մյուսներին, ինչը հանգեցնում էր կլանային և ազգակցական կապերի քայքայմանը և դասակարգային հասարակության ստեղծմանը[239]: Մյուս կողմից, նեոլիթյան ինքնաբավ համայնքները ի վիճակի չէին սննդի ավելցուկի բավարար քանակ ապահովել՝ երաշտի և այլ խնդիրների դեպքում գոյատևելու համար: Այս երկու ճգնաժամային իրավիճակները լուծելու եկավ հաջորդ փուլը՝ *«քաղաքային հեղափոխությունը»*[240]:

Տեխնոլոգիական հայտնագործությունները՝ մետաղագործությունը, անիվը, սայլը, խոշոր եղջերավոր բեռնակիր կենդանիները, հասարակական ավելցուկի մշտական աճը[241] դարձան տնտեսական նոր համակարգի հիմքը և հանգեցրին *«քաղաքային հեղափոխության»*[242]: Եթե *«նեոլիթյան հեղափոխությունը»* զուգակցում էր տեխնոլոգիական ձեռքբերումները սոցիալական վերափոխումների հետ, ապա *«քա-*

[236]**Childe** 1923: 48.
[237]**Ibid**: 48.
[238]**Ibid**: 62.
[239]**Ibid**: 88.
[240]**Ibid**: 68.
[241]**Childe** 1950: 6.
[242]**Childe** 1923: 89.

*ղաքային հեղափոխությունը»* համարյա ամբողջությամբ սոցիալական ինստիտուտների ձևափոխում էր[243]:

Այդ փուլն, ըստ Գ.Չայլդի, սկսվում է Նեղոսի, Տիգրիսի և Եփրատի ալյուվիալ հովիտներում. հասարակությունը ստիպում էր հողագործներին սննդի ավելցուկ արտադրել և կուտակում էր դրանք՝  քաղաքներում կուտակված արհեստավորներին, առևտրականներին, քրմերին և պաշտոնյաներին ապահովելու համար[244]: Ձևավորվում է սոցիալական նոր օրգանիզմ՝ քաղաքակրթություն, իր հեռու գնացող հետևանքներով և ազդեցությամբ:

Մասնագետների մի մասը պնդում էր, որ Գ.Չայլդի առանձնացրած երկու «հեղափոխությունների» միջև ընկած տևական ժամանակային փուլը ևս նշանավորվեց տնտեսական և սոցիալական բարդության լրացուցիչ թռիչքով, ինչը նույնպես կարելի է հեղափոխություն համարել: Առաջարկվել է *«երկրորդական ապրանքների հեղափոխություն»* եզրույթը (Andrew Sherratt), ինչը ընդգծում էր կախվածությունը կենդանական ծագման երկրորդական ապրանքներից (կաթ, բուրդ, լծկան ուժ), իսկ Քենթ Ֆլանններին ենթադրեց, որ նախապետական բարդ հասարակությունների՝ ցեղապետությունների (chiefdom) զարգացման շրջանը նույնպես պետք է հատկորոշել որպես առանձին սոցիալական հեղափոխություն[245]:

Գ.Չայլդն առանձնացնում է քաղաքակրթության տաս չափանիշներ, դրանք են.

[243]**Smith** 2009: 7.
[244]**Childe** 1923: 24.
[245]**Smith** 2009: 8.

1. ընդարձակ, խոշոր, խիտ բնակեցված քաղաքներ (7000-20000 բնակչությամբ),

2. սննդի արտադրությունից ազատված և քաղաքներում բնակվող դասակարգեր՝ արհեստավորներ, առևտրականներ, բեռնակիրներ (transport workers), պաշտոնյաներ, քրմեր,

3. հավելյալ արդյունք, որը կուտակում է ավագանին,

4. կոթողային հասարակական կառույցներ,

5. կառավարող դասակարգի (քրմեր, ռազմական և քաղաքական ղեկավարներ) ձևավորում,

6. գրի և տարրական մաթեմատիկայի առաջացում,

7. տոմարի և մաթեմատիկական գիտությունների (հանրահաշիվ, երկրաչափություն, աստղագիտություն) զարգացում,

8. գեղարվեստի տեսանկյունից կոնցեպտուալ և բարդ ոճերի առկայություն,

9. արտաքին միջազգային առևտուր,

10. հասարակության համախմբում մեկ միասնական օրգանիզմի՝ պետության մեջ, դրանից բխող բոլոր հետևանքներով (տարածքային, այլ ոչ թե ազգակցական միավորում, հարկեր, բնակիչների փոխլրացնող և միասնականությունը ապահովող գործառույթներ)[246]:

Գրի հայտնագործումն, ըստ Գ.Չայլդի, համընկնում է համայնքի պրոգրեսիվ ընդարձակման և սոցիալական հավելյալ արդյունքի կուտակման կրիտիկական կետի հետ, այն համայնքի չափերի, տնտեսության և սոցիալական կազմա-

[246]**Childe** 1950: 9-16.

կերպության հեղափոխական փոփոխման առավել հստակ ցուցիչն է[247]:

Գ.Չայլդին հաջողվեց ստեղծել հասարակական զարգացումը նկարագրող կարևոր մոդելներ: Այդուհանդերձ նրա հայեցակարգի մի շարք դրույթներ վերանայման կարիք ունեն, մասնավորապես՝ նեոլիթի չափորոշիչների (արտադրող տնտեսության, խեցեգործության թվագրության ճշգրտում), նեոլիթի՝ էվոլյուցիոն կամ հեղափոխական բնույթ ունենալու, քաղաքակրթության պարտադիր 10 չափանիշների, առաջավորասիական դիֆուզիոնիզմի և այլ հարցերի հստակեցման կամ նորովի մեկնաբանության առումով:

Սակայն պետք է ասել, որ չնայած քաղաքակրթության տաս չափանիշները քննադատվել են իրենց միջև ֆունկցիոնալ կապերի բացակայության և գործընթացների և ինստիտուտների միջև թույլ փոխկապակցվածության պատճառով[248], և այժմ *«քաղաքային հեղափոխության»* փոխարեն նախընտրում են օգտագործել «պետականության առաջացում», «առաջնային պետական կազմավորում», «արխաիկ պետություն» եզրույթները[249], այնուամենայնիվ Գ.Չայլդի բազային մոդելը հնագույն պետությունների մասին հնագիտական տվյալների առաջին բովանդակային սոցիալական սինթեզն էր, և առ այսօր այն շարունակում է մնալ վաղ քաղաքների և պետականությունների նկարագրողական սխեմաների հիմքը[250]:

---

[247]**Childe** 1951: 24.
[248]**Smith** 2009: 11.
[249]**Ibid**: 15-16.
[250]**Ibid**: 22.

### *Լեսլի Ուայթ*

Լ. Ուայթը (1900-1975 թթ.) ամերիկյան նեոէվոլյուցիոնիզմի դպրոցի մյուս հայտնի ներկայացուցիչն է: Ժամանակին նա եղել է Ֆ.Բոասի դպրոցի հետևորդը, սակայն սեփական պրպտումների և դասական էվոլյուցիոնիստական աշխատություններին ծանոթանալուց հետո հարել է էվոլյուցիոնիստական դպրոցին՝ հետագայում մեծ ներդրում ունենալով ամերիկյան գիտության մեջ էվոլյուցիոն ավանդույթը վերականգնելու և էվոլյուցիոն տեսության կարևորությունն ընդգծելու մեջ[251]:

Լ.Ուայթը բազմաթիվ աշխատություններ[252] է գրել, որոնցում քննարկում է էվոլյուցիոնիզմի պատմությունը և կապը դիֆուզիոնիզմի, ֆունկցիոնալիզմի և պատմականության հետ, հերքում ամերիկյան գիտական շրջանակների հակաէվոլյուցիոնիստական դրույթները և փորձում էր վերականգնել Լ.Մորգանի և Ժ.Բալանդյեի գիտական ժառանգության հանդեպ հարգանքը[253]: Նման կեցվածքի պատճառով զգալի տուժեց Լ.Ուայթի գիտական կարիերան, սակայն մյուս կողմից՝ Լ.Ուայթը ամերիկյան նեոէվոլյուցիոնիզմի միակ ներկայացուցիչն էր, որին ընդունում էին Խորհրդային Միությունում:

---

[251]**Sanderson** 1997: 113.

[252]The Science of Culture: A Study of Man & Civilization (1949), The Evolution of Culture (1959), The Concept of Culture (1973), and The Concept of Cultural Systems: A Key to Understanding Tribes & Nations (1976), ռուսերեն թարգմանությամբ՝ **Уайт** 2004, 2004a, 2004b.

[253]**Джонсон, Эрл** 2017: 17 (примечание № 18).

Էվոլյուցիայի հայեցակարգը, ըստ Լ.Ուայթի, գիտական ուսումնասիրությունների դաշտի առավել նշանակալից և արգասաբեր տեսություններից է[254]: Էվոլյուցիոն գործընթացը, ինչպես և պատմականը, դիախրոնիկ բնույթ ունի, անկասելի է և անկրկնելի: Էվոլյուցիոն և պատմական մոտեցումների տարբերությունն այն է, որ առաջինն իր բնույթով նոմոտետիկ[255] է, երկրորդը՝ իդիոգրաֆիկ[256]:

Լ.Ուայթի ունիվերսալ էվոլյուցիոնիզմն անհրաժեշտ է դիտարկել մշակույթի մասին նրա պատկերացումների հենքի վրա: Նա գտնում էր, որ մշակույթի գործառույթը հետևյալն է. այն կարգավորում է մարդու, որպես կենդանական տեսակի, բնակության բնական միջավայրին հարմարվելը: Մշակույթն է դինամիկայի խթանիչը, և ըստ այդմ անհրաժեշտ է տարբերակել մշակույթի երեք հորիզոնական շերտեր. 1) *տեխնոլոգիական* (բնության հետ հարաբերությունների համար պատասխանատու), 2) *սոցիալական* (մարդկանց հետ հարաբերությունների համար պատասխանատու), 3) *փիլիսոփայական*, որի մեջ ամփոփված են այն նախադրյալները, որոնց հիման վրա իրագործվում է մարդկային կյանքը իր տեխնոլոգիական և սոցիալական ասպեկտներով[257]:

Ըստ Լ.Ուայթի՝ մշակույթի միջոցով է, որ մարդը կարողանում է արտաքին միջավայրից էներգիա ստանալ և կլա-

---

[254]**Уайт** 2004a: 500.

[255] Վ. Վինդելբանդի և Հ. Ռիկերտի առաջարկած մոտեցումներն են, որոնցից նոմոտետիկը ընդհանուր օրինաչափությունների, իսկ իդիոգրաֆիկը՝ առանձնահատկությունների վերհանումն է:

[256]**Уайт** 2004c: 81.

[257]**Уайт** 2004b: 596.

նել: Նա գտնում է, որ գոյություն ունի սերտ կապ մատերիայի կազմակերպման աստիճանի և էներգիայի համակենտրոնացման միջև, քանի որ էներգիայի ցրված վիճակի հետեվանքով ընկնում է մատերիայի կազմակերպման աստիճանը, ապա և ընդհակառակը՝ համակարգի կազմակերպման աստիճանն աճում է այն բանին զուգընթաց, երբ ուժեղանում է էներգիայի համակենտրոնացումը համակարգում. *«Սոցիալական համակարգերը՝ բնության ուժերի հանդեպ տեխնոլոգիական վերահսկողության սոցիալական ձևն են: Այդ իսկ պատճառով սոցիալական էվոլյուցիան տեխնոլոգիական զարգացման գործառույթն է»[258]:*

Մշակույթի պատմությունը մեկ շնչին բաժին ընկնող էներգիայի քանակի մշտական աճն է, էներգիայի ստացման տեխնոլոգիայի հետագա կատարելագործումը: Զարգացման գործընթացի դինամիկան, ըստ Լ.Ուայթի, բարդ սոցիալական համակարգերի՝ արտաքին և ներքին փոփոխվող պայմաններին հարմարվելու ունակության արտահայտումն է:

Պետականության առաջացումն, ըստ Լ.Ուայթի, արտաքին սոցիալական և ներսոցիալական զարգացման շղթայի մի օղակն է: Գործընթացն, ըստ Լ.Ուայթի, սկսվում է 1) հողագործության և անասնապահության արտադրած սննդամթերքի ավելացման հնարավորությունից, այնուհետև 2) բնակչության թվի աճը հանգեցնում է սննդի արտադրության աճին, որն իր հերթին էլ ավելի է խթանում բնակչության աճը, 3) սննդի արտադրողականությունը գյուղատնտեսության զարգացմանը զուգընթաց աճում է, 4) բնակչության աճի

[258]**Уайт** 2004с: 198-199.

արդյունքում հասարակությունը կառուցվածքի տեսակետից ավելի տարբերակված և ֆունկցիոնալ տեսակետից մասնագիտացված է դառնում, 5) որպես նախորդի հետևանք՝ փոխվում է տնտեսական համակարգը, 6) վերոնշյալ գործոնները հանգեցնում եմ հատուկ քաղաքական մեխանիզմի՝ ***«եկեղեցի-պետության»*** (church-state) առաջ գալուն: Այդ մեխանիզմն է որ կոորդինացնում է հասարակության տարբեր մասերի և ֆունկցիաների ինտեգրումը մեկ միասնական ամբողջության մեջ, դա է թույլ տալիս ապահովել հարկադրանքը, ստիպել սնունդ արտադրողներին արտադրել ավելին քան հարկավոր է կամ որ ի վիճակի են սպառել, 7) վերոհիշյալ գործընթացների արդյունքում հասարակությունը բաժանվում է տիրող և հպատակ դասակարգերի, և քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացմանը զուգընթաց կազմալուծվում է ցեղային համայնքը[259]:

Քաղաքական տրանսֆորմացիային նպաստող գործոններ Լ.Ուայթը համարում է մասնավոր սեփականության ի հայտ գալն ու պատերազմը: ***«Եկեղեցի-պետության»*** ձևավորվելու հիմքում, ըստ Լ.Ուայթի, հասարակության նոր ձևի կայացման գործընթացն է: Այդ նոր համակարգը երեք խնդիր պետք է լուծի. 1) համաձայնեցնի, վերահսկի և միավորի նոր սոցիոմշակութային համակարգի տարբեր մասերի տարբեր հասարակական աշխատանքները և համայնքային միջոցառումները (ոռոգում, հասարակական հաստատություններ, տաճարներ, փոխադրամիջոցներ, հասարակական շուկաներ, դրամական համակարգեր և այլն), տարբեր սո-

---

[259]**Уайт** 2004c: 359-360.

ցիալական կառուցվածքները (օրինակ՝ արտադրական, քրմական, ռազմական պրոֆեսիոնալ խմբեր), 2) հաշտեցնի տիրապետող և կախյալ դասակարգերը, 3) պահպանի հասարակության անկախությունը[260]. *«Այս այն հատուկ մեխանիզմը, հատուկ քաղաքական միջոցը կոորդինացիայի, ինտեգրման, կարգավորման և վերահսկողության համար, մենք անվանում ենք եկեղեցի-պետություն»[261]:*

Ըստ Լ.Ուայթի, սոցիոմշակութային էվոլյուցիայի համար ***«եկեղեցի-պետությունը»*** նույնն է, ինչ ուղեղն ու կենտրոնական նյարդային համակարգը կենսաբանական էվոլյուցիայի համար[262]:

Լ.Ուայթի հայեցակարգը քննադատվել է թե՛ չափից դուրս մեծ վերացարկվածության, թե՛ հին տիպաբանությանը (քարե, բրոնզե և երկաթե դարաշրջաններ) վերադառնալու պատճառով. այդ մոդելը նկարագրում է գործիքների տեսակները, բայց չի աշխատում, երբ խոսք է գնում յուրաքանչյուր տեսակում առկա հասարակությունների բազմազանության մասին[263]:

Ս.Սանդերսոնը գտնում է, որ Լ.Ուայթի դրույթն այն մասին, որ էվոլյուցիայի օրենքները պետք է կիրառել «մշակույթի՝ որպես ամբողջության» հանդեպ, պարզ չէ, քանի որ Ուայթը չի մանրամասնում այդ հասկացության գոյաբանական կարգավիճակը[264]:

---

[260]**Уайт** 2004с: 368-369.
[261]**Там же.**
[262]**Там же**: 369.
[263]**Джонсон, Эрл** 2017: 18-19.
[264]**Sanderson** 2007: 115.

Ուայթի քննադատները գտնում էին, որ անհնար է սոցիալական էվոլյուցիան պայմանավորել ավելցուկով: Փիրսընը համարում էր, որ անհնար է որոշել ապրուստի համար անհրաժեշտ մինիմումի ֆիքսված չափը, քանի որ *«փնփեսությունը չունի ավելցուկ»*[265], եթե այդ ավելցուկը լինի էլ, ապա դրա ուղղումը դեպի հստակ ոլորտ պայմանավորված է սոցիալական ենթատեքստով:

***Ջուլիան Սթյուարդ***

Սոցիալական էվոլյուցիոնիզմի հետագա զարգացման համար բեկումնային դարձավ Ջ.Սթյուարդի (1902-1972) ***«բազմագիծ էվոլյուցիայի»*** հայեցակարգը: Ջ.Սթյուարդը հանդես եկավ Գ.Չայլդի և Լ.Ուայթի հայեցակարգերի խիստ քննադատությամբ, հայտարարելով որ դրանք վերացական են, ոչ ապացուցելի և կիրառման համար պիտանի չեն[266]:

Ջ.Սթյուարդը գտնում էր, որ էվոլյուցիոն հետագիծը կախված է յուրաքանչյուր հասարակության համար առանձնահատուկ էկոլոգիական և մշակութային փոփոխականներից, սակայն, անկախ դրանից, բոլոր մշակույթները ունեն ընդհանուր գծեր և օրինաչափություններ[267], և անհրաժեշտ է վերհանել մշակույթների, համակարգերի և ինստիտուտների տիպաբանությունը, ինչպես նաև մշակութային օրինաչափությունները և զուգահեռները, սակայն այդ զուգահեռները առավել սահմանափակ մասշտաբներ պետք է ունենան՝

---

[265]**Hansen** 2021: 60-61.**Джонсон, Эрл** 2017: 350.
[266]**Steward** 1955: 17.
[267]**Steward** 1949: 1-2.

Գ.Չայլդի և Լ.Ուայթի հայեցակարգերի հետ համեմատած, և էմպիրիկ հաստատում պետք է ստանան[268]: Ինչպես նաև անհրաժեշտ է վերհանել այդ զուգահեռների պատճառային փոխկապակցվածությունը և վերլուծել դրանք (իր մեկ այլ հոդվածում Ջ.Սթյուարդը քննարկում է կենսաբանական գործոնի դերը ունիվերսալ նմանություններում[269])[270]:

Ջ.Սթյուարդը համարում էր, որ չի կարելի մշակութային զարգացումը պայմանավորել գլխավորապես դիֆուզիայով[271], և դիֆուզիայի յուրաքանչյուր օրինակ դիտարկելիս պետք է տալ հետևյալ հարցը. հասարակությունը փոխառել է երևույթը, թե՞ դա պատճառի և հետևանքի անկախ կրկնությունն է[272]:

Ջ.Սթյուարդն առանձնացնում է սոցիոմշակութային ինտեգրացիայի հետագա մակարդակները. դրանք են՝ 1) նուկլեար ընտանիքը, 2) ժողովրդական հասարակությունը և 3) պետությունը: Ընտանիքի մակարդակը բազայինն է, հաջորդն ի հայտ է գալիս, երբ առաջանում է վերընտանեկան կազմակերպման անհրաժեշտություն, իսկ մի քանի բազմաընտանիք կամ ժողովրդական հանրույթներ (multifamily, or folk societies)՝ ավելի մեծ համակարգում միմյանցից ֆունկցիոնալ կախվածության մեջ դնելը բնորոշում է ինտեգրման պետական մակարդակը[273]: Ջ.Սթյուարդի նշած

---

[268]**Steward** 1955: 19.
[269]**Steward** 1958: 209-210.
[270]**Steward** 1949: 3.
[271]**Ibid**: 24.
[272]**Adams** 1966: 20.
[273]**Steward** 1955: 54-55.

մակարդակները տարբերվում են աճող կազմակերպչական բարդությամբ՝ անկախ այն բանից, թե ինչ նոր օրինաչափություններ կարող են ընկած լինել էվոլյուցիոն տեղաշարժի հիմքում:

Ջ.Սթյուարդը համադրում է ժամանակագրական տարբեր փուլերին պատկանող, բայց սոցիալական էվոլյուցիայի տեսակետից նույն գործընթացները հինգ համակարգերում՝ Կենտրոնական Անդեր, Կենտրոնական Ամերիկա, Միջագետք, Եգիպտոս, Չինաստան: Այս քաղաքակրթությունների մշակութային և սոցիալական հատկանիշները խմբավորելով՝ Ջ.Սթյուարդն առանձնացնում է զարգացման հինգ փուլեր.

1. Նախաերկրագործական կամ որսորդության և հավաքչության շրջան[274],

2. Սկզբնավորվող հողագործության շրջան[275],

3. Բազային տեխնոլոգիաների ձևավորման, սկզբնական ինտեգրացիայի, տեղական ոռոգման համակարգերի ձևավորման շրջան[276],

4. Ռեգիոնալ զարգացման և ծաղկման շրջան՝ կրոնաքաղաքական վերնախավն արդեն վերահսկողության տակ է վերցնում ոռոգումը, և արդեն հաջորդ փուլում առաջանում է բազմաթիվ համայնքներից բաղկացած թեոկրատիկ պետությունը[277],

---

[274]**Steward** 1949: 10.
[275]**Steward** 1949: 10-11.
[276]**Ibid**: 11-12.
[277]**Ibid**: 12:13.

5. Նվաճումների փուլ[278]:

Ջ.Սթյուարդը գտնում է, որ երրորդ փուլում, բազային տեխնոլոգիաների ձևավորման շնորհիվ հնարավոր է ստանալ սննդի որոշ ավելցուկ, ոռոգման շնորհիվ ազատվում է բնակչության մի մասը, որը ներառվում է արհեստագործության մեջ, հասարակության հիմքն են դառնում փոքր տեղական համայնքները, որոնք բաղկացած էին ազգակից տոհմերից, ձևավորվում են ինտեգրացնող դեր ունեցող ծիսական կենտրոնները (մեկ կամ մի քանի համայնքների համար): Միգուցե, որոշակի դեր սկսում է խաղալ ռազմական գործը, բայց ինտեգրման սկիզբը դնում է քրմությունը[279]: Ռազմական գործը, պատերազմները և դրանց հետևանքներն ակնառու են ցիկլիկ նվաճումների փուլում[280]:

Ջ.Սթյուարդը հատուկ ընդգծում է, որ նման օրինաչափությունները գործում են չորային կամ կիսաչորային կլիմա ունեցող վաղ քաղաքակրթությունների դեպքում[281]:

Ջ.Սթյուարդը համարում է, որ պոլիտոգենեզի գործոնը ոռոգումն է. ոռոգովի քաղաքակրթությունները (Եգիպտոս, Միջագետք, Չինաստան, Կենտրոնական Ամերիկա և Կենտրոնական Անդեր) ունեն զարգացման ընդհանուր միտումներ

[278] Այս փուլը երեք մասի է բաժանված՝ Սկզբնական նվաճում (նվաճումների և ռազմական ծաղկման ժամանակավոր փուլ), Խավար դարաշրջան (վերելքին հաջորդող անկման փուլ), Ցիկլիկ նվաճում (լայնամասշտաբ միլիտարիզմի և նվաճումների, կայսրությունների, ուրբանիզացիայի փուլ), տե՛ս **Steward** 1949: 23.

[279]**Ibid**: 20.

[280]**Ibid**: 21-22.

[281]**Ibid**: 17.

և հաջորդականություն, քանի որ կենսագործունեության համար անհրաժեշտ էր լայնամասշտաբ ոռոգում: Երրորդ փուլում կրոնաքաղաքական վերնախավն արդեն վերահսկողության տակ է վերցնում ոռոգումը, և արդեն հաջորդ փուլում առաջանում է բազմաթիվ համայնքներից բաղկացած թեոկրատիկ պետությունը: Այս հարցում Ջ.Սթյուարդի մոտեցումը նման է Կ.Վիտֆոգելի հայեցակարգին, և դա պատահական չէ. Ջ.Սթյուարդը ժամանակին կազմակերպել էր գիտաժողով[282] Կ.Վիտֆոգելի հայեցակարգի քննարկման նպատակով և համակարծիք էր նրան[283]:

Գ.Չայլդի և Լ.Ուայթի հայեցակարգերի քննադատությունը Ջ.Սթյուարդի կողմից համարվել է ոչ օբյեկտիվ, քանի որ երկուսն էլ, ինչպես նաև միագիծ էվոլյուցիայի ներկայացուցիչ համարվող Հ.Սպենսերը, բազմիցս ընդգծել են էվոլյուցիայի տեղական առանձնահատկությունների կարևորությունը[284]:

***Մորթըն Ֆրիդ***

Էվոլյուցիոն գործընթացների ուսումնասիրությունը շարունակվեց հասարակությունների սոցիալական կառուցվածքի բարդացման ուսումնասիրման շեշտադրությամբ: Ձևավորվեցին էվոլյուցիոն նոր սխեմաներ, որոնցից մեկի հեղինակն է Մ.Ֆրիդը (1923-1986): *«The evolution of political society an essay in political anthropology»* ("Քաղաքական հա-

---

[282]Գիտաժողովի արդյունքներմն ամփոփված են «Irrigation civilizations: A comparative study» (by Julian H. Steward et al. Pan-American Union, 1955) աշխատության մեջ:

[283]**Клейн** 2014: 512.

[284]**Harris** 1968: 171-173, **Sanderson** 2007: 122.

սարակության էվոլյուցիան. քաղաքական մարդաբանության ակնարկ", 1967) աշխատությունում Մ.Ֆրիդը դասակարգում է հասարակություններն ըստ սոցիալական անհավասարության ցուցանիշի[285]:

Նա զանազանում է մարդու՝ իրավիճակին հարմարվելու երեք մակարդակ՝ իրավիճակային, սոցիալական և խորհրդանշական[286], և բնորոշում է մշակույթը որպես «*համընդհանուր ընդունված, նախևառաջ խորհրդանշական ուսուցման միջոցով ձեռք բերված վարքային ռեակցիաների ամբողջություն*»[287]: Մ.Ֆրիդը համարում է, որ սոցիալական կառուցվածքը և սոցիալական կազմակերպությունը՝ (ներառյալ պետությունը) մշակույթի մի հատվածն են[288], իսկ իշխանությունը բնորոշում է հետևյալ կերպ. *«իշխանությունը այլ անձանց վարքը վերահսկելու և պատժամիջոցներ կիրառելու ունակությունն է»[289]:*

Սոցիալական զարգացումն, ըստ Մ.Ֆրիդի, անցնում է չորս փուլ. *էգալիտար, աստիճանակարգված (ռանգավորված), շերտավորված (ստրատիֆիկացված) հասարակություններ և պետություն*:

---

[285] Նշենք, որ ինքը՝ Մ. Ֆրիդը չէր համարում, որ իր կիրառած սխեման մեկընդմիշտ հաստատված դոգմա է, տեսության նշանակությունը հետագա ուսումնասիրությունների «նշանառությունը հեշտացնելն է», **Fried** 1967: xi:

[286] **Ibid**: 5-6.

[287] **Ibid**: 7.

[288] **Ibid**: 9.

[289] **Ibid**: 13

1. ***Էգալիտար***. չնայած, ըստ Մ.Ֆրիդի, հավասարությունը սոցիալական անհնարինություն է[290], այնուամենայնիվ նա որպես այդպիսին է որակում սոցիալական զարգացման առաջին փուլը, նշելով, որ տվյալ դեպքում «հավասարությունը» ձևական աստիճանակարգության և շերտավորման բացակայությունն է. նման հասարակությունները հնարավորինս ձգտում են հավասարության[291]: Էգալիտար է այն հասարակությունը, որտեղ *«գոյություն ունեն այնքան հեղինակավոր պաշտոններ ցանկացած տարիքա-սեռային խմբում, որքան կան մարդիկ, ովքեր ի վիճակի են զբաղեցնել այդ պաշտոնները»*[292]: Այլ կերպ ասած՝ այս կամ այն հեղինակավոր պաշտոնին հասնելուն խանգարում են միայն սեռային կամ տարիքային սահմանափակումները: Էգալիտար հասարակությունը չի սահմանափակում իշխանություն իրականացնող մարդկանց թիվը[293]: Էգալիտար հանրույթում գոյություն ունեցող տնտեսական բաշխման հարցում Ֆրիդը ընդունում է Մ.Սալինզի ռեցիպրոկցիայի (փոխադարձության) երեք տեսակների հայեցակարգը (տե՛ս Մարշալ Սալինզ ենթավերնագիրը), ըստ որի էգալիտար հանրույթում բաշխման հիմնական ձևը ընդհանրացված ռեցիպրոկայնությունն է (փոխանակման այն տեսակը, երբ փոխադարձությունն ու համարժեքությունը տեղի են ունենում երկարատև ժամանակաշրջանի ընթացքում): Մարդկային խմբերի սակավությունից ելնելով՝ էգալիտար հանրույթների միջև մրցակցություն

[290]**Ibid**: 26.
[291]**Fried** 1967: 29.
[292]**Ibid**: 33.
[293]**Ibid**: 33.

տարածքի համար ըստ երևույթին չի եղել[294]: Այդ հանրույթները կախված են բնամթերքից, և ըստ այդմ՝ խոցելի են էկոլոգիական փոփոխությունների պարագայում[295]: Հանրույթը ունի առաջնորդ, որի հեղինակությունը կուտակային բնույթ ունի (օրինակի համար՝ լավագույն որսորդը), բայց ոչ մի դեպքում չի տարածվում այլ ոլորտների վրա և քաղաքական իշխանության հիմք չի կարող հանդիսանալ[296]: Ռեսուրսները հասանելի են բոլորին և սոցիալական բախումների պատճառ չեն հանդիսանում[297]: Բացակայում են դասակարգերը, հանրույթի գլուխ կանգնած է առաջնորդը, որի իշխանությունն ըստ Մ. Ֆրիդի, պայմանավորված է պոպուլյացիայի խտությամբ և էկոլոգիական պայմաններով, այն հիմնված է հեղինակության վրա և չունի ազդեցության այլ լծակներ, առաջնորդի դերը հանրույթի անդամից մեկ ուրիշ անդամի անցնելու բնույթ ունի[298]: Բոլոր դեպքերում, ըստ Մ. Ֆրիդի, այս հանրույթները ***նախաքաղաքական են***, քանի որ քաղաքական իշխանության մասին խոսք դեռ չի գնում:

2. ***Աստիճանակարգված*** *(ռանգավորված)* հանրույթը այն հանրույթն է, որտեղ կարևոր պաշտոնների հասանելիությունը արդեն ինչ-որ ձևով սահմանափակված է, և այդ պաշտոնները արդեն հասանելի չեն շարքային, թեկուզ և համապատասխան ունակություններ ունեցող համայնական-

[294]**Ibid** 1967:53
[295]**Fried** 1967:54, 58.
[296]**Ibid**: 66.
[297]**Ibid**: 71.
[298]**Ibid**: 83.

ներին[299]: Աստիճանակարգված հանրույթների սննդի աղբյուրն արդեն գյուղատնտեսությունն է, ինչից ելնելով էլ այս հանրույթների մոդելն ավելի կայուն է: Բնակեցման հիմնական մոդելը գյուղն է, փոխանակման տեսակը կրկին ռեցիպրոկցիան է, որի շրջանակներում ի հայտ է գալիս նոր առանձնահատկություն՝ տնտեսական կենտրոն, ուր ուղղվում են և որտեղից դուրս են գալիս ապրանքները[300]: Ազգակցական կապերը շարունակում են կարևոր դեր խաղալ: Առաջնորդի պաշտոնը չի փոխանցվում մեկից մյուսին, և առաջնորդի իշխանությունը տարածվում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում[301]: Առաջնորդն արդեն մի քանի գործառույթներ ունի. նա միջխմբային խնջույքների կազմակերպիչ է, նա է բաշխում ապրանքները և նա է, որ ունի սիմվոլիկ կրոնական առաջնորդի գործառույթներ: Էգալիտար և աստիճանակարգված հասարակություններում քաղաքական իշխանությունը ***հեղինակության*** (prestige) վրա հիմնված իշխանություն է:

3. ***Ստրատիֆիկացված*** կամ ***շերտավորված*** հանրույթ է այն հանրույթը, որտեղ *«միևնույն սեռի և տարիքի ներկայացուցիչները չունեն կյանքի համար անհրաժեշտ ռեսուրսները ստանալու կամ օգտագործելու հնարավորություն»*[302]: Այս հանրույթների առաջացման գլխավոր պատճառը տնտեսական շերտավորումն է (նաև՝ շրջակա պայմանների փոփոխությունները՝ բնական ռեսուրսների փոփոխումը կամ

---

[299]**Ibid**: 109.
[300]**Fried** 1967: 117.
[301]**Ibid**: 137.
[302]**Ibid**: 186.

կրճատումը, տեխնոլոգիական փոփոխությունները և այլն, ցանկացած գործոն, որը լրացուցիչ ծանրություն է դառնում է ազգակցական հարաբերությունների համակարգի համար): Այդ շերտավորումը պահանջում է քաղաքական իշխանության ձևավորում, քանի որ շերտավորված համայնքի կենսագործունեությունը պահպանելու համար անհրաժեշտ է ուժ, որը կարողանա անել ավելին, քան ենթադրում են ազգակցության համակարգի ռեսուրսները[303]: Շերտավորված հանրույթը անցումային բնույթ ունի. կամ այն շարունակելու է արագ զարգանալ՝ վերածվելով պետության, կամ հետընթաց է ապրելու՝ կրկին աստիճանակարգված հանրույթ դառնալով[304]: Ըստ այդմ ազգակցական համակարգի դերի նվազման պայմաններում ներքին կոնֆլիկտները լուծելու համար ավելի և ավելի հաճախ է կիրառվում քաղաքական և տնտեսական իշխանությունը[305]:

4. ***Պետությունն***, ըստ Մ.Ֆրիդի, սոցիալական զարգացման վերջին փուլն է, այն իրենից ներկայացնում է *«մասնագիտացված ինստիտուտների և մարմինների ամբողջություն, որը պահպանում է շերտավորման կարգը»*[306]: Էգալիտար և աստիճանակարգված հանրույթները տնտեսապես շերտավորված չեն, իսկ պետությունը շերտավորված է: Տեխնոլոգիական առաջընթացը և պոպուլյացիայի աճը առաջացնում են այնպիսի խնդիրներ, որոնք լուծելն անհնար է դառնում առանց իշխանության նոր մակարդակի, վարչարա-

---

[303]**Ibid.**
[304]**Fried** 1967: 225.
[305]**Ibid.**
[306]**Fried** 1967: 235.

րության նոր տեսակների և մասնագիտացումների անցնելու: Պետությունում ի հայտ են գալիս դասակարգերը, մասնավոր սեփականությունն ու շահագործումը: Պետությունը լուծում է ինստիտուցիոնալ հետևյալ խնդիրները. որոշում է հպատակության կարգը, պետության սահմանները, լուծում է ներքին բախումները, ձևավորում է հարկային համակարգը և այլն:

Պետությունները Մ.Ֆրիդը բաժանում է *«առաջնային»* և *«երկրորդային»* պետությունների: Վերջիններս, ըստ նրա, ձևավորվում են այն ժամանակ, երբ տեղաբնիկների հիմնական զանգվածն ընկնում է նվաճողների իշխանության տակ, որոնք կազմում են վերին դասը: Իսկ «առաջնային» պետությունները զարգացել են sui generis միմիայն տեղական պայմանների զարգացման հետևանքով[307]:

Այսպիսով, ըստ Մ.Ֆրիդի, սոցիալական զարգացման հիմքում տնտեսական ռեսուրսների յուրացման և ըստ այդմ գերակայության հասնելու խնդիրն է: Անձի կարգը և կարգավիճակն են, որ թույլ են տալիս նրան յուրացնել վերոհիշյալ ռեսուրսները, և նախնադարյան պատմության վերջին փուլի՝ շերտավորված հասարակության, հիմնական չափանիշը հենց հիմնական տնտեսական ռեսուրսների ոչ հավասար մատչելիությունն է:

Ընդ որում սոցիալական վերահսկողության մասնագիտացված ձևական գործիքակազմը զարգանում է բավականին դանդաղ, և երկար ժամանակ է անցնում, մինչև նոր իշ-

[307]**Fried** 1960: 729. **Adams** 1966: 21.

խանության կրողները կարողանում են գիտակցել իրենց կարգավիճակի հնարավորություններն ամբողջությամբ[308]:

***

Նեոէվոլյուցիոնիստների երկրորդ սերնդի ներկայացուցիչները Լ.Ուայթի կամ Ջ.Սթյուարդի աշակերտներն էին կամ հետևորդները: Առավել հայտնի են Էլման Սերվիսը, Մարշալ Սալինզը, Մարվին Հարրիսը և Ռոբերտ Կարնեյրոն:

### *Էլման Սերվիս*

Էլման Ռոջերս Սերվիսը (1915–1996 թթ.) XX դարի քաղաքական մարդաբանության առանցքային ներկայացուցիչներից մեկն է: Նա ոչ միայն տվեց սոցիալական էվոլյուցիայի առավել գործածական սխեման, այլ նաև մշակեց արևմտյան քաղաքական մարդաբանության կարևոր հայեցակարգերից մեկի՝ «ցեղապետության»[309] հայեցակարգի հիմնական ուրվագծերը:

Է.Սերվիսը բնորոշում է էվոլյուցիան որպես փոփոխությունների շարք, որի յուրաքանչյուր նոր ձև հասունանում է նախորդի ընդերքում[310]. հիերարխիկ, ինստիտուցիոնալ հիմքի վրա դրված քաղաքական կառուցվածքը զարգացել է

---

[308]**Fried** 1967: 231.

[309]***Chiefdom*** եզրույթը ռուսերեն գրականության մեջ թարգմանված է որպես ***вождество***, հայերենի համար մենք ընտրել ենք ***ցեղապետություն*** տարբերակը:

[310]**Service** 1962: 170.

էգալիտար նախնադարյան հասարակության մատրիցա-յից[311]:

Է.Սերվիսն առաջարկում է «էվոլյուցիոն ներուժի օրեն-քը» (Law of Evolutionary Potential), որը նա ձևակերպում է հետևյալ կերպ.

*«Որքան ավելի մասնագիտացված և ադապտացված է համակարգը (բնագրում՝ a form) էվոլյուցիայի տվյալ փու-լում, այնքան քիչ է նրա ներուժը հաջորդ փուլին անցնելու համար»,* այսինքն որքան ավելի բարձր էվոլյուցիոն մակար-դակի է հասել հասարակությունը, այնքան ավելի ցածր է հավանականությունը, որ նա կթևակոխի էվոլյուցիոն նոր փուլ: Նման հասարակությունները ցուցաբերում են լճացման և անկման միտումներ, մինչդեռ ավելի ցածր էվոլյուցիոն մա-կարդակի վրա գտնվող հասարակությունները գալիս անց-նում են նրանց[312]: Ըստ այդմ էլ Է.Սերվիսը գտնում է, որ սո-ցիալական էվոլյուցիայի իր սխեման ներկայացնում է ընդ-հանուր, այլ ոչ թե կոնկրետ պատմական մակարդակներ[313]:

Է.Սերվիսի էվոլյուցիոն սխեմայի հիմքում Կալերվո Օ-բերգի մշակութային ձևերի տիպաբանությունն էր, որը վեր-ջինս առաջարկել էր Հարավային և Կենտրոնական Ամերի-կայի հարթավայրերի համար: Այն բաղկացած էր հետևյալ կետերից. 1) միատարր ցեղեր, 2) հատվածավոր (սեգմեն-տավոր) ցեղեր, 3) քաղաքականապես կազմակերպված ցե-ղապետություններ, 4) ավատատիրական պետություններ, 5) քաղաք-պետություններ, 6) կրոնապետական կայսրություն-

[311]**Service** 1975: 8.
[312]**Sanderson** 2007: 160-161.
[313]**Service** 1962: 170.

ներ: Է. Սերվիսն առաջինն էր, ով գիտակցեց, որ Կ.Օբերգի ներկայացրած կառուցվածքային տեսակները միևնույն ժամանակ հանդես են գալիս որպես էվոլյուցիոն փուլերի հաջորդականություն[314]:

Է.Սերվիսն (Մ. Սալինզի հետ համագործակցության արդյունքում) առաջարկում է հետևյալ սխեման.

1) Սոցիալական կազմակերպման առաջին ձևը որսորդությամբ և հավաքչությամբ զբաղվողների ***տեղական խմբերն***[315] են, որոնք բաղկացած են նուկլեար ընտանիքներից, անդամների թիվը հասնում է 100-ի, նրանք հավասար են, ղեկավարվում են առավել ազդեցիկ անդամների կողմից, կոլեկտիվ տնօրինում են բնական ռեսուրսները:

2) Արտադրող տնտեսության անցնելուն զուգընթաց ի հայտ են գալիս ***ցեղային հասարակությունները***, որոնք տեղական խմբերը միավորող կլանների և համայնքների միություններ են: Առաջնորդությունն այս խմբերում խարիզմատիկ բնույթ ունի[316] և կիրառվում է միայն առանձնահատուկ պայմաններում: Չկան իրական իշխանություն ապահովող քաղաքական պաշտոններ, առաջնորդը ավելի շուտ ազդեցիկ մարդ է, յուրատեսակ խորհրդատու: Կոլեկտիվ գործողությունների համար ցեղը ինքնակազմակերպվում է, սակայն ինքնակազմակերպման այդ ձևերը դեռ պետություն չեն կարող համարվել[317]:

---

[314]**Carneiro** 2000: 86-87.
[315]**Service** 1962: 38.
[316]**Ibid**: 101-105.
[317]**Service** 1962: 103.

Այս փուլում ձևավորվում է միջհամայնքային առաջնորդության ինստիտուտը, հնարավոր է նաև, որ ի հայտ են գալիս սեռատարիքային առաջին խմբերը:

Ցեղը (համեմատած ցեղապետության կամ պետության հետ) ավելի փխրուն սոցիալական միավոր է, որը բաղկացած է տնտեսական տեսակետից ինքնաբավ խմբերից: Գերագույն իշխանության բացակայության պարագայում այդ խմբերն իրենց վրա են վերցնում ինքնապաշտպանության գործառույթը: Հիմնական խնդիրներից են ներխմբային վեճերը, որոնք մշտական դառնալու միտում ունեն[318]:

Ցեղերի արտաքին քաղաքականությունն իրենից ներկայացնում է հարևան ցեղերի հետ մշտական պատերազմների շարք: Միջցեղային պատերազմներն իրենց բնույթով արդյունավետ չեն: Դարանակալումներն ու հարձակումներն ավելի շատ մարտավարական հնարքներ են, քան լայնամասշտաբ պատերազմական գործողություններ. ցեղային տնտեսությունն ու ցեղի թույլ քաղաքական կառուցվածքը, անշուշտ, ի վիճակի չեն դիմանալ իրական պատերազմներին[319]:

Ցեղի՝ որպես մշակութային տիպի, մակարդակն ավելի բարդ է, քան խմբի մակարդակը, այն ունի ինտեգրման և բազմազանեցման նոր ձևեր: Այդուհանդերձ ցեղը և խումբը դեռ ունեն ընդհանրություններ. երկուսն էլ գլխավորապես ընտանեկան հանրույթներ են, նրանց անդամները հավասար են, բազմազանեցման ոչ մի կառույց դեռ չի հասել այն-

[318]**Ibid**: 103-104.
[319]**Ibid**: 104.

պիսի մակարդակի, որ հանրույթից տարանջատվեն քաղաքական վերահսկողության մարմինները, տնտեսական մասնագիտացված խմբերը (բացի սեռատարիքային խմբերից) կամ քրմությունը (կրոնական ծառայողներ գոյություն ունեն երկու համակարգերում էլ, բայց նրանք դեռ մասնագիտացված քրմություն չեն դարձել)[320]:

Եթե ընդհանուր էվոլյուցիան ոչ միայն խմբերի բազմապատկումն է, այլև տնտեսական և քաղաքական մասնագիտացման աճը, ապա ցեղերն իրենց ինտեգրման առումով առաջընթաց են ապրել խմբերի համեմատությամբ: Սերվիսը փուլերի տարբերակման չափանիշ համարում է ինտեգրման ձևը, պնդելով, որ յուրաքանչյուր մակարդակում ինտեգրումը յուրօրինակ ձևով է ընթանում[321]:

3) Հաջորդ փուլը ***ցեղապետությունն*** է: Սրա առաջացումն, ըստ Է. Սերվիսի, պայմանավորված է էկոլոգիական իրավիճակով, որը որոշիչ դեր է խաղացել այս կամ այն արտադրությունը ընտրելու կամ վերաբաշխիչ գործառույթներ իրականացնելու համար: Արդյունքում ձևավորվել է սոցիալական ինտեգրման օրգանական հիմքը (Ֆրիդը մեջբերում է Դյուրկհեյմի օրգանական համերաշխությունը[322]), ինչը հնարավոր է դարձրել առավել ինտեգրված հասարակության ձևավորումը[323]: Հասարակության սոցիոքաղաքական կազմակերպման այս մակարդակում ձևավորվում է համայնքի սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքը համա-

[320]**Service** 1962: 131.
[321]**Ibid**: 132.
[322]**Ibid**.
[323]**Sanderson** 2007: 169.

կարգող կենտրոնը, և այդ կենտրոնն իր վրա է վերցնում նյութական բարիքների հավաքումն ու վերաբաշխումը[324]:

Ցեղապետությունը գտնվում է հատվածավոր, էգալիտար հասարակության և հարկադրական ուժ կիրառող պետության միջև: Ցեղապետությունն ունի իշխանության այնպիսի կառուցվածք, որը կարող է գործել որպես երրորդ կողմ՝ ընտանիքների մակարդակից բարձր լինելով: Ցեղապետությունների առաջնորդները, ի տարբերություն պետությունների, չեն կիրառում հարկադրական ֆիզիկական պատժամիջոցներ և ուժ կիրառելու մենիշխանություն չունեն[325]:

Այս փուլում հասարակության մեջ ի հայտ է գալիս սոցիալական շերտավորում (բայց ոչ դասակարգեր), ձևավորվում է ժառանգական ազնվականությունը:

Է.Սերվիսը գտնում է, որ ցեղապետությունները, հնարավոր է, որ կրոնապետություններ լինեն[326]: Նման կրոնապետություններն, ըստ Է.Սերվիսի, կարող են կազմակերպել հասարակական աշխատանքներ այս կամ կառույցներ ստեղծելու համար: Առավել աչքի ընկնող կառույցներն են կրոնապետական բնույթի հուշարձանները՝ բուրգերը, դամբանաբլուրները, տաճարները: Է.Սերվիսը շեշտում է, որ դրանց կառուցումը ինտեգրման, այլ ոչ թե հարկադրանքի հետևանք է[327]:

---

[324]**Service** 1962: 133-134.
[325]**Service** 1975: 86.
[326]**Ibid**: 96.
[327]**Ibid**: 96.

Ցեղապետությունների առաջնորդների գործունեության կարևոր կետերից մեկը հավելյալ արդյունքի վերաբաշխումն է. առաջնորդը հնարավորություն ունի վերահսկել գյուղատնտեսության և արհեստագործության ոլորտները և ապրանքի վերաբաշխման վերաբերյալ արդարացի որոշումներ կայացնել (վերաբաշխումից բացի ապրանքների մի մասն անհրաժեշտ է պահեստավորել՝ թե՛ հետագայում գյուղացիներին և արհեստավորներին բաժանելու, թե՛ անկանխատեսելի իրավիճակներում (պատերազմ, միջհամայնքային խնջույքներ և այլն) օգտագործելու համար)[328]:

Է.Սերվիսը գտնում է, որ մասնագիտացման երկու հետևյալ ձևերը կարող են արագացնել վերաբաշխիչ հասարակության ձևավորման գործընթացը. 1) տեղական բնակավայրերի ռեգիոնալ մասնագիտացումը, 2) անհատական ունակությունների միավորումը լայնամասշտաբ համատեղ արտադրության շրջանակներում[329]:

Իշխանության հիմնական գործառույթներից մեկը հասարակության ինտեգրումն է, և որպես այդ ինտեգրման մշտական հիմք կարող է հանդես գալ տարածքային գործոնը, սակայն ցեղապետությունների ընդարձակմանը զուգընթաց կարող է ի հայտ գալ նաև դրանց տրոհվելու միտումը: Ցեղապետությունը կարող է ունենալ առանձին նոր բնութագրիչներ (նոր ծագումնաբանություն, նոր աստվածություններ և նոր ծեսեր և այլն), բայց միշտ չէ, որ կոնկրետ ցե-

---

[328]**Ibid**: 94.
[329]**Service** 1962: 135.

ղապետության մշակույթը կտարբերվի հարևանների մշակույթից[330]:

Ըստ Է.Սերվիսի, ամենամեծ տարբերությունը մի կողմից խմբերի ու ցեղերի միջև, իսկ մյուս կողմից՝ ցեղապետությունների և սոցիոքաղաքական կազմակերպման ավելի բարձր մակարդակների միջև այն է, որ ինտեգրման բնորոշ ձևը դառնում է դյուրկիեյման օրգանական համերաշխությունը[331]: Ցեղապետության սոցիալական ինտեգրման աստիճանը գերազանցում է ցեղային ինտեգրմանը հետևյալ առումներով. նախ, ցեղապետությունը ավելի խիտ բնակեցված հասարակություն է և ավելի բարձր արտադրողականություն ունի, իսկ երկրորդ՝ ցեղապետության հասարակությունը, որն էվոլյուցիոն տեսակետից ավելի բարդ է և ավելի կազմակերպված, ցեղայինից տարբերվում է տնտեսական, սոցիալական, կրոնական գործունեությունը կարգավորող կենտրոնների առկայությամբ, ինչն առհասարակ սոցիալքաղաքական նորամուծություն է[332]:

Ցեղապետությունների համակարգված և կոորդինացված ոչ ուղղակի փոխանակությունը նպաստում է ոչ միայն աշխատանքի արդյունավետությանը, այլև աշխատուժի ուղղորդված օգտագործմանը՝ մեծ ազդեցություն գործելով տեխնոլոգիաների, արվեստի, արհեստագործության՝ առհասարակ նյութական մշակույթի վրա, որպես կանոն, ցեղապետությունների նյութական մշակույթին բնորոշ է ավելի բարձր մակարդակ: Հասարակական աշխատանքի ուղղոր-

[330] **Service** 1975: 102.
[331] **Service** 1962: 132.
[332] **Ibid**: 133.

դումը նույնպես աչքի ընկնող արդյունքներ է տալիս. օրինակ՝ ոռոգման աշխատանքները և լեռնային լանջերի տեռասավորումը[333] որոշ ցեղապետություններում, այլ տեղերում՝ տաճարներ և տաճարաբլուրներ, բուրգեր և այլ հուշարձաններ կառուցելը[334]:

Ցեղապետության կրոնական համակարգը էականորեն տարբերվում է ցեղերի և խմբերի կրոնական համակարգից, քանի որ այն ձեռք է բերում նոր բովանդակություն և նոր ձև: Շամանական պրակտիկան ու բնության փուլերին նվիրված տեղական ծեսերը շարունակում են իրենց գոյությունը, բայց զուգահեռաբար շատանում են առավել լայնամասշտաբ սոցիալական նպատակներին ծառայող ծեսերը: Նախնիները սկսում են ներառվել գերբնական էակների կարգի մեջ, ընդ որում աստվածությունների, այլ ոչ թե ոգիների կամ անորոշ մշակութային հերոսների կարգավիճակով[335]:

Ցեղապետությունում ընտանիքը դեռ զգալի դիրք է գրավում, բայց հասարակությունն այլևս էգալիտար չէ, ցեղապետությունը դեռ չունի կառավարություն, բայց ունի իշխանություն և կենտրոնացված ղեկավարություն, ցեղապետություններում ռեսուրսների կամ շուկայական առևտրի հանդեպ մասնավոր սեփականություն դեռ գոյություն չունի, սակայն արդեն կա անհավասար վերահսկողություն ապրանքների և արտադրության հանդեպ, կան կարգերի տար-

[333]Տեռասավորումը՝ հովիտների լանջերին, լճերի և ծովերի ափերին աստիճանաձև ռելիեֆ ստեղծելն է:

[334]**Service** 1962: 162.

[335]**Ibid**.

բերություններ, բայց սոցիալ-տնտեսական կամ քաղաքական դասակարգեր դեռ չկան[336]:

4) Հաջորդ փուլը ***պետությունն է***, որի ձևավորումը է.Սերվիսը պայմանավորում է հասարակության շահերից բխող գործունեությամբ: Նա առանձնացնում է պետության «երեք առավելություն», որոնք են. 1) տնտեսական վերաբաշխման առավել բարդ համակարգը, 2) պատերազմական գործողությունների ավելի արդյունավետ կազմակերպումը և, որպես հետևանք, հասարակության հարստության և ինքնագնահատականի աճի ներուժի հնարավորությունը, 3) հասարակական լայնամասշտաբ աշխատանքներ (կոթողային ճարտարապետական կառույցներ և ոռոգման համակարգի ստեղծում) կատարելը:[337]

Այս փուլում կենտրոնական իշխանությունը ձեռք է բերում ուժի կիրառման ինստիտուցիոնալ մակարդակի հասցրած պատժամիջոցների իրավունք[338]: Օրենքը մինչև պետության ձևավորումը ավանդույթի՝ սոցիալական վերահսկողության դրական կամ բացասական ամրապնդման (դրական պատժամիջոցներ՝ հասարակության համաձայնություն, դրվատանք, բացասական պատժամիջոց՝ հասարակության դժգոհություն) տեսք ունի: Այդ պատժամիջոցը կիրառում է անհատը կամ խումբը, որը ընտանիքում բարձր կարգավիճակ ունի (նահապետը կամ տարեց ազգականը): Իսկ պետության մակարդակում օրենքը ստեղծվում և պահպանվում է հարկադրանքի միջոցով, և այդ օրենքը վեր է ըն-

[336]**Ibid**: 164.
[337]**Sanderson** 2007: 160.
[338]**Service** 1975: 16

տանեկան մակարդակից, դա մի երևույթ է, որը նախկինում գոյություն չի ունեցել[339]:

Պետությունը, որքան էլ թերի զարգացած այն լինի, տարբերվում է ցեղապետությունից վերահսկողության հատուկ ձևով՝ օրինականորեն ստեղծված խմբի կողմից ուժ կիրառելու սպառնալիքով: Առկա է նաև անհատական ուժային ներգործության գործոնը, սակայն պետության հզորության առավել պարզ, բայց նշանակալի ցուցիչներից մեկն այն է, թե որքանով է ուժի անհատական (ոչ պետական) կիրառումը հայտարարվում օրենքից դուրս, իսկ հետո կանխվում[340]:

Պետական վարչակարգը ձևավորվել է համայնքի կենտրոնական ղեկավարությունը ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու արդյունքում: Հասարակության անընդհատ աճող կարիքները կազմակերպելու հետևանքով ընդարձակվել են այդ վարչակարգի գործառույթները, և արդյունքում այն վերածվել է ժառանգական ազնվականության: Ձևավորվող պաշտոնեության տնտեսական և կրոնական գործառույթները զարգացել են նրա տրամադրած ծառայությունների և ինքնուրույնության ավելացմանը զուգընթաց. դրանով իսկ վարչակարգը ձգտում էր պաշտպանել ոչ թե այս կամ այն դասակարգի կամ խավի շահերը, այլ ինքն իրեն[341]:

Է.Սերվիսը գտնում է, որ քաղաքական իշխանությունն է կազմակերպել տնտեսությունը, ոչ թե հակառակը: Տնտեսական համակարգը վերաբաշխիչ բնույթ ուներ, ոչ թե յուրացնող, իսկ քաղաքական իշխանության ձեռքբերումը

---

[339]**Ibid**: 82-88.
[340]**Service** 1962: 163.
[341]**Service** 1975: 8.

պայմանավորված չէր հարստությամբ: Առաջին վարչակարգերը զգալիորեն ամրապնդվեցին շնորհիվ իրենց տնտեսական և կրոնական գործունեության (արտոնություններ տրամադրելու), ոչ թե ֆիզիկական ուժ կիրառելու հետևանքով[342]:

Այս հողի վրա է բանավեճ ծավալվել Մ.Ֆրիդի և Է.Սերվիսի միջև: Մ.Ֆրիդի հայեցակարգի հիմքում բախումն էր: Ըստ նրա, պետությունն ի հայտ է գալիս շերտավորված հասարակության մեջ շահագործման արդյունքում առաջացած բախումների կարգավորման արդյունքում[343], իսկ Է.Սերվիսը համարում էր, որ պետության ձևավորումը ինտեգրման հետևանք է. հասարակությունը գնալով բարդանում է (հասարակության կառավարման վերակազմակերպման անհրաժեշտություն է ծագում), ընթանում է ինտեգրման գործընթացը: Առհասարակ սոցիոքաղաքական միավորները չեն կարող ձևավորվել քանի դեռ ի հայտ չեն եկել նոր ինտեգրացիոն մեխանիզմներ, որոնք թույլ չեն տալիս, որ մեծ միավորները բաժանվեն առավել մանր բաղադրիչների[344]:

Սերվիսը քննարկում է եվրոպական ավատատիրական համակարգը և գալիս այն եզրահանգման, որ եվրոպական ավատատիրությունը պատմական տեսակետից շատ բարդ և, ըստ ամենայնի, առանձնահատուկ տեսակ է եղել, և այդ պատճառով այն չի կարելի համարել էվոլյուցիոն զարգացման փուլ: Նրա միայն մի բաղադրիչը՝ վասալիտետը, ունի համանմանություններ այլ համակարգերում: Բիգմենների (տե՛ս Մ. Սալինզ ենթավերնագիրը) կամ պատրոն-կլիենտ

---

[342]**Ibid**.

[343]**La Lone** 2013: 769.

[344]**Джонсон, Эрл** 2017: 61.

համակարգի հասարակությունները որոշ առումներով նմանվում են եվրոպական ժառանգական ազնվականության ստեղծած համակարգերին, սակայն վերոհիշյալ ցեղապետություններից ոչ մեկը չի ունեցել եվրոպական հողատիրության բարդ համակարգը կամ համաեվրոպական միասնականության գաղափարին նման գաղափար[345]:

Այսպիսով, սոցիալական էվոլյուցիայի հիմքում, ըստ Սերվիսի, հասարակության աճի և հետագա ինտեգրման գործընթացներն են: Քաղաքական գործընթացներում առաջնորդների կարևորվելը պայմանավորված է ոչ թե բախումով, այլ այն իրական արժեքներով, որոնք առաջնորդները կարող էին տրամադրել իրենց կողմնակիցներին և համայնքի մյուս անդամներին: Պաշտպանությունը, պատերազմական գործողությունները, ոռոգման և տեռասավորման համակարգերի ստեղծումը, սննդի պահեստավորումն ու վերաբաշխումը, միջհամայնական առևտուրը (որքան էլ այն սահմանափակ բնույթ ունենա)՝ այս բոլոր գործողությունները պահանջում են առաջնորդի իրական ներգրավվածություն և ակնառու հաջողություններ այդ դաշտում, և առաջնորդի հետագա հաջողություններն էլ պայմանավորված են աշխատանքի կազմակերպման և ռեսուրսների զարգացման տեղական կարիքներով[346]:

---

[345] **Service** 1975: 82.
[346] **Джонсон, Эрл** 2017: 23-24.

***Մարշալ Սալինզ***

*Կենսագրությունը, գիտական ժառանգությունը.* Մարշալ Սալինզը (1930-2021) XX դարի խոշոր գիտնականներից մեկն է, պոլինեզիական ազգագրության ճանաչված մասնագետ: Նրա տեսությունների հիմքում մշակույթն է որպես թե՛ տնտեսական, թե՛ պատմական մարդաբանության կենտրոնական հայեցակարգ[347]:

Մ.Սալինզի հայացքները ձևավորվել են Բ.Մալինովսկիի[348], Ջ.Սթյուարդի և Կարլ Պոլանյիի (տե՛ս ստորև) տեսությունների ազդեցությամբ: 1960-ականներին նրանց ավելացավ Կլոդ Լևի-Ստրոսի ստրուկտուրալիստական դպրոցը: 1960-1970-ական թթ. Մ.Սալինզի գիտական ուսումնասիրությունները ներառում են արխաիկ սոցիոքաղաքական կազմակերպությունների տիպաբանություններ և արխաիկ տնտեսության հետազոտություններ, որոնք լույս տեսան «Stone Age Economics» (Քարեդարյան տնտեսությունները, 1972)[349] աշխատության շրջանակներում: Մ.Գոլդսմիթը Մ.-Սալինզի գիտական գործունեությունը բաժանում է երկու փուլի՝ 1) 1950-1970-ական թթ. կեսեր, երբ Մ.Սալինզը ներկայանում է որպես էվոլյուցիոնիստ և մատերիալիստ, և 2) 1970-ականների կեսերից մինչև 2000-ականներ, երբ նրա հետաքրքրությունները պայմանավորված էին պատմական

[347]**Golub** 2013: 731.

[348] Բրոնիսլավ Կասպեր Մալինովսկի - (Bronisław Kasper Malinowski, 1884-1942) – մարդաբան, կառուցվածքային ֆունկցիոնալիզմի հիմնադիր:

[349] Ռուսերեն հրատարակությունը՝ Экономика каменного века, 1999.

ստրուկտուրալիզմով[350][351]: Երկրորդ փուլում Մ.Սալինզը մշակեց իրավիճակի կառուցվածքը («structure of the conjuncture») հայեցակարգը, ըստ որի պատմական իրավիճակներն այնքան բարդ են և պայմանավորված են այն աստիճանի բազմաթիվ հանգամանքներով և պատահականություններով, որ անհնար է ստանալ դրանց ամբողջական պատկերը[352]:

Մ.Սալինզի առաջադրած կարևոր հարցերից է հետևյալը. արդյոք մշակույթը հետևանք է մարդու իրական նպատակամղված և պրագմատիկ գործողությունների, թե՞ ընդհակառակը՝ մարդկային գործողությունները միջնորդավորված են մշակութային դիտավորությամբ[353]: Մշակույթն, ըստ Մ. Սալինզի, անկախ ուժ է, այն փոխգործակցում է, բայց չի պայմանավորվում շրջակա միջավայրով[354]: Մշակույթը մարդու ազատության գերագույն արտահայտումն է, ցանկացած մշակույթ պատասխանատու է միայն իր ստեղծողների հանդեպ, ոչ բնական դետերմինանտները, ոչ առաջադիմության գծային պատմությունը չեն կարող բացատրել, թե մարդիկ ինչ ճանապարհ կընտրեն: Մարդիկ իրենց արժեքների հա-

[350] ***Պատմական ստրուկտուրալիզմը*** մեթոդաբանական մոտեցում է, որն առաջարկում է հետազոտել պատմական գործընթացը սոցիալ-տնտեսական կառուցվածքների առանձնացման և երկար ժամանակահատվածների ընթացքում նրանց զարգացման ուսումնասիրության ճանապարհով:

[351] **Goldsmith** 2005: 76.

[352] **Golub** 2013: 734.

[353] **Sahlins** 1976: 55

[354] **Golub** 2013: 732.

մապատասխան են կառուցում տնտեսական և քաղաքական համակարգերը[355]:

*Էվոլյուցիա. սպեցիֆիկ և ընդհանուր*

1960 թ. իր հոդվածում Սալինզը գտնում է, որ էվոլյուցիան կենսաբանական և մշակութային ոլորտներում ընթանում է միաժամանակ երկու ուղղությամբ: Մի կողմից էվոլյուցիոն զարգացումները անցնում են ադապտացիոն վերափոխությունների (adaptive modification)[356] ճանապարհով, ինչը հանգեցնում է բազմազանության, մյուս կողմից՝ բարձրագույն ձևերը առաջանում են ցածրագույններից և գերազանցում են դրանց, դա էլ իր հերթին հանգեցնում է առաջընթացի: Առաջին տեսակը սպեցիֆիկ էվոլյուցիան է, երկրորդը՝ ընդհանուր էվոլյուցիան: Առաջինը ձևերի կապակցված, պատմական հաջորդականությունն է, իսկ ընդհանուր էվոլյուցիայի դեպքում ունենք փուլերի շարք զարգացման նախանշված հաջորդականությամբ[357]: Սպեցիֆիկ և ընդհանուր էվոլյուցիաները միևնույն ամբողջական գործընթացի երկու ենթատեքստներն են. հասարակության կամ մշակույթի ձևի ցանկացած փոփոխություն կարելի է դիտարկել կամ ադապտացիայի, կամ ընդհանուր առաջընթացի տեսակետից[358]:

---

[355] https://www.publicbooks.org/marshall-sahlins-original-affluent-society-at-50/

[356]Ադապտացիոն վերափոխությունները (մոդիֆիկացիաներ)՝ շրջակա միջավայրի տարաբնույթ պայմաններին հարմարվողական ռեակցիաներն են:

[357]**Sahlins** 1960: 33.*«The fundamental difference between specific and general evolution appears in this: the former is a connected, historic sequence of forms, the latter a sequence of stages exemplified by forms of a given order of development».*

[358]**Ibid**: 12-13.

Նույն օրենքներն, ըստ Մ. Սալինզի, գործում են մշակութային և սոցիալական ոլորտներում. ադապտացիոն առաջխաղացումները պայմանավորված են կոնկրետ ադապտացիայի խնդիրներով, ըստ այդմ, օրինակ, հունական սափորը որևէ կերպ չի գերազանցում չինական կամ ամերիկյան բնիկների սափորներին, կամ տարբեր լեզուները մեկը մյուսի հանդեպ առավելություն չունեն: Տարբեր պատմական հանգամանքներում ընթացող ադապտացիոն վերափոխությունները յուրօրինակ են իրենց շրջակա միջավայրին հարմարվելու առումով: Միշտ չէ, որ բարձր համարվող մշակույթները կատարյալ հարմարվողականություն են ցուցաբերում, այդ քաղաքակրթությունները, նպաստավոր պայմաններում ապրելով, հասնում են հզորության գագաթնակետին ու կործանվում են, իսկ, օրինակ, էսկիմոսները, ապրելով անհամեմատ ավելի ծանր պայմաններում, շարունակում են գոյատևել[359]:

Ավատատիրությունն, ըստ Մ. Սալինզի, ընդամենը քաղաքակրթության մի գծի առանձնահատուկ փուլ է[360]: Եթե նայենք ընդհանուր հեռանկարի դիրքերից, ապա ավատատիրությունը ներկայանում է որպես առանձնահատուկ, թերզարգացած ձև, որը, սակայն, ուներ ավելի մեծ էվոլյուցիոն ներուժ, և որի զարգացման հետևանքով հասարակությունն ունեցավ ձեռքբերումների նոր մակարդակ: Պարտադիր չէ, որ ժամանակագրորեն ավելի ուշ ձևը բարձր լինի նախորդից, այդ առումով ավատատիրությունն ավելի ցածր մակար-

[359]**Sahlins** 1960: 26-27.
[360]**Ibid**: 32.

դակ է իրենից ներկայացնում, քան Չինաստանի, հին Եգիպտոսի կամ Միջագետքի քաղաքակրթությունները, բայց հենց ավատատիրությանը հաջորդեց զարգացման այն մակարդակը, որը կարողացավ վեր բարձրանալ վերոնշյալ քաղաքակրթություններից[361]:

Մ. Սալինզի սխեման է դրված Էլման Սերվիսի սոցիոքաղաքական կազմակերպման աստիճանների սխեմայի հիմքում: Ըստ այդ սխեմայի՝ մշակույթը բաժանվում է երկու փուլի՝ պարզունակ և քաղաքակրթական, որոնց բաժանարար գիծը պետության՝ ***ինտեգրման հատուկ տեսակի*** (ի տարբերություն նախնադարյան ազգակցական ինտեգրման) ի հայտ գալն է[362]: Սոցիալական հատվածավորման և ինտեգրման չափանիշներով հանրույթները բաժանվում են հետևյալ տիպերի.

1) ***Խմբեր***. հատվածավորված չեն (բացառությամբ ընտանիքների), չունեն առաջնորդ և նախահողագործական կյանքով են ապրում,

2) ***Ցեղեր***. ավելի զարգացած են, զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ, հատվածավորված են ըստ կլանների կամ տոհմերի, ուժեղ առաջնորդի իշխանություն դեռևս չկա,

3) ***Ցեղապետություններ***. սրանց հիմքում տնտեսության ավելի բարձր արտադրողականությունն է, ներքին կարգավիճակային տարբերակումը և զարգացած առաջնորդությունը,

---

[361]**Ibid.**
[362]**Ibid** :36.

4) ***Արխաիկ պետություն***. սա քաղաքակրթության փուլ է, այս պետությանը բնորոշ է էթնիկ բազմազանությունը և գյուղական բնակչության ինտեգրման թույլ աստիճանը ի տարբերություն բարձր զարգացած, տարածքային և մշակութային առումով ինտեգրման բարձր մակարդակ ունեցող, արդյունաբերական տեխնոլոգիաներին տիրապետող ազգային պետության[363]:

Այսպիսով, եզրահանգում է Մ.Սալինզը, ընդհանուր մշակութային էվոլյուցիան անցումն է էներգիայի փոխակերպման փոքր ծավալից մեծ ծավալի և ինտեգրման ու ընդհանուր հարմարվողականության ցածր մակարդակներից բարձր մակարդակի:

Սպեցիֆիկ էվոլյուցիան մշակույթի ֆիլոգենետիկական, ճյուղավորված ընթացքն է բազմաթիվ գծերով, առանձին մշակույթների հարմարվողական վերափոխությունը[364]:

Ս. Սանդերսոնը գտնում է, որ Մ.Սալինզի այս հոդվածի նպատակը Լ.Ուայթի ունիվերսալ և Ջ.Սթյուարդի բազմագիծ էվոլյուցիոն հայեցակարգերը հաշտեցնելու և ընդհանուր հայտարարի բերելու փորձ է: Մ.Սալինզը պնդում էր, որ այդ վեճը սխալ է և ոչ արդյունավետ, քանի որ էվոլյուցիան թե՛ կենսաբանական, թե՛ սոցիոմշակութային ոլորտներում երկակի բնույթ է կրում[365]:

---

[363]**Sahlins** 1960: 37.

[364]**Ibid**: 38.*«General cultural evolution, to summarize, is passage from less to greater energy transformation, lower to higher levels of integration, and less to greater all-round adaptability. Specific evolution is the phylogenetic, ramifying, historic passage of culture along its many lines, the adaptive modification of particular cultures».*

[365]**Sanderson** 2007: 155.

*Poor Man, Rich Man, Big-man, Chief: Political Types in Melanesia and Polynesia*

Ավելի վաղ հրատարակված իր մի աշխատության մեջ՝ «Սոցիալական շերտավորումը Պոլինեզիայում» (***Social stratification in Polynesia***, 1958)[366] Մ.Սալինզը քննում է սոցիալական շերտավորման պատճառները: Նա գտնում է, որ հասարակության շերտավորման վերին շերտի և հասարակության տեխնոլոգիական բազայի միջև առկա է կառուցվածքային կապ: Տնտեսության որոշ տարրեր, մանավանդ պարենը և մնացած հիմնական բարիքները բաշխելու եղանակը, ուղիղ կապ ունեն էկոլոգիայի և սոցիալական շերտավորման հետ[367]: Շերտավորման ֆունկցիոնալ չափանիշներն, ըստ Մ.Սալինզի, բաժանվում են երեք կատեգորիաների. 1) ***փնփեսականը*** ցույց է տալիս այն աստիճանը, թե որքանով է անձի բարձր կարգավիճակը կապված արտադրության, բաշխման և սպառման մեջ ունեցած վերահսկողական գործառույթների և արտոնությունների հետ, 2) ***սոցիալ-քաղաքականը*** դիտարկում է այն իրավասությունները, որոնք ունի բարձր կարգավիճակ ունեցող անձը միջանձնային հարաբերությունների կարգավորման ոլորտում (խոսքը իրավախախտների հանդեպ պատժամիջոցներ կիրառելու մասին է), 3) ***ծիսակարգային*** շերտավորումն արտահայտվում է գերբնականի հետ շփվելու հնարավորության տարբեր

366Քննադատությունը տե՛ս **Goldsmith** 2005: 80.
367**Sahlins** 1958: IX.

ստիճաններով և հատուկ ծիսական վարքով[368]: Մ.Սալինզի կարծիքով նախնադարյան առաջնորդների վերաբաշխիչ գործառույթները պետք է դիտարկել որպես կենտրոնացված քաղաքական իշխանության առաջացման խթան. առաջնորդն է ցեղային տնտեսության կենտրոնը, նա է մի տեղում կենտրոնացնում համայնքի ընտանիքներից ստացվող ապրանքները, իմա՝ համայնականների կողմից կուտակված հավելյալ արդյունքը, հասարակական գործունեության համար դրանք վերաբաշխելով[369]: Այս գործառույթը նրան տալիս է հեղինակություն, որի միջոցով նա իր իշխանությունը տարածում է նաև տնտեսության և հասարակության կյանքի այլ ոլորտների վրա[370]:

Այս գաղափարները Մ. Սալինզը զարգացրեց 1963 թ. հրատարակված հոդվածում *(«Poor Man, Rich Man, Big-man, Chief: Political Types in Melanesia and Polynesia»՝ Աղքատ մարդ, Հարուստ մարդ, Մեծ մարդ, Առաջնորդ. քաղաքական տեսակները Մելանեզիայում և Պոլինեզիայում)*, որտեղ Մ.-Սալինզը Օվկիանիայի ազգագրական նյութերի հիման վրա ներկայացնում է առաջնորդության երկու տեսակներ՝ մելանեզիական ***բիգմենի*** և պոլինեզիական ***առաջնորդի*** օրինակներով, որոնց ուսումնասիրությունը կարող է լույս սփռել վաղ պետականությունների ձևավորման սոցիալական մեխանիզմների վրա:

***Big-man*** եզրույթը մելանեզիական լինգվա-ֆրանկայից փոխառած ***«bikpela man»*** անգլիականացված արտա-

---

[368]**Sahlins** 1958: 3-4.
[369]**Ibid**: 3-4.
[370]**Ibid**: 4.

հայտությունն է, որը թարգմանվում է «մեծ, երևելի մարդ»: Եզրույթը տարածում է ստացել մասնագիտական գրականության մեջ Երկրորդ Աշխարհամարտից հետո: «Bikpela man»-ը առաջնորդն էր, որը քաղաքական ազդեցությունը ձեռք էր բերում հռետորական արվեստի և մասնավոր ու հասարակական հարստության փոխանակության հիմուտ կազմակերպման միջոցով[371]:

Մ.Սալինզը միմյանցից զանազանում է սոցիոքաղաքական կազմակերպման երկու ձևերը, մելանեզիական մանր, ցրված, իրավահավասար քաղաքական հատվածները և պոլինեզիական բուրգը, որն իր մեջ միավորում է ընտանիքների կողմից ղեկավարվող և առաջնորդի հետևորդ համարվող խմբերը[372]: Քաղաքական մասշտաբների, կառուցվածքային և պատմական տարբերությունները հանգեցրել են առաջնորդության տարբեր ձևերի: Մելանեզիական, ավելի թույլ զարգացած սոցիալական համակարգում քաղաքական բեմում big-man-ն է, իսկ ավելի զարգացած պոլինեզիական համակարգում՝ առաջնորդը: Տարբեր սոցիոլոգիական տեսակների իրավասությունների, արտոնությունների և իրավունքների տարբերությունները պայմանավորված են նրանց գործունեության սոցիալական ենթատեքստների տարբերությամբ: Որպես հետևանք՝ ինստիտուցիոնալ տարբերությունները արտահայտվում են նաև անձնական որակների տարբերությամբ[373]:

[371]**Lederman** 2015: 567.
[372]**Sahlins** 1963: 287.
[373]**Ibid**: 288-289.

Big-man-ի իշխանության գլխավոր առանձնահատկությունը անձնական իշխանությունն է, նա չի զբաղեցնում արդեն գոյություն ունեցող ղեկավար պաշտոնը, այլ հասնում է իր կարգավիճակին ընդհանուր զանգվածի հանդեպ գերակայություն ապահովող և հետևորդներ հավաքելու գործողությունների շնորհիվ: Big-man-ի կարգավիճակը քաղաքական պաշտոն չէ, այն իրենից ներկայացնում միջանձնային հարաբերություններում որոշակի կարգավիճակ, այդ իսկ պատճառով big-man եզրույթի հետ մեկտեղ կարող են օգտագործվել այլ բնութագրումներ՝ կարևոր մարդ, նշանավոր մարդ, առատաձեռն հարուստ կամ կենտրոնական մարդ[374]:

Մ. Սալինզը մեջբերում է big-man-ի գործունեության Բ. Մալինովսկիի բնութագրումը. բիգմենը կուտակում է «իշխանության ֆոնդը», նրա ստեղծած սոցիալական հարաբերությունները թույլ են տալիս նրան ազդել ուրիշների արտադրության վրա և դուրս քաշել նրանցից հավելյալ արդյունքը, և չնայած բիգմենի ուշադրության կենտրոնում հիմնականում կարճաժամկետ անձնական շահույթի ապահովումն է, սակայն օբյեկտիվորեն բիգմենի գործողությունները ծառայում են երկարաժամկետ հասարակական շահերին. «Իշխանության ֆոնդը» թույլ է տալիս ծավալել գործունեություն, որի մեջ ներառվում են նաև հասարակության մյուս խմբերը, բիգմենն ըստ այդմ վերտեղային կազմակերպության ստեղծման անփոխարինելի միջոց է[375]:

---

[374]**Ibid**: 289.
[375]**Ibid**: 292.

Big-man-ի իշխանության զարգացման երկու տարբերակ կա. կամ նրա գործունեությունից դժգոհ համայնականները կարող են ընդվզել և անգամ սպանել բիգմենին, այս դեպքում ներքին սահմանափակումների հետ հաշվի նստելու անհրաժեշտությունը արգելակում է բիգմենների քաղաքական ռեժիմը, սահմանափակում է քաղաքական իշխանության ինտենսիվացումը՝ պահելով էվոլյուցիոն զարգացման որոշակի մակարդակի վրա[376]: Կամ, ինչպես Պոլինեզիայում, այդ արգելքը և մելանեզիական բիգմենի ինստիտուտի հիմնարար թերությունները հաղթահարվում են, ինչը թույլ է տալիս հասնել սոցիոքաղաքական ավելի զարգացած մակարդակի[377]:

Պոլինեզիայում տնտեսական մոբիլիզացիան կախված չէր առաջնորդի ստեղծած անձնական կապերից և տնտեսական պարտավորություններից, խմբի տնտեսության կառավարման լծակները ժառանգական էին, և առաջնորդը այս կամ այն մարդու առջև ստորանալու կամ առանձնահատուկ առատաձեռնություն ցուցաբերելու կարիք չուներ: Առաջնորդն ունի հողային ռեսուրսների տնօրինման որոշակի արտոնություններ, ինչպես օրինակ՝ որոշակի մշակաբույսի հավաքման հանդեպ տաբուի և արգելքների հաստատում, ինչի նպատակը այդ մշակաբույսի պահուստային ֆոնդի ստեղծումն է (սովորաբար՝ կոլեկտիվ գործողությունների համար): Պահուստային ֆոնդի ստեղծումը առաջացնում է հետևյալ զարգացումները. 1) ստեղծվում է նոր խթան գյու-

---

[376]**Ibid**: 293.
[377]**Ibid**: 294.

ղատնտեսության զարգացման համար, քանի որ համայնակաները ստիպված սկսում են մշակել նոր մշակաբույսեր, 2) առաջնորդի գործունեության շնորհիվ ստեղծվում է հավելյալ արդյունք, որը կարող է օգտագործվել քաղաքական նպատակներով, 3) հավելյալ արդյունքի առկայությունը «իշխանության ֆոնդը» վերածում է կապիտալի, առհասարակ «իշխանության ֆոնդի» վերաբաշխումը պոլինեզիական քաղաքական արվեստի բարձրակետն է[378], 4) աջակցություն է ցուցաբերվում արհեստներին, արդյունքում զարգանում են տեխնոլոգիաները, 5) ֆինանսավորվում են լայնածավալ նախագծեր, ինչպես ասենք՝ ստեղծվում են ոռոգման համակարգեր (որոնց եկամուտը նույնպես ուղղվում էր դեպի «իշխանության ֆոնդ»), կրոնական կառույցներ և անցկացվում են ծիսակատարություններ, 6) ֆինանսավորվում են լայնածավալ ռազմական միջոցառումները և այլն: Այսպիսով՝ պոլինեզիական «իշխանության ֆոնդերը» հնարավոր են դարձնում բազմաթիվ սոցիալական գործողությունների էական քաղաքական կարգավորումը առավել լայնածավալ չափերով[379]:

Մ.Սալինզը գտնում է, որ պարզունակ քաղաքական կազմակերպության հաջողությունը պայմանավորված է տնտեսության վերահսկողության մակարդակով: Պարզունակ հասարակությունների գլխավոր արտադրական միավորը ընտանեկան տնտեսական բջիջն է, որի գործունեության հիմքում սեփական կարիքների, ոչ թե հասարակական

---

[378]**Ibid**: 295-296.
[379]**Sahlins** 1963: 296-297.

սպառման բավարարումն է: Պոլինեզիական առաջնորդի մեծ ներուժը պայմանավորված է այն *մեծ ճնշումով*, որը առաջնորդը կիրառում է ընտանեկան բջջի հանդեպ, և *հավելյալ արդյունք սփեղծելով*: Այդ հավելյալ արդյունքը այսուհետ օգտագործվելու է ընտանեկան բջջի սահմաններից դուրս՝ ապահովելով աշխատանքի խորացող բաժանումը, միասնական շինարարությունը, զանգվածային ծիսական և ռազմական միջոցառումները[380]:

Մ.Սալինզը եզրահանգում է, որ իշխանություն երևույթը պետք է դիտարկել ոչ թե ելնելով նրա մեջ ներառված անհատների, այլ ամբողջ հասարակության տեսակետից, և էվոլյուցիայի անկումների ու վերջնասահմանների պատճառները չփնտրել թույլ ղեկավարների մեջ: Ավելի արգասաբեր է, ըստ Մ. Սալինզի, հետևյալ հայեցակարգը. քաղաքական զարգացման շահույթը ավելի շատ ծառայում է հասարակությանը, քան անհատներին, ինչպես և ձախողումները ոչ թե մարդկանց, այլ կառուցվածքների ձախողումներ են[381]:

*Կարլ Պոլանյիի փնփեսագիփական հայեցակարգը*

Մ. Սալինզի գիտական ժառանգության մյուս կարևոր ստեղծագործությունն է «Քարեդարյան տնտեսությունը» (Stone Age Economics) աշխատությունն է: Այս գրքի ետնախորքը հասկանալու համար անհրաժեշտ է համառոտ նշել Մ.Սալինզի ուսուցիչներից մեկի՝ Կարլ Պոլանյիի հայեցակարգի մասին:

---

[380]**Ibid**: 300.

[381]**Sahlins** 1963: 300.

***Կարլ Պոլանյին*** (1886-1964) հունգարական ծագում ունեցող ամերիկյան տնտեսագետ, տնտեսագիտական մարդաբան և պատմաբան էր: Գերմանիայում և Ավստրիայում նացիստների իշխանության գալու պատճառով նա Ավստրիայից տեղափոխվել էր Մեծ Բրիտանիա, այնուհետև՝ ԱՄՆ[382]:

Կ. Պոլանյիի գիտական ժառանգությունը բաժանվում է երեք մասի. 1) XIX դարի կապիտալիստական հասարակության վերլուծություն (ինքնակառավարվող շուկայով համակարգի ծագումնաբանություն, այդ համակարգի գործարկման մեխանիզմներ, համակարգի հաստատման հետևանքներ և այլն) («Մեծ փոխակերպումը», 1944) աշխատության մեջ, 2) տնտեսագիտական-մարդաբանական աշխատություններ, որոնցում վերլուծված են նախաարդյունաբերական թե՛ հին (Հին Հունաստան, Միջագետք), թե՛ ժամանակակից (Պոլինեզիա) հասարակությունները, 3) տնտեսագիտության դասական ներկայացուցիչների (Արիստոտելից մինչև XIX դար) աշխատանքների ուսումնասիրություն[383]:

Կ. Պոլանյին գտնում էր, որ նախաարդյունաբերական հասարակությունների տնտեսությունը սկզբունքորեն տարբերվում է ժամանակակից արդյունաբերական հասարակությունների տնտեսությունից: Առաջին հերթին նրանով, որ նախարդյունաբերական հասարակությունների տնտեսական գործունեության ոլորտը ամբողջությամբ ենթարկվում է սոցիալական ոլորտին, այսինքն գործունեության սոցիալա-

---

[382]**Розинская, Латов** 2006: 12-13.

[383]**Розинская** 2000: http://www.dslib.net/econom-istoria/jekonomicheskie-vozzrenija-k-polani.html

կան շարժառիթներն ավելի կարևոր են, քան գործունեության տնտեսական խթանները, հետևաբար ավանդական տնտեսագիտությունն իր հասկացություններով (ռացիոնալ ընտրություն, մաքսիմալացում, ռեսուրսների արդյունավետ բաշխում և այլն) կիրառելի չէ այս հասարակարգերի ուսումնասիրման դեպքում[384]:

Կ. Պոլանյիի հայեցակարգի զարգացման արդյունքում ձևավորվեցին երկու դպրոցներ. նախարդյունաբերական հասարակությունների ուսումնասիրման ավանդական մոտեցումների կողմնակիցները կազմեցին այսպես կոչված ***«ֆորմալիստական»*** դպրոցը, իսկ Կարլ Պոլանյին, Կոնրադ Արենսբերգը և Հարրի Փիրսոնը (նրանց հետագայում միացավ Մ.Սալինզը) հիմնեցին ***«սուբստանտիվիստական»*** (substantial – իրական, առարկայական, բովանդակային) դպրոցը[385]:

Սուբստանտիվիստները պնդում էին, որ անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալական և մշակութային ինստիտուտների ազդեցությունը մարդկանց տնտեսական վարքի և առհասարակ տնտեսության վրա: Ըստ սուբստանտիվիստների, միայն նման տեսությունը թույլ կտա ճիշտ նկարագրել տնտեսության գործարկումը ոչ շուկայական համակարգերում, այսինքն այնտեղ, որտեղ շուկայական մեխանիզմները սաղմնային վիճակում են և ամբողջությամբ գտնվում են սոցիալական ինստիտուտների վերահսկողության տակ[386]:

---

[384]**Там же.**
[385]**Elardo** 2013: 269.
[386]**Розинская** 2006: 19-21.

Կ.Պոլանյին համարում էր, որ իրական տնտեսությունների ինստիտուցիոնալ ձևավորումը ուսումնասիրելիս անհրաժեշտ է վերլուծել, թե ինչպես են այդ տնտեսությունները ձեռք բերում ներքին միասնականություն և կայունություն: Ըստ Կ.Պոլանյիի, նրանք դրան հասնում են ինտեգրման երեք ձևերի միջոցով, որոնք զուգահեռաբար գոյություն ունեն տնտեսության տարբեր մակարդակներում և տարբեր հատվածներում: Դրանք են՝ ***1) փոխադարձությունը (ռեցիպրոկցիան)***, ***2) վերաբաշխումը*** և ***3) փոխանակությունը***[387]:

Փոխադարձությունը սիմետրիկ խմբերում համապատասխան կետերի միջև տեղաշարժն է, վերաբաշխումը՝ ապրանքների միախմբումն է մեկ կենտրոնում, հետագայում նրանց վերաբաշխումով և տեղաշարժով կենտրոնից դեպի ուրիշ կետեր, փոխանակումը՝ ձեռքից ձեռք փոխադարձ տեղաշարժերն են շուկայական համակարգի պայմաններում: Հետևաբար, փոխադարձությունը ենթադրում է սիմետրիկ տեղաբաշխված խմբեր, վերաբաշխումը կախված է խմբում կենտրոնացվածության որոշակի աստիճանից, փոխանակությունը ենթադրում է գնաառաջացնող շուկաների համակարգի առկայություն[388]:

Կ.Պոլանյիի հայացքները մեծ ազդեցություն ունեցան տնտեսական մարդաբանության զարգացման վրա, ինչպես նաև խթան հանդիսացան ազգագրագետների, հնագետների և պատմաբանների համար նախարդյունաբերական հա-

[387]**Поланьи** 2006: 51.
[388]**Там же.**

սարակությունների տնտեսական համակարգերը նորովի ուսումնասիրելու համար[389]: 1970-ականների վերջում բանավեճերի հիմնական ալիքը մարեց՝ պարբերաբար վերսկսվելով հետագա տարիներին, սակայն ընդհանուր հայտարարի այդ վեճերը չհանգեցրին[390]:

*Մ. Սալինզի տնտեսագիտական հայացքները*

Մ.Սալինզը որպես սուբստանտիվիստական մոտեցման կողմնակից, պնդում էր, որ փոխանակումն ի վերջո կախված է առևտրական գործընկերների միջև գոյություն ունեցող սոցիալական հարաբերությունների բնույթից, ըստ այդմ էլ «տնտեսագիտական» եզրույթի նշանակությունը կարող է փոփոխվել՝ կապված սոցիալական, մշակութային և ինստիտուցիոնալ կառուցվածքների տարբերություններից[391]:

Մ.Սալինզի կարծիքով՝ նյութական հոսքը արխաիկ նախապետական համայնքներում երաշխավորում կամ առաջացնում է սոցիալական հարաբերություններ[392]:

Իշխանական լծակներ ունեցողները իրականացնում են վերաբաշխում, որը երկու նպատակների է ծառայում. 1) առաջինը գործնական գործառույթն է. նյութական առումով վերաբաշխումը պահպանում է հանրույթը կամ նրա գործունեությունը, 2) երկրորդը գործիքակազմային գործառույթն է. վերաբաշխումը դառնում է ծես կամ միասնության և կենտ-

[389]**Hart** 2013: 219.
[390]**Elardo** 2013: 270.
[391]**Ibid**: 269-270.**Golub** 2013: 734.
[392]**Салинз** 1999: 171

րոնական իշխանությանը ենթարկվելու խորհրդանիշ, այսինքն վերաբաշխումը պահպանում է կորպորատիվ կառուցվածքը սոցիալական առումով: Վերաբաշխումը համակարգում է կառուցվածքը, ձևավորում է միասնականության ոգի, ստեղծում է հասարակական կարգի և հասարակական գործունեության կենտրոնացված կազմակերպություն[393]:

Ազգակցային-աստիճանային փոխադարձությունը հատուկ է սոցիոքաղաքական էվոլյուցիայի վաղ փուլերին: Մ. Սալինզը փոխադարձության այս ձևերը բաժանում է երեք տեսակների՝ 1) ընդհանրացված փոխադարձությունն է (համախմբման բարձրագույն ձև[394]), որը հանդես է գալիս որպես աստիճանային տարբերությունների գործարկման մեխանիզմ[395], 2) հաշվեկշռված փոխադարձություն, որը հանդես է գալիս որպես անմիջական փոխանակում, 3) բացասական փոխադարձությունը. դրանք այն գործողություններն են, որոնց միջոցով ձգտում են ձեռք բերել ինչ-որ բան, փոխարենը ոչինչ չտալով[396]:

Առաջնորդի իրականացվելիք վերաբաշխումը ըստ էության նույնպես հիմնված է ընդհանրացված փոխադարձության վրա: Վերաբաշխումը միանգամից չի առաջանում, այն աստիճանական և դանդաղ կայացող կենտրոնացվածության գործընթաց է: Որոշիչ գործոն է դառնում փոխադարձության քաղաքական կազմակերպումը. այնտեղ, որտեղ ազգակցային փոխադարձությունը պայմանավորվում է

---

[393]**Там же**: 172.
[394]**Там же**: 177.
[395]**Там же**: 200.
[396]**Салинз** 1999: 191-193.

քաղաքական համախմբվածությամբ՝ բխեցվելով ավանդական պարտականություններից, այնտեղ էլ նա ձեռք է բերում տարբերակիչ գծեր, վերածվելով առաջնորդական վերաբաշխման[397]:

*«Սալինզի պարադոքսը»*

Մ. Սալինզը նշմարեց կարևոր փոփոխությունների մի համալիր, որն ի հայտ է գալիս յուրացնող տնտեսաձևից արտադրող տնտեսաձևին անցնելու ժամանակ: Վերլուծելով որսորդների և հավաքիչների հանրույթների մասին նյութերը՝ Մ. Սալինզը եզրահանգում է, որ այդ հանրույթները կարելի է բնութագրել որպես *«նախնական առատության հանրույթներ»:* Գաղութային համակարգի ծավալման արդյունքում որսորդ-հավաքիչները հայտնվեցին ծայրահեղ բարդ և դժվարին պայմաններում, սակայն մինչ այդ նրանք հոգում էին իրենց կարիքները՝ շատ ավելի քիչ ջանքեր թափելով: Սննդի առատության, հանգստին հատկացված ժամերի և այլ չափանիշներով որսորդների և հավաքիչների հանրույթները նախագաղութային ժամանակաշրջանում ցուցաբերում են հողագործների հանրույթների համեմատությամբ ավելի բարվոք վիճակ: Այս երևույթը կոչվեց ***«Սալինզի պարադոքս»***:

Մ. Սալինզը գտնում է, որ որսորդների և հավաքիչների հանրույթներում նյութական պահանջմունքների համեստությունը ինստիտուցիոնալ բնույթ ունի. այն վերածվել է դրական մշակութային գործոնի, որն արտահայտվում է մի

397 **Там же**: 191-193.

շարք տնտեսավարական օրենքների ամբողջական համալի-րի տեսքով[398] (սննդի ավելցուկի տնօրինում, որսորդության համար պիտանի տարածքների ընտրություն, սեփականութ-յան հանդեպ յուրօրինակ մոտեցում և այլն):

Մ Սալինզը նկատում է, որ *«մենք հակված ենք որ-սորդներին և հավաքիչներին աղքատ համարել, այնինչ, հնարավոր է, ավելի ճիշտ կլիներ նրանց համարել ազատ, քանի որ նրանք ոչինչ չունեն»*[399]*:*

Որսորդությամբ և հավաքչությամբ զբաղվողները օբ-յեկտիվորեն ունեն կյանքի ցածր մակարդակ: Բայց մյուս կողմից, նրանք ապահովված են արտադրության համապա-տասխան միջոցներով, և ըստ այդմ էլ ի զորու են բավարա-րել իրենց կարիքները: Հաջորդ փուլում տնտեսության էվոլ-յուցիան ընթանում է միմյանց հակասող երկու ուղիներով՝ հարստացման և աղքատացման, բնական հարստություննե-րի յուրացման և մարդու սեփականազրկության ուղիներով: Առաջադեմ բնույթ ունի տեխնոլոգիական ասպեկտը. աճում է ծառայությունների և առարկաների թիվը, աճում է յուրաց-ված և մշակույթի զարգացմանն ուղղված էներգիայի քանա-կը, աճում է աշխատանքի արտադրողականությունը, խորա-նում է աշխատանքի բաժանումը, աճում է անկախությունը բնական պայմանների ազդեցությունից: Երկրագործությունը թույլ է տալիս նորքարեդարյան հանրույթներին պահպանել սոցիալական կյանքի կազմակերպման բարձր մակարդակն

398**Салинз** 1999: 30.
399**Там же**: 30.

այնտեղ, որտեղ բնությունը բացարձակապես չէր տրամադրում պայմաններ մարդկանց գոյության համար:

Մյուս կողմից՝ նորքարեդարյան հեղափոխությունը կյանքի պայմանները բարելավելու փոխարեն պարտադրեց աշխատանքի ավելի խիստ ռեժիմ և շարժման մեջ դրեց անհավասարության բարդ մեխանիզմը: Դա սոցիալական կառուցվածքների և տեխնոլոգիաների էվոլյուցիա էր այն պարագայում, երբ հրապարակներում մարդիկ սովամահ էին լինում. *«սովը որպես երևույթ աճում է թե՛ բացարձակ, թե՛ հարաբերական առումով մշակույթի էվոլյուցիային զուգընթաց»*[400]*:*

Զարգացող կառույցները միաժամանակ քաղաքական էին և տնտեսական, նրանք ուժի և միևնույն ժամանակ աղքատացման կառույցներ էին, որոնք հանրույթների ներսում նպաստում էին հասարակության մի մասի հարստացմանը՝ խտրականության ենթարկելով մյուսներին[401]:

Պարզունակ կացութաձևով ապրող ժողովուրդները համարյա չունեն ունեցվածք, բայց նրանք աղքատ չեն, եզրահանգում է Մ. Սալինզը: Աղքատությունը սպառման առարկաների փոքր քանակությունը չէ, այլ նախևառաջ սոցիալական կարգավիճակ է, և որպես այդպիսին՝ քաղաքակրթության հայտնագործումն է, այն ձևավորվել է քաղաքակրթության հետ զուգընթաց՝ դասակարգերի և հարկային համակարգի առաջացման հետ միասին[402]:

---

[400]**Салинз** 1999: 50.
[401]**Там же**: 50-51.
[402]**Там же**: 51.

Նման գաղափարներ տեղ են գտել նաև Մ.Սալինզի վերջին աշխատության («The Western Illusion of Human Nature», Մարդկային բնության արևմտյան պատրանքը, 2008) մեջ, որտեղ հեղինակը գտնում է, որ արևմտյան հասարակության հիմքում մարդկային բնույթի մասին սխալ պատկերացումներն են[403]:

«Սալինզի պարադոքսի» քննադատները մասամբ միայն ընդունեցին նրա տեսությունը: Նորքարեդարյան հեղափոխությունն իհարկե կործանեց որսորդների և հավաքիչների կարծես թե նախնական դրախտային, բայց միևնույն ժամանակ շատ անհուսալի կենսապայմանները, բայց և ստեղծեց հավելյալ արդյունք, որը դարձավ մարդկության ապագա վերելքի նախապայմանը[404]:

***Հարրիս Մարվին***

*«Ժամանակակից հասարակագիտության ամենախորթափանց փեսաքանը»*[405]՝ Մարվին Հարրիսը (1927-2001), ***«մշակութային մատերիալիզմի»*** ուղղության ստեղծողներից է: Նրա առավել հայտնի աշխատություններն են՝ «Cows, Pigs, Wars, and Witches» (Կովերը, խոզերը, պատերազմներն ու վհուկները, 1974) և «Cannibals and Kings» (Մարդակերներն ու թագավորները, 1977), «The Rise of Anthropological Theory", The RAT, 1968 (Մարդաբանական տեսությունների

---

[403]**Hansen** 2021: 57.
[404]**Ibid**: 66.
[405]**Shiffer** 1983: 191.

կայացումը) և «Cultural Materialism» (Մշակութային մատերիալիզմ, 1979) ստեղծագործությունները:

Ըստ Մ. Հարրիսի՝ «մշակութային մատերիալիզմը» ոչ հեգելյան հայեցակարգ է, որի իմացաբանական արմատները սերում են Դ. Հյումի և բրիտանական էմպիրիկների փիլիսոփայական ավանդույթներից[406]:

*«Մշակութային մատերիալիզմը հայեցակարգ[407] է, որը ես համարում եմ առավել արդյունավետ հասարակությունների և մշակույթների միջև առկա նմանություններն ու տարբերությունները հասկանալու համար: Դրա հիմքում այն պարզ նախադրյալն է, որ մարդու հասարակական կյանքը պատասխան է երկրային գոյության գործնական խնդիրներին[408]»*:

***«Մատերիալիզմ»*** եզրույթը Հարրիսը բացատրում է Կ. Մարքսի ուսմունքի հանդեպ (արտադրության և մյուս նյութական գործընթացների որոշիչ ազդեցության մասին դրույթի հանդեպ) հարգանքով[409], սակայն մյուս կողմից նա շեշտում է, որ ձգտում է կատարելագործել մարքսյան հայեցակարգը՝ հրաժարվելով հեգելյան դիալեկտիկ հակասություններ դրույթից և մարքսիստների ուսումնասիրած նյութական գործոններին ավելացնելով վերարտադրական ճնշման և էկոլոգիայի փոփոխականները[410]:

---

[406]**Harris** 1979: XI.

[407]Տերստում՝ strategy:

[408]**Harris** 1979: IX. *«It is based on the simple premise that human social life is a response to the practical problems of earthly existence».*

[409]**Ibid**: X.

[410]**Ibid**: IX.

Մ. Հարրիսի ձևակերպմամբ՝ մշակութային մատերիալիզմը ուսումնասիրում է համակարգային այն փոխազդեցությունները, որոնք կան մտածողության և վարքի միջև, բախումները, աստիճանական և հեղափոխական փոփոխությունները, հարմարվողականության և դեզադապտացիայի երևույթները և այլն: Դիալեկտիկա բառից հրաժարվելը չի նշանակում, որ վերոհիշյալ գործոնները հաշվի չեն առնվելու, այլ նշանակում է, որ դրանք պետք է ուսումնասիրվեն էմպիրիկ և օպերատիվ վերահսկողությամբ, այլ ոչ թե որպես քաղաքական ծրագրի լրացում[411]:

***«Մշակութային»*** բառի ընտրությունն, ըստ Մ. Հարրիսի, պայմանավորված է նրանով, որ սոցիոմշակութային երևույթների նյութական պատճառները տարբերվում են ոչ օրգանական կամ օրգանական դետերմինիզմի պատճառներից: Մշակութային մատերիալիզմն, օրինակ, հակադրվում է կենսաբանական ռեդուկցիոնիստական մատերիալիզմին, որը մշակութային նմանություններն ու տարբերությունները բացատրում է ռասայական, սոցիոկենսաբանական և էթոլոգիական տարբերություններով: Մշակութային եզրույթը ուշադրությունը կենտրոնացնում է այն փաստի վրա, որ դիտարկվող հայեցակարգը սինթեզ է, որը փորձում է հաղթահարել առարկայական, էթնիկ և ազգային սահմանները[412]:

Մ. Հարիսն առանձնացնում է հասարակությունների հինգ ունիվերսալ «էթիկական վարքային կատեգորիաներ»: Դրանք են 1) ***արտադրության եղանակը,*** 2) ***վերարտադ-***

[411]**Ibid**: XI.
[412]**Harris** 1979: XII.

***րության եղանակը***, 3) ***փնային փնփեսությունը***, 4) ***քաղաքական փնփեսությունը*** (խոսքը խմբերում, գյուղերում, ցեղապետություններում, պետություններում և կայսրություններում արտադրության, վերարտադրության, փոխանակման և սպառման կազմակերպման մասին է[413]), 5) ***վարքային վերնաշենքը*** (արվեստ, ծեսեր, սպորտ)[414]:

Մ. Հարրիսը գտնում է, որ մշակութային մատերիալիզմի սկզբունքները նախանշել է դեռ Կ.Մարքսն իր հայտնի դրույթով. *«Նյութական կյանքի արտադրության եղանակը պայմանավորում է կյանքի սոցիալական, քաղաքական և հոգևոր գործընթացներն առհասարակ: Ոչ թե մարդկանց գիտակցությունն է որոշում նրանց կեցությունը, այլ նրանց հասարակական կեցությունն է որոշում նրանց գիտակցությունը»:* Մարքսյան այս դրույթը Մ. Հարրիսը համարում է խոշոր քայլ գիտության զարգացման բնագավառում, քայլ, որին համարժեք է Դարվինի բնական ընտրության հայեցակարգը: Սակայն XX դարի երկրորդ կեսի մարդաբանական ուսումնասիրությունների ենթատեքստում «արտադրության եղանակ» արտահայտությունը իմացաբանական երկիմաստություն է ձեռք բերել, բացի այդ, անտեսվել է «վերարտադրության եղանակի» գործոնը, չի տարբերվել էթիկականն էմիկականից[415] և վարքայինը՝ մտածողականից, հետևաբար՝

[413]**Ibid** 1979: 53.

[414]**Ibid**: 51-52.

[415] Emic and etic — էմիկական և էթիկական՝ եզրույթներ, որոնք սկզբնապես կիրառվում էին լեզվաբանության մեջ (ֆոնետիկ և ֆոնեմիկ), հետագայում լայն կիրառում ստացան սոցիոլոգիայի և մարդաբանության մեջ, էմիկականը դա մոտեցումն է ներքին տեսանկյունից, էթիկականը՝ արտաքին:

անհրաժեշտ է վերաձևակերպել մարքսյան դրույթը[416]: Ըստ այդմ, վերոհիշյալ դրույթի մշակութամատերիալիստական տարբերակը հետևյալն է.

*«Արտադրության և վերարտադրության էթիկական եղանակներն ամենայն հավանականությամբ պայմանավորում են տնային և քաղաքական տնտեսությունները, որոնք իրենց հերթին պայմանավորում են են վարքային մտածողական և էմիկական կառուցվածքները»[417]:*

Մի փոքր ավելի մանրամասն ներկայացնենք «վերարտադրության եղանակը», որին Մ. Հարրիսն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում: Այն, ըստ Մ. Հարրիսի, ամփոփում է իր մեջ *«տեխնոլոգիաները և մեթոդները, որոնք կիրառվում են պոպուլյացիայի չափերի ավելացման, սահմանափակման և պահպանման համար»[418]:* Վերարտադրության ճնշումն ի հայտ է գալիս հակաբեղմնավորման անվտանգ և արդյունավետ բացակայության հետևանքով և պարբերաբար հանգեցնում էր սննդամթերքի արտադրության ինտենսիֆիկացման:

Ինտենսիֆիկացման օրինաչափ հետևանքը շրջակա միջավայրի ուժասպառությունն է, ինչն ընդհանուր առմամբ հանգեցնում է արտադրության նոր համակարգերի ի հայտ գալուն: Իրենց հերթին արտադրության նոր համակարգերին արդեն բնորոշ է օրինականացված բռնությունը, շահագործումը և ծանր աշխատանքը: *«Այսպիսով, վերարտադրության ճնշումը, ինտենսիֆիկացումը և շրջակա միջավայրի ու-*

[416]**Harris** 1979: 55.
[417]**Ibid**: 55-56.
[418]**Ibid**: 52.

*ժասպառությունն են այն բանալին, որը թույլ է տալիս հասկանալ ընտանիքի կազմակերպման, սեփականության հետ կապված հարաբերությունների, քաղտնտեսության և կրոնական համոզմունքների (ներառյալ դիետիկ նախասիրությունները և սննդային տաբուները) էվոլյուցիան»*[419]:

Առաջավոր Ասիայում Մ. Հարրիսն առանձնացնում է *«վերարտադրության ճնշման»* երկու փուլ. 1) առաջինը հետևեց սառցակալման դարաշրջանին և ստիպեց մարդկանց անցնել հողագործությանն ու անասնապահությանը, արդյունքում 4000 տարվա մեջ Առաջավոր Ասիայի բնակչությունն աճեց 40 անգամ՝ հասնելով մոտ 3 միլիոնի, մեծ աճ գրանցեց ինտենսիֆիկացումը, անտառահատումը, հողերի ուժասպառությունը, սննդակարգում առաջացավ սպիտակուցի պակաս, և Առաջավոր Ասիան այս ամենի արդյունքում հայտնվեց խորը կառուցվածքային փոփոխությունների առջև, 2) երկրորդը առաջին պետությունների ի հայտ գալն է, ինչը գյուղատնտեսական արտադրության ինտենսիֆիկացման հետևանք է՝ ի պատասխան վերարտադրության ճնշման. *«ենթարկման պետական կառուցվածքի զարգացման պրոցեսի առանցքային մասը այնպիսի ինստիտուտների ստեղծումն է, որոնք պատասխանատու են նստակյաց բնակավայրերում արտադրության ինտենսիֆիկատորների խրախուսման համար»*[420]:

---

[419]**Harris** 1977: 9, 14-15:

[420]**Harris** 1979: 79-80. Հարրիսը գտնում է, որ հայտնի ունիվերսալ կրոնները նույնպես կարելի է դիտարկել վերարտադրողական ճնշումը ինտենսիֆիկացիայի, շահագործման և պատերազմների միջոցով թուլացնելու ենթատեքստում, տե՛ս **Harris** 1979: 111.

Մ.Հարրիսը սոցիոքաղաքական էվոլյուցիայի փուլերի հարցում նույնպես հետևում է Է.Սերվիսի և Մ.Սալինզի առաջարկած սխեմային: Նա նույնպես մեծ նշանակություն է տալիս ցեղապետություններին՝ գտնելով, որ պետականության բոլոր որակական բաղադրիչներն այս կամ չափով արդեն առկա են ցեղապետության մակարդակում[421]: Բերքի ավելցուկի ասիմետրիկ վերաբաշխումն իրենից ներկայացնում է հարկադրման սաղմնային ձև, ցեղապետին Մ.Հարրիսն անվանում է ինտենսիֆիկատոր–վերաբաշխիչ–ռազմիկ: Զարգացած ցեղապետություններում ցեղապետն արդեն նկատելի արտոնություններ ունի, ակնհայտ է անհավասարությունը շարքային համայնականների և ցեղապետին մոտ կանգնած էլիտայի միջև, հնարավոր է նաև ստրկատիրությունը: Վերարտադրության ճնշումը զարգացած ցեղապետություններում լուծվում է ոչ թե ծնելիության կարգավորման, այլ տարածքային նվաճումների, պատերազմական թալանի և արտադրության մշտական ինտենսիֆիկացման միջոցով[422]:

Այդուհանդերձ, ոչ բոլոր ցեղապետություններն են վերածվում պետությունների: Սոցիալական շերտավորումը կարող է առաջացնել քաղաքական անկայունություն, տարաձայնություններ խմբերի միջև, ապստամբություններ, ցեղապետության տրոհում և այլն, ինչը պարբերաբար թուլացնում է էլիտայի վերաբաշխիչ և ոստիկանական-ռազմական գործառույթները[423]:

---

[421]**Ibid**: 100.
[422]**Ibid**: 101.
[423]**Ibid**.

Մ.Հարրիսը գտնում է, որ ցեղապետությունից պետություն անցումն ավելի ճիշտ է նկարագրել ոչ թե որպես որակական թռիչք կամ մեկ ձևից մյուսի անցում, այլ որպես շեղումների ուժեղացման գործընթացի էքսպոնենտալ աճ: Այդ գործընթացը սկսվել է ինտենսիֆիկատոր–վերաբաշխիչ–ռազմիկի կարգավիճակի նախնական մակարդակից և շարունակվել է մինչև տիրապետող դասակարգի և գյուղացի-արտադրողների դասակարգի միջև տարբերությունների ամրապնդումն ու կայունացումը: Այդ կետն անցնելուն պես շեղումների ուժեղացումը շարունակվում է նույն էքսպոնենտալ հետագծով[424]:

Ցեղապետությունից պետություն անցումը պայմանավորված է 1) ***էներգետիկ հիմքի մեծությամբ***. այն պիտի բավականին մեծ լինի մի քանի հազարանոց մշտական ռազմառուստիկանական խմբավորման կենսական կարիքներն ապահովելու համար, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ ցեղապետությունում կիրառվի ինտենսիֆիկացման բարձր աստիճանով արտադրության որևէ եղանակ, ինչպես, օրինակ՝ ոռոգովի երկրագործությունը կամ նաև բնական տեղումներով ոռոգվող խառը տեսակի հողագործությունը, 2) ***գյուղացիների արտագաղթի հնարավորության բացառումով***. Հարրիսը տվյալ դեպքում մեջբերում է Ռոբերտ Կարնեյրոյի «սահմանափակ միջավայրի» հայեցակարգը, որին մենք կանդրադառնանք հաջորդ ենթավերնագրում:

Իրավիճակի վրա իրենց ազդեցությունը պետք է որ թողնեին տարաբնույթ կառուցվածքային և վերնաշենքային

[424]**Ibid.**

մեխանիզմները՝ ընդհանուր ծագումը, ընդհանուր նախնիների պաշտամունքը, ավագ և կրտսեր ազգակից ճյուղերը, էկզոգամ ամուսնական հարաբերությունները և այլն: Որ չափով որ էլիտար դասակարգը կարող է օգտակար լինել շարքային համայնականին (օրինակ՝ ոռոգման համակարգերի կառուցումով, արտաքին հարձակումներից պաշտպանությունով, վարարումների և հողագործական սեզոնների ճիշտ կանխատեսումով), այդ չափով էլ նրանք կարող էին ակնկալել, որ գյուղացիները հարկը կվճարեն առանց ավելորդ խնդիրների կամ նույնիսկ մեծ պատրաստակամությամբ[425]:

Այս հանգամանքը բացատրում է, թե ինչու էին վաղ պետականություններում այդքան ռեսուրսներ ներդնում կրթողային շինություններ, տաճարներ, բուրգեր և այլ կրոնական կառույցներ ստեղծելու համար. էլիտաները փորձում էին վերահսկել բնական և գերբնական ուժերը, չէ՞ որ միշտ ավելի հեշտ է հասնել հնազանդության ծիսական պատրանքներ ստեղծելով, քան ոստիկանական-ռազմական հարկադրանքի միջոցով[426]:

Բացի այդ, կոթողային կառույցները իրենց դերն էին խաղում վերաբաշխման պետական համակարգերի անխափան գործարկման մեջ, դրանք վայրեր էին, որտեղ անցկացվում էին վերաբաշխիչ խնջույքներ, բնության ուժերի վերահսկողությանը նվիրված ծեսեր, և որտեղ կառուցված էին

[425]**Harris** 1979: 102.
[426]**Ibid.**

մահացած բիգմենների, հերոսների առատաձեռնության ու խիզախության հուշարձանները[427]:

Որքան շատ և խիտ է բնակչությունը, այնքան խոշոր է վերաբաշխիչ ցանցը և հզոր է առաջնորդ-վերաբաշխիչը[428]: Որոշ իրադարձությունների բերումով իշխանության իրականացումը մի կողմից վերաբաշխիչների և նրանց մերձավորների, իսկ մյուս կողմից՝ սննդամթերքի սովորական արտադրողների միջև այն աստիճան շեղվեց նախնական հավասարակշռված վիճակից, որ վերաբաշխիչներն ու նրանց ղեկավարները դարձան սոցիալական կյանքի հիմնական հարկադիր ուժը: Երբ դա տեղի ունեցավ, կենտրոնական պահեստի վճարները դադարեցին լինել կամավոր և վերածվեցին հարկերի, գյուղատնտեսական հողերն ու բնական ռեսուրսներն էլ այլևս հասանելի չէին բոլորի համար: *«Վերաբաշխիչներն էլ դադարեցին ղեկավար լինել: Նրանք դարձան թագավորներ»[429]:*

*«Առաջնային պետությունների էվոլյուցիայի պարագայում ամենահատկանշականը այդ չգիտակցված գործընթացի արդյունքն է. այս հսկայական ձևափոխման մասնակիցներն ըստ ամենայնի չգիտեին, թե իրենք ինչ են ստեղծում: Գործընթացի սկզբում ոչ ոք չէր կարող կանխատեսել, թե արդյունքում ինչ է ստացվելու»,* - գրում է Մ.Հարրիսը: Պետական իշխանության համախմբումը տեղի ունեցավ ըն-

[427]**Harris** 1977: 86.

[428] Մ. Հարրիսը խոսում է վերաբաշխիչ գործառույթի ծիսականացման մասին չինական, հնդկական և քրիստոնեական համակարգերում, տե՛ս **Harris** 1979: 109.

[429]**Harris** 1977: 86.

թացիկ մարտահրավերներին այնպիսի պատասխանների ձևով, որոնք բնական էին, այդ պահին շահեկան էին ամբողջ համայնքի համար և շատ աննշան աստիճանով էին շեղվում համայնքի չգրված օրենքներից, ընդ որում պետական իշխանության ամեն նոր ձեռքբերում շատ աննշան կերպով էր շեղվում արդեն գոյություն ունեցող պրակտիկայից: *«Այն պահին, երբ հին խորհրդի մնացուկներն այլևս անզոր էին թագավորի աճող իշխանության առջև, արդեն ոչ ոք չէր հիշում այն ժամանակները, երբ թագավորն ընդամենը հոչակավոր մումի*[430] *էր, որի բարձր կարգավիճակը պայմանավորված էր նրա ընկերների և ազգականների բարեգթությամբ»*[431]:

Որևէ տարածաշրջանում առաջնային պետություններ ի ձևավորումը արմատական փոփոխությունների է հանգեցնում. հարևան ցեղապետությունները կամ պետք է անցնեն պետականաստեղծման շեմը, կամ ընկնեն սոցիալական նոր Լևիաթանի[432] ռազմական իշխանության տակ[433]:

Պետականաստեղծման շեմն անցած երկրորդական պետությունների ձևավորումն ընթացել է բազմաթիվ տարբերակներով. մի մասը ձևավորում է պետություն իրենց առավել առաջադեմ հարևանների թալանչիական արշավանքներից պաշտպանվելու համար, մյուսները ռազմավարական

---

430 Մումի – բիգմենի անվանումը Բուգենվիլում (Սողոմոնյան կղզիներից ամենախոշորը), siuai կամ siwai ցեղի բնիկների մոտ, տե՛ս **Harris** 1977: 81.

431 **Ibid**: 94.

432 Այստեղ Մ. Հարրիսը հիշատակում է անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբսի «Լևիաթան» աշխատությունը, որը նվիրված էր պետություն երևույթին:

433 **Harris** 1979: 102-103.

առևտրական ուղիների և տարանցիկ ապրանքների ծավալի աճի (սովորաբար այս երևույթն առկա է բոլոր այն տարածաշրջաններում, որտեղ կա պետությունների աճ) վերահսկումը իրենց ձեռքում պահելու համար: Եվս մի տարբերակ ունենք ծայրամասերում ապրող քոչվոր ժողովուրդների պարագայում. նրանք համախմբվում և ստեղծում են պետություն երկրագործական առաջնային պետություններն ավելի արդյունավետ թալանելու համար[434]: Նույն տրամաբանությամբ էլ բնակչության ցածր խտություն ունեցող անասնապահական ժողովուրդները՝ թուրքերը, մոնղոլները, հոները, մանջուրներն ու արաբները, բազմաթիվ անգամներ են ստեղծել պետություններ, բայց միայն արդեն գոյություն ունեցող կայսրությունների (Չինական, Հռոմեական և այլն) հանդեպ ոտնձգությունների արդյունքում: Արևմտյան Աֆրիկայում երկրորդական պետություններ ի հայտ են եկել մուսուլմանների և եվրոպացիների կողմից ստրկավաճառությունը, ոսկու և փղոսկրի առևտուրը վերահսկելու փորձերի արդյունքում, այնինչ Աֆրիկայի հարավում XIX դարում զուլուսները ստեղծեցին պետություն իրենց հայրենիք ներխուժած հոլանդացի գաղութարարների ռազմական սպառնալիքին դիմակայելու համար[435]:

Մ. Հարրիսը գտնում է, որ պետության զարգացումը չի նվազեցնում ենթակառուցվածքի էկոլոգիական փոփոխականների նշանակությունը. բնությունը վերահսկելու, արտադրությունն ընդարձակելու և ինտենսիֆիկացնելու ցան-

[434] **Harris** 1977: 94.
[435] **Ibid**.

կացած փորձ ունի իր բնորոշ հետևանքները՝ անկախ տեխնիկական առաջընթացի մակարդակից: Եվ դասակարգային շահագործման յուրաքանչյուր համակարգ իրացնում է իր էվոլյուցիոն ներուժը որոշակի էկոլոգիական և ժողովրդագրական ենթատեքստում: Միայն դասակարգերի ներքին դինամիկայով հնարավոր չէ բացատրել պետական համակարգերի հիմնական տարատեսակները. դասակարգային հարաբերությունների առանձնահատկությունները մեծապես պայմանավորված են մշակույթ/բնություն սահմանին տեղի ունեցող փոխազդեցություններով[436]:

Մ. Հարրիսը քննարկում է Կ. Վիտֆոգելի հիդրավլիկ տեսությունը՝ գտնելով, որ արևելյան բռնապետության տեսությունը ոչ թե սոսկ տեսություն է, այլ հին պետական համակարգերից մեկի տիպաբանական տարբերությունները և նմանությունները բացատրելու փորձ[437]: Ելնելով վիտֆոգելյան տեսությունից, կարելի է նաև բացատրել այն պետական համակարգերի բնույթը, որոնց գյուղատնտեսական ենթակառուցվածքները հիմնված են անձրևաջրով ոռոգման վրա: Նման պետությունների էվոլյուցիոն ներուժն, ըստ Մ. Հարրիսի, ամբողջությամբ տարբեր է, այս դեպքում մենք ունենք արտադրության ցրված, բազմակենտրոն ձևեր, ինչը կասկածի տակ է վերցնում առաջնային պետության ձևավորումը նման վայրերում:

Անձրևային ոռոգման վրա հիմնված պետությունների մեծ մասը երկրորդական բնույթ ունեն, նրանք ձևավորվել

---

[436]**Harris** 1979: 103.
[437]**Ibid**: 103-104.

են հիդրավլիկ կայսրությունների ընդարձակման արդյունքում ի հայտ եկած թալանի և առևտրի հնարավորություններից օգտվելու ենթատեքստում: Նման պետությունները անկայուն են: Քաղաքական ապակենտրոնացվածությունը իր հերթին հնարավոր է դարձնում անկախ առևտրային դասակարգի ձևավորումը և նպաստում է մասնավոր առևտրական շահերի աճին: Մ. Հարրիսը գտնում է, որ տվյալ դեպքում արևմտյան ժողովրդավարության այդչափ հանելուկային պատճառները նույնպես կարելի է փնտրել միջերկրածովյան քաղաք-պետությունների փոքր չափերի և դրանց՝ էգալիտար ցեղապետությունների հետ ունեցած ժառանգական կապի մեջ: Այս գործոնն, ըստ Մ.Հարրիսի, նաև բացատրում է, թե ինչու Հռոմեական կայսրությունը, որի գյուղատնտեսական հիմքը բնական տեղումներով ոռոգմամբ տնտեսություններն էին և առևտրական ճանապարհները, այդպես էլ վերջնականորեն չհրաժարվեց իր հանրապետական ինստիտուտներից: Այս և հետագա պատմական փուլերում ի հայտ եկած փոփոխականները (հետհռոմեական շրջանի գյուղատնտեսական ապակենտրոնացումը, քաղաքական տնտեսական իշխանության անցումը ագրարայինից առևտրական շահերին և այլն) ձևավորեցին պայմանների այն առանձնահատուկ համալիրը, որն ընկած է կապիտալիզմի հիմքում[438]:

Նշենք ևս մի բանավեճի մասին, որը ծավալվել էր Հ.-Փիրսընի և Մ.Հարրիսի միջև 1950-1960-ական թթ.: Իր հայտնի հոդվածում[439] Հ.Փիրսընը կասկածի տակ է առնում

[438]**Harris** 1979: 105.
[439]**Pearson** 1957.

այն հանգամանքը, որ հասարակական շերտավորումը պայմանավորված է հավելյալ արդյունքի արտադրությամբ: Փիրսընը գտնում էր, որ հավելյալ արդյունքը ո՛չ տրամաբանական, ո՛չ էլ էմպիրիկ վավերականություն չունի: Ավելցուկներ ամենուր էլ կան, բայց միշտ չէ, որ համայնքն ունի հավելյալ արդյունքը օգտագործելու ինստիտուցիոնալ միջոցներ: Ջ.-Դալթոնը նույնպես համարում էր, որ հավելյալ արդյունքի գաղափարը կիրառվում է որպես deus ex machina, որով փորձում են բացատրել բարդ սոցիալական կառուցվածքը կամ որևէ չդիտարկվող սոցիալ-տնտեսական զարգացումը[440]:

Արձագանքեցին Մ.Հարրիսը, Է.Մանդելը, Մ.Գոդելյեն: Մասնավորապես Մ.Հարրիսը պնդեց, որ բոլոր այն դեպքերում, երբ մենք հայտնաբերում ենք սննդի արտադրությամբ չզբաղվող վերնախավ, ապա պետք է ենթադրենք, որ նրանց գոյությունը պայմանավորված է սննդամթերքի պաշարի վերահսկողությամբ: Ինչպիսին էլ որ լինի այդ վերահսկողությունը սահմանելու նախնական ենթատեքստը, այն, ըստ երևույթին, աճելու միտում է ցուցաբերում, որը ուղիղ համեմատական է հավելյալ ապրանքի չափերին և բնակչության աճին. *«Պատճառն այն է, որ նախաարդյունաբերական հասարակություններում սննդի վերահսկողությունը միևնույն ժամանակ մշակույթի միակ արդյունավետ աղբյուրի՝ էներգիայի (էներգիայի՝ բառիս բուն, թերմոդինամիկ*

---

[440]**Hansen** 2021: 62.

*իմաստով) հանդեպ վերահսկողությունն է, այն էներգիայի, առանց որի փեղից չեն շարժվի ո՛չ մարդիկ, ո՛չ քարերը»*[441]:

***Ռոբերտ Կարնեյրո***

Ռ.Կարնեյրոն (1927-2020 թթ.) XX դարի առաջատար գիտնականներից մեկն էր, պոլիտոգենեզի «սահմանափակումների տեսության» (The Circumscription Theory)[442] հեղինակը: Ռ. Կարնեյրոն կոնցեպտուալ և մեթոդաբանական մեծ ներդրում ունի սոցիալական էվոլյուցիայի ուսումնասիրման գործում[443]: Նա սպենսերյան պարզից դեպի բարդը էվոլյուցիայի կողմնակիցն էր. *«բազմագիծ էվոլյուցիայի դեպքերը չպետք է մեզ շեղեն, մենք պետք է գտնենք ոչ ակնհայտ միագիծ էվոլյուցիան, որը կարող է թաքնված լինել դրանց մեջ»*[444]: Ռ. Կարնեյրոն գտնում էր, որ անհրաժեշտ է վերհանել պետության առաջացման պատճառները, անկախ այն բանից, թե որտեղ է այն ձևավորվել. պետության կազմավորման առանձին դեպքերը չեն կարող այն աստիճան տարբեր լինել, որ հատուկ բացատրության կարիք զգացվի[445]:

---

[441]**Harris** 1959: 198.

[442]Տեսության դրույթները առաջադրվել են **Carneiro** 1961, **Carneiro** 1970, վերամշակումներով և լրացումներով՝ **Carneiro** 1988, **Carneiro** 2012 աշխատություններում:

[443]**Sanderson** 2007: 163.

[444]*«We must not be stopped short when we encounter multilinearity; we must be ready to look for the less obvious unilinearity that may be concealed within it».*

[445]**Carneiro** 1988: 497.

Մշակութային էվոլյուցիայի օրինաչափությունները վերհանելու համար Ռ. Կարնեյրոն առաջարկեց կիրառել ***Գուտմանի սանդղակը***: Ըստ Ռ. Կարնեյրոյի, այն թույլ է տալիս պարզել մշակութային որոշակի հատկանիշների (քաղաքական, տնտեսական, իրավական) ի հայտ գալու հաջորդականության կարգը[446]:

Լուի Գուտմանը ամերիկացի հոգեբան էր, նա 1941 թ. առաջարկեց կազմել հոմոգեն սանդղակներ կուտակային արտահայտությունների կարծիքների միջոցով: Ճիշտ կազմված սանդղակի դեպքում ընտրված հարցերից մեկին դրական պատասխանը հանգեցնելու է որոշակի պատասխանի վայրընթաց գծով հաջորդ հարցի պարագայում: Հետազոտողի գլխավոր խնդիրն է պարզել, կազմո՞ւմ են այդ հարցերի պատասխանները միաչափ անընդհատություն, թե՞՝ ոչ:

Ռ. Կարնեյրոն ընտրեց հետևյալ հատկանիշները՝ սոցիալական շերտավորում, բրուտագործություն, խմորման ենթարկված ըմպելիքներ, քաղաքական պետություն, հողագործություն, քարե շինություններ, մետաղագործություն և մանածագործություն, որոնք դիտարկվել են հարավամերիկյան ինը ցեղերի (Kuikuru, Anserma, Jivaro, Tupinambi, Inca, Sherente, Chibcha, Yahgan, Cuman) հետազոտման արդյունքում ստացված տվյալների հիման վրա[447]:

Աղյուսակները ճիշտ կազմելու դեպքում[448] ի հայտ են գալիս մի շարք օրինաչափություններ[449].

---

[446]**Carneiro** 1962: 167.
[447]**Ibid**.
[448]Աղյուսակները կազմելու սկզբունքները տե՛ս **Carneiro** 1962: 152-153.

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քարե շինություն-ներ | - | - | - | - | - | - | - | - | + |
| Քաղաքական պետություն | - | - | - | - | - | - | - | + | + |
| Մետաղագործություն | - | - | - | - | - | - | + | + | + |
| Սոցիալական շերտավորում | - | - | - | - | - | + | + | + | + |
| Մանածագործություն | - | - | - | - | + | + | + | + | + |
| Խմորման ենթարկված ըմպելիքներ | - | - | - | + | + | + | + | + | + |
| Բրուտագործություն | - | - | + | + | + | + | + | + | + |
| Հողագործություն | - | + | + | + | + | + | + | + | + |
| | Յահգան | Ճերենտե | Կուիկուրու | Տուպինամբա | Ջիվարո | Կումանա | Անտենա | Չիբչա | Ինկա |

Այդ օրինաչափություններից են, օրինակ.

1) Եթե հասարակությունն ունի սոցիալական շերտավորում, ապա այդ հասարակությունում առկա են նաև մանածագործություն, խմորման ենթարկված ըմպելիքներ, բրուտագործություն և հողագործություն, 2) եթե հասարակությունը զուրկ է որոշակի հատկանիշից, ապա մյուս հատկանիշները նույնպես բացակայելու են. օրինակ, եթե հասարակության մեջ չկա սոցիալական շերտավորում, ապա բացա-

[449]Աղյուսակը տե՛ս **Carneiro** 1962: 152.

կայելու են նաև մետաղագործությունը, քաղաքական պետությունն ու քարե շինարարությունը:

Նման սանդղակների կազմումն, ըստ Ռ. Կարնեյրոյի, թույլ է տալիս նվազագույն տեղեկատվությունից առավելագույն տվյալներ քաղել: Հասարակության բարդացումը կուտակային գործընթաց է, որի ընթացքում աստիճանաբար ավելանում են ավելի բարձր կարգի հատկանիշները սանդղակում նշված կարգով՝ միևնույն ժամանակ ավելի ցածր կարգի հատկանիշները պահելով[450]: Մշակութային էվոլյուցիան, այսպիսով, միասնական մեծ գործընթաց է, որին բոլոր հասարակությունները հավասարաչափ մասնակցում են, չնայած որ նրանց մասնակցության աստիճանը կարող է տարբեր լինել[451]:

Ռ. Կարնեյրոն նշում է, որ այս պարագայում կրկին ուրվագծվում է միագիծ էվոլյուցիայի հայեցակարգը (մի տարբերությամբ՝ միագիծ էվոլյուցիոն հայեցակարգում հին ձևերը հաղթահարվում են նորերով, իսկ տվյալ դեպքում հին հատկանիշները պահպանվում են[452]): Այդ հայեցակարգն, ըստ նրա, չափից դուրս շտապողաբար և կտրուկ է մերժվել, այնինչ միանգամայն հնարավոր է, որ հասարակությունների մեծամասնության պարագայում ակնառու լինի էվոլյուցիոն զարգացման նույն հաջորդականությունը[453]: Ռ. Կարնեյրոն

[450]**Carneiro** 1962: 158.

[451]**Ibid**. *«cultural evolution is essentially a single grand process in which all societies partake in much the same way, but in which they have partaken to varying degrees»*.

[452]**Ibid**: 159.

[453]*«But may there not be an evolutionary sequence which most societies have followed most of the time?»*

նշում է, որ նման սանդղակների հետ աշխատանքը թույլ է տալիս պարզել, թե մշակութային էվոլյուցիայի որ հատկանիշներն են հիմնական և կենտրոնական, իսկ որոնք՝ ծայրամասային և արտասովոր (տեքստում՝ idiosyncratic)[454], թույլ է տալիս վեր հանել զարգացման օրինաչափությունները և աշխատել ընդհանուր էվոլյուցիոն հաջորդականության մեխանիզմների և դինամիկայի հարցերի վրա[455]:

Պետականաստեղծ գործընթացները քննարկելիս Ռ. Կարնեյրոն տալիս է պետության իր սահմանումը. այն *«ինքնավար քաղաքական միավոր է, որի տարածքային շրջանակների մեջ ներառված են բազմաթիվ համայնքներ, որն ունի կենտրոնացված կառավարություն՝ հարկեր հավաքելու, աշխատանքի կամ պատերազմի մարդկանց հավաքագրելու, օրենքներ հրապարակելու և դրանց կատարմանը հետևելու իրավասություններով»*[456]:

Պետության առաջացման տեսություններից Ռ. Կարնեյրոն առանձնացնում է ***վոլյունտարիստական*** և ***բռնության*** տեսությունները: Վոլյունտարիստական տեսությունները նրանք են, ըստ որոնց որոշակի ժողովուրդների մոտ պետականությունն առաջացել է ինքնաբերաբար, այդ ժողովուրդները ռացիոնալ կերպով և ինքնակամորեն հրաժարվել են իրենց անհատական ինքնիշխանությունից և միավորվել են մյուս համայնքների հետ՝ առավել խոշոր քաղաքական միա-

[454]**Carneiro** 1962.

[455]**Ibid**: 168.

[456]**Carneiro** 1970: 733. *«When I speak of a state I mean an autonomous political unit, encompassing many communities with in its territory and having a centralized government with the power to collect taxes, draft men for work or war, and decree and enforce laws».*

վոր (պետություն) ձևավորելու համար[457]: Վոլյունտարիստական տեսությունների մեջ Ռ.Կարնեյրոն առանձնացնում է ***«ավտոմատ տեսությունները»***, ըստ որոնց հողագործության հայտնագործումը ավտոմատ կերպով հանգեցնում է հավելյալ արդյունքի, ինչի շնորհիվ էլ որոշ անհատներ առանձնանում են սննդի արտադրությունից և դառնում բրուտագործներ, հյուսներ, քարտաշներ և այլն, այսինքն՝ խորանում է աշխատանքի հետագա բաժանումը, հետագայում քաղաքական ինտեգրումը միավորում է նախկինում անկախ համայնքները պետության մեջ: «Ավտոմատ տեսության» օրինակ Ռ.Կարնեյրոն համարում է Գ.Չայլդի տեսությունը, բայց, ինչպես և Փիրսընը, շեշտում է, որ գյուղատնտեսությունն ավտոմատ կերպով հավելյալ արդյունք չի ստեղծում, որ կան բազմաթիվ ցեղեր, որոնք զբաղվում են հողագործությամբ, ունեն տեխնիկական հնարավորություններ հավելյալ արդյունք ստանալու համար, բայց վերջինս չի ձևավորվում, քանի որ չկան այդ արդյունքի ակտուալացման սոցիալական մեխանիզմները[458]:

Վոլյունտարիստական տեսությունների հիմնական թերությունն, ըստ Ռ. Կարնեյրոյի, այն է, որ դրանցում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ ինքնավար քաղաքական միավորները ունակ չեն հրաժարվել իրենց ինքնիշխանությունից արտաքին գերակայող պարտադրանքի բացակայության պարագայում[459]:

---

[457]**Carneiro** 1970: 733.

[458]**Ibid**: 734. *«Thus the technical means for generating a food surplus were there; it was the social mechanisms needed to actualize it that were lacking».*

[459]**Carneiro** 1970: 734.

Այստեղ է, որ Ռ. Կարնեյրոն առաջ է քաշում ***«միջավայրի սահմանափակման»*** տեսությունը: Այս տեսության առանցքը հողագործության համար պիտանի միջավայրի սահմանափակության դրույթն է, որը, համակցվելով ժողովրդագրական ճնշման և պատերազմների հետ, հանգեցնում է պետականության ստեղծմանը:

Ռ. Կարնեյրոն առանձնացնում է այն հատկանիշը, որը ընդհանուր է այն բոլոր շրջանների համար, որտեղ առաջացել են առաջին պետությունները: Այդ շրջանները միմյանցից տարբերվում են շատ չափանիշներով (տարեկան միջին ջերմաստիճանը, բարձրությունը ծովի մակերևույթից, տեղումների քանակը, վարելահողի տեսակը և այլն), բայց նրանք ունեն մեկ ընդհանուր հատկանիշ. այդ բոլոր շրջաններում երկրագործության համար պիտանի հողերը սահմանափակ են, տարածքը սահմանափակված է սարերով, ծովերով կամ անապատներով, և այդ բնական արգելքներն են որոշում այն շրջանների սահմանները, որոնք հողագործական ժողովուրդները կարող են զբաղեցնել և յուրացնել[460]:

Ռ. Կարնեյրոն հիմնավորում է իր տեսությունը տարբեր էկոլոգիական միջավայր ունեցող երկու շրջանների քաղաքական զարգացման ուսումնասիրման հիման վրա: Մեկը Պերուի առափնյա շրջաններն են, մյուսը՝ Ամազոնի ավազանը: Ամազոնի ավազանի վարելահողերի անսահմանափակության և բնակչության ցածր խտության պայմաններում հաճախակի պատերազմների հետևանքներն արտահայտվեցին նրանով, որ գյուղերը չկենտրոնացան մեկ շրջանում, այլ

---

[460]**Ibid**: 735.

ցրվեցին ընդարձակ տարածքներով և պահպանեցին իրենց ինքնավարությունը[461]:

Ի տարբերություն Ամազոնի ավազանի՝ Պերուի բերրի հողատարածքները սահմանափակված են 78 նեղ հովիտներով: Հողագործության համար պիտանի բոլոր տարածքների յուրացման արդյունքում ի հայտ եկան երկու տեխնոլոգիական փոփոխություններ, նախ՝ հողագործությունը դարձավ ավելի ինտենսիվ, իսկ նոր, նախկինում ոչ պիտանի տարածքները սկսեցին մշակվել լանջերի տեռասավորման և ոռոգման միջոցով[462]: Աճող ժողովրդագրական ճնշման արդյունքում պատերազմների գլխավոր պատճառը դարձավ նոր հողերի ձեռքբերումը: Եվ եթե Ամազոնի ավազանում պարտված բնակչությունը կարող էր լքել գյուղը, գտնել նոր տարածք և շարունակել իր ինքնավար կյանքը, Պերուի հովիտները շրջապատող սարերը, անապատն ու ծովը թույլ չէին տալիս այստեղ կիրառել նույն սցենարը: Այստեղ պարտված համայնքը դառնում էր հարկատու և ներառվում էր հաղթողի քաղաքական կազմակերպության մեջ, ինչի արդյունքում էլ ի հայտ են գալիս իրենց չափերով ավելի մեծ և կազմակերպման ավելի բարձր մակարդակով տարածքային միավորներ: Քաղաքական էվոլյուցիան հասնում է ցեղապետության մակարդակի[463]:

Այսպիսով, համայնքները միավորվում են ցեղապետությունների, իսկ ցեղապետությունները՝ պետության մեջ արտաքին նվաճումների ճանապարհով: Զուգահեռաբար

---

[461]**Ibid:** 735.
[462]**Ibid.**
[463]**Ibid**: 735.

փոփոխվում է քաղաքական այս միավորների ներքին կառուցվածքը: Պատերազմում աչքի ընկած անհատները զբաղեցնում են քաղաքական պաշտոններ և իրենց ձեռքը վերցնում կառավարումը (օրենքների ընդունում, հարկերի հավաքագրում, բնակչության մոբիլիզացիա ոռոգման համակարգերի, ճանապարհների, ամրոցների և այլ կառույցների շինարարության համար): Այդ գործառույթները թույլ են տալիս միավորել ոչ միատարր մանր պետությունները մեկ ինտեգրված և կենտրոնացված քաղաքական միավորի մեջ[464]:

Ռ. Կարնեյրոն գտնում է, որ Պերուի քաղաքական էվոլյուցիայի գործընթացն իր բնութագրիչներով եզակի չէ: Նույն պատճառներից բխող նման գործընթացներ առկա են գյուղատնտեսական հողերի սահմանափակությամբ բնութագրվող այլ շրջաններում, ինչպես օրինակ Մեխիկոյի հովտում, Միջագետքում, Նեղոսի հովտում, Հինդոսի հովտում և այլն: Այստեղ նույնպես նեոլիթյան փուլի ինքնավար հանրույթները վերաճում են ցեղապետությունների, ցեղապետությունները՝ պետությունների, վերջիններս՝ կայսրությունների, և այս ամբողջ գործընթացը սկսվում է ինքնավար համայնքից դեպի վերհամայնքային ինտեգրում տանող որակապես նոր քայլից[465]:

1988թ. Ռ.Կարնեյրոն գրում է «Սահմանափակումների տեսությունը: Մարտահրավեր և պատասխան» («The Circumscription Theory. Challenge and Response») հոդվածը, որտեղ վերլուծում է իր տեսության վերաբերյալ լույս տեսած

[464]**Ibid**: 736.
[465]**Ibid**.

քննադատական հոդվածները և կրկին անդրադառնում է պոլիտոգենեզի իր տեսության երեք բաղադրիչներին՝ միջավայրի սահմանափակության գործոնին, ժողովրդագրական ճնշմանը և պատերազմին:

Այս հոդվածում նա հստակեցնում է, թե ինչ մակերես պետք է ունենա սահմանափակումներ ունեցող տարածքը: Չափսերն, ըստ Ռ. Կարնեյրոյի, երկակի դեր են խաղում, մի կողմից նրանք կարող են արագացնել պետականաշինության տեմպերը, մյուս կողմից՝ սահմանափակել նրա արդյունքները: Ինչքան տարածքը փոքր է, այնքան արագ այն կմիավորվի քաղաքական առումով: Բայց եթե տարածքը լինի շատ փոքր, նրա հետագա զարգացումը կսահմանափակվի ոչ մեծ ցեղապետության մակարդակով: Ենթադրվելիք տարածքի հարցում Կարնեյրոն համակարծիք է Ռոբերտ Շախտի առաջարկած չափսերին՝ *«մակերեսը պետք է կազմի ոչ պակաս քան մի քանի հարյուր քառակուսի մղոն (1 քառակուսի մղոնը = մոտ. 2,5 քառակուսի կմ), և կարողանա ապահովել սնունդով ոչ պակաս քան 30.000 մարդու»*[466]: Համադրելով տարբեր գործոնները, Կարնեյրոն տալիս է սահմանափակ տարածքի բնորոշումը. վաղ պետականության կազմավորման համար օպտիմալ է կղզին կամ հովիտը, որոնք 1) բավականաչափ սահմանափակ են, որպեսզի մարդիկ չկարողանան արտագաղթել և թուլացնել ժողովրդագրական ճնշումը, 2) բավականաչափ փոքր է՝ հարաբերականորեն արագ և հեշտ միավորում ապահովելու համար, 3) միևնույն ժամանակ բավականին մեծ է, որպեսզի ձևավոր-

[466]**Carneiro** 1988: 499.

ված քաղաքական կազմակերպությունը (տեքստում՝ polity) կարողանա դառնալ այն աստիճան մեծ և բարդ, որ վերաճի պետության[467]: Ընդ որում՝ ելնելով որոշ ելակետային պայմաններից (մակերես, մարդկանց թվաքանակ, բնակչության աճի տեմպեր և այլն) կարող են պահանջվել հարյուրամյակներ, իսկ երբեմն՝ հազարամյակներ, որպեսզի ինքնավար գյուղերն իրենց տեղը զիջեն ցեղապետություններին, իսկ վերջիններս՝ պետություններին[468]:

Ժողովրդագրական ճնշման և պատերազմների մասին խոսելիս՝ Ռ. Կարնեյրոն տարանջատում է հինքարեդարյան պատերազմները (կախարդության, սպանության, կանանց առևանգելու պատճառներով ծագած պատերազմները) նորքարեդարյան երկրագործական փուլի պատերազմներից, որոնք մղվում էին հողեր գրավելու, իսկ դրանից շատ չանցած՝ մարդկանց հպատակեցնելու համար: Ժողովրդագրական ճնշումը ռազմական գործողությունների վրա արտահայտվում էր պատերազմների հաճախականացմամբ, նրանց ինտենսիվության աճով, նրանց նպատակների փոփոխմամբ և ավելի ծանր հետևանքներով. *«պատերազմը դարձավ մարդկային հասարակության կառուցվածքի տրանսցենդենտ փոփոխությունն արագացնող գործիք»[469]:*

Իր տեսության վերաբերյալ ևս մեկ հոդված Ռ. Կարնեյրոն հրապարակեց 2012 թ.: Այն վերնագրված էր «Սահմանափակման տեսություն. բացատրություն, ընդլայնում, վերաձևակերպում» («The Circumscription Theory: A

[467]**Ibid**: 499-500.
[468]**Ibid**: 502.
[469]**Ibid**: 505.

Clarification, Amplification, and Reformulation»), որտեղ կրկին ընդգծում է պոլիտոգենեզի ընդհանուր տարրերի վերհանման անհրաժեշտությունը, նշելով որ պոլիտոգենեզին մասնակցած գործոնների դերը պարտադիր չէ, որ միանման լինեն, բայց նրանց ընդհանուր աշխատանքը պետք է բավարար լինի պետություն ստեղծելու համար[470]: Ռ.Կարնեյրոն կրկին շեշտադրում է պատերազմի նշանակությունը՝ պնդելով, որ գործընթացի առանցքը կազմում է պատերազմը՝ միակ բանը, որը կարող էր ստիպել հաղթահարել գյուղական ինքնավարության սահմանները և վերգյուղական պոլիտիա ստեղծել: Պատերազմը վառելիք է, շարժիչ ուժ, որը կործանում է հին մանր կառուցվածքը՝ թույլ տալով ստեղծել ավելի խոշոր, ավելի բաղադրյալ (տեքստում՝ inclusive) և բարդ քաղաքական միավորներ[471]:

Այս հոդվածում Ռ. Կարնեյրոն ավելի մեծ նշանակություն է վերագրում ռազմական առաջնորդին, որին առաջարկում է անվանել *պենդրագոն* (առասպելական Արթուր արքայի հոր անունն է)՝ համարելով, որ մշտական պատերազմները թույլ են տալիս նման առաջնորդներին օգտվել իրենց իշխանության անսահմանափակությունից, ձևավորել հավատարիմ զինվորներից բաղկացած ջոկատներ, որոնց օգնությամբ էլ պահում են իշխանությունը և կոտրում համայնականների դժգոհությունը կամ անհամաձայնությունը՝ հետագայում իշխանությունը ժառանգաբար փոխանցելով[472]:

---

470 **Carneiro** 2012: 6-8.
471 **Ibid**: 14.
472 **Ibid**: 18-19.

Ռ. Կարնեյրոն շեշտադրում է նաև այն հանգամանքը, որ պատերազմները կարող էին մղվել ոչ միայն վարելահողերի, այլև ցանկացած արժեքավոր ռեսուրսի համար (օբսիդիան, նեֆրիտ և այլն)[473] (ռեսուրսների համակենտրոնացման մասին նաև խոսում է դեռ 1970 թ. իր հոդվածում, որտեղ խոսք գնում է Ամազոնի *várzea* կոչվող տիղմով հարուստ հողերի և Պերուի առափնյա՝ առատ ձկնորսությամբ աչքի ընկնող շրջանների մասին[474]): Ռ. Կարնեյրոն համարում է, որ որոշակի հանգամանքներում ռեսուրսների կենտրոնացումը կարող է գերազանցել էկոլոգիական սահմանափակումների պետականաստեղծ ազդեցությունը[475]:

2000 թ. իր հոդվածում[476] Ռ. Կարնեյրոն նաև ի մի է բերում ցեղապետությունների իր համակարգը:

Ցեղապետությունների արդեն գոյություն ունեցող տարաբաժանումը **պարզ** և **բարդ** ցեղապետությունների (ցեղապետության բարդացումը պայմանավորվում էր նրա մեջ այլ՝ պարզ ցեղապետությունների ներառմամբ)[477] փոխարեն Ռ.Կարնեյրոն առաջարկում է նոր մոտեցում, որը, նրա խոսքերով, հուշել է նրան քիմիական միացումների հետ նմանությունը. ատոմները միանում են՝ կազմելով մոլեկուլներ, մոլեկուլները միանում են՝ կազմելով քիմիական միացություններ (անգլ.՝ compound)[478]:

473 **Ibid**: 21-22.
474 **Carneiro** 1970: 736-737.
475 **Carneiro** 2012: 23, 25.
476 Տե՛ս **Carneiro** 2000.
477 **Ibid**: 89.
478 **Ibid**: 90.

Ռ.Կարնեյրոն առաջարկում է ցեղապետությունների զարգացման հաջորդ փուլն անվանել **բաղադրյալ** (compound՝ բառացի բաղադրյալ), քանի որ այս եզրույթն ընդգծում է ցեղապետությունների գործընթացի բնույթը. այն առավել մանր ամբողջական կազմավորումների երկրորդական ներառման, միացությունների ձևավորման գործընթաց է[479]:

Բաղադրյալ ցեղապետությունները կառուցվածքային տեսակետից թույլ են, քանի որ գրավված միավորների առաջնորդները մշտական թշնամության մեջ են կենտրոնական իշխանության հետ: Էվոլյուցիոն զարգացման հաջորդ փուլը, երբ հաղթահարվում է տեղական անհնազանդությունը պատժիչ արշավանքների կամ կենտրոնական իշխանությանը լոյալ առաջնորդների հաստատումով, Ռ. Կարնեյրոն առաջարկում է անվանել **միավորված** ցեղապետություն[480]: Այսպիսով, ցեղապետությունների զարգացման սխեման, ըստ Ռ. Կարնեյրոյի, հետևյալն է՝ պարզ, բաղադրյալ, միավորված ցեղապետություններ:

Ռ. Կարնեյրոյի տեսությունը մեծ արձագանք է ստացել 1960-ականներից սկսած: Է. Սերվիսն, օրինակ, գտնում էր, որ ցանկացած սահմանափակում, անկախ նրանից թե ինչ բնույթ այն ունի՝ աշխարհագրական, սոցիալ-ժողովրդագրական, ռազմական կամ վերոհիշյալների համակցությունը, ինքն իրենով ոչինչ չի որոշում: Սակայն այդ սահմանափակումը մեծ պարգև է կառավարող բյուրոկրատիայի

479**Ibid**: 91.
480**Ibid**: 92.

համար, որն ակտիվ դեր ունի պաշտպանական և քաղաքային միջոցառումների անցկացման, գյուղատնտեսության ինտենսիֆիկացման և այլնի մեջ[481]:

Ընդգծվել է Ռ. Կարնեյրոյի կողմից պատերազմական գործոնի շեշտադրումը, մանավանդ այն պայմաններում, երբ վերջին տասնամյակների ընթացքում պատերազմի դերը քաղաքական էվոլյուցիայում թերագնահատվել է[482]: Ռ.Կարնեյրոյի հայեցակարգի վերաբերյալ գիտական բանավեճերից կարելի է առանձնացնել 2012թ. քննարկումները, որոնք ամփոփված են «Social Evolution &History» էլեկտրոնային ամսագրի համապատասխան համարում[483]:

*Նեոէվոլյուցիոնիզմը հայկական պատմագրության մեջ*

Հետխորհրդային հայկական պատմագրության մեջ մեզ հայտնի աշխատություններից նեոէվոլյուցիոնիստական սխեմաները և հայեցակարգերը կիրառված են Պավել Ավետիսյանի «Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում: Սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների»[484] աշխատության մեջ:

Հեղինակը իրավամբ նշում է, որ ոչ մարքսյան տեսությունները և և հայեցակարգերը դուրս են մնացել հայ պատմագրության ուսումնասիրության ոլորտից, իսկ *«հայ հնագիտության մեջ ընդունված պարբերականացման համակարգում մինչ օրս էլ փիրապետող են ստադիալ զարգաց-*

---

[481]**Service** 1975: 44.
[482]**Grinin, Korotayev** 2012: 194.
[483]Online https://www.socionauki.ru/journal/seh/archive/2012_2/
[484] Տե՛ս **Ավետիսյան** 2014:

*ման՝ նախնադարյան փոխմափիրական հասարակություննե-րից դեպի դասակարգային հասարակություններ միագիծ սխեմայի ընկալումները, որոնք ակնհայտ հակասության մեջ են նոր փվյալների հետ և ի զորու չեն արտացոլելու պատմական զարգացման ընթացքի բազմազանությունը ոչ ժամանակի մեջ և ոչ էլ հասարակական հարափոփոխ հարաբերությունների բովանդակության մեջ»*[485]:

Աշխատության մեջ մեթոդաբանական տեսակետից օգտագործված են Մ.Ֆրիդի, Է. Սերվիսի և Մ. Սալինզի, Ջ. Սթյուարդի և Հ. Կլասենի սխեմաներն ու հայեցակարգերը[486]: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացված կոմպլեքս հասարակություն և ցեղապետություն (հեղինակի մոտ այն թարգմանված է ցեղատիրություն) հասկացություններին:

Հեղինակը եզրահանգում է, որ *«մ.թ.ա. IV հազարամյակի երկրորդ կեսից մինչև մ.թ.ա. III հազարամյակի կեսերն ընկած ժամանակահատվածում լեռնաշխարհը բնակեցնում էին սոցիալական բարդ կազմ ունեցող կոմպլեքսային հասարակությունները: Ինչպես վերը նշել ենք, այս ժամանակահատվածում տեսանելի են մշակութային միջավայրի տրանսֆորմացման երկու փուլեր: Ինտեգրման և սեգմենտավորման իրար հաջորդող գործընթացների արդյունքում ձևավորվում է տարածական բարդ կառուցվածքով սոցիալմշակութային ինքնատիպ մի համակարգ»*[487]:

Հեղինակը գտնում է, որ մ.թ.ա. XXIV-IX դդ. ընթացքում սոցիալ-մշակութային զարգացումները տարածաշրջա-

---

[485]**Նույնը**: 4:
[486]**Նույնը**: 4-7.
[487]**Նույնը**: 57-58, 66.

նում զուգահեռաբար ընթացել են երկու ուղղություններով: Առաջին ուղղությունը «պարզ ցեղատիրություն» - «միավորված ցեղատիրություն» - «սաղմնային վաղ պետականություն» մոդելն է, երկրորդը՝ *«փեսանելի է այն հանրություններում, որոնք սոցիալմշակութային ինփեգրացիայի բարդվածությամբ գփնվելով վերը նշվածների հետ նույն մակարդակի վրա, ներկայանում են չասփիճանակարգված (հեփերարխիկ) հարաբերությունների մասին վկայող պարամետրերով»*[488]:

Պ.Ավետիսյանը եզրահանգում է, որ պետության ձևավորման ընդհանրական և պարտադիր նախադրյալներ գոյություն չունեն, և պետականության ձևավորման համար անհրաժեշտ ներքին ու արտաքին գործոնների բազմազանությունն ու բազմաքանակությունը խոսում են այն մասին, որ պետականության ձևավորման ուղիները նույնպես մեծաթիվ են[489]:

[488]**Նույնը** 2014: 7, 71.
[489]**Նույնը** 2014: 12.

## ՎԵՐՋԱԲԱՆ

Էվոլյուցիոն հայեցակարգերի պոլիտոգենեզի տեսությունները կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝ դասական էվոլյուցիոնիստական (XIX-XX դդ.) դպրոցի տեսություններ (Հ.Սպենսեր, Լ.Մորգան, Է.Թեյլոր, Կ.Մարքս) և նեոէվոլյուցիոնիստական դպրոցի (XX դ. երկրորդ կես) տեսություններ, որոնք իրենց հերթին բաժանվում է բրիտանական (Գ. Չայլդ) և ամերիկյան (Լ. Ուայթ, Ջ. Սթյուարդ, Մ. Սալինզ, Է. Սերվիս, Մ. Հարրիս, Ռ. Կարնեյրո) նեոէվոլյուցիոնիստական դպրոցների:

XX դարավերջին և XXI դարում էվոլյուցիոնիստական ուղղությունում ձևավորվեց նոր հայեցակարգ՝ ունիվերսալ էվոլյուցիայի հայեցակարգը, որը միավորեց համակարգային և էվոլյուցիոն մոտեցումները: Այլ կերպ դրանք անվանում են սիներգետիկ (տարբեր համակարգերում, այդ թվում և սոցիալական, ինքնակազմակերպման գործընթացների օրինաչափությունների և սկզբունքների վերհանում) ուսումնասիրություններ: Այս ուղղությունը առանձին ուսումնասիրության թեմա է և դուրս է մեր աշխատության շրջանակներից:

### *Պոլիտոգենեզի էվոլյուցիոնիստական հայեցակարգերը*

Պոլիտոգենեզի էվոլյուցիոնիստական տեսությունները սկսվեցին Լ. Մորգանի դարակազմիկ աշխատության

իրապարակումով և հասան իրենց ծայրահեղ արտահայտման խորհրդային մարքսիստական հայեցակարգում:

Այս փուլի հիմնական առանձնահատկությունը էվոլյուցիոն շարքերի կառուցումն է: Ընդհանուր առմամբ, էվոլյուցիոնիստական հայեցակարգերում պատմական գործընթացը պատկերված է որպես միասնական, միագիծ, առաջադիմական, փուլային՝ փուլերի միջև գենետիկ շարունակության շեշտադրումով, որպես գծային համամարդկային էվոլյուցիայի մի մաս[490]:

Պետք է նշել, որ հենց նման մոտեցումը թույլ տվեց համակարգել ազգագրական տվյալների ահռելի քանակը, որը գիտնականների տրամադրության տակ էր XIX դարում[491]:

Նաև էվոլյուցիոնիզմը թույլ տվեց դուրս բերել գիտական ուսումնասիրությունները աստվածաշնչյան դրույթների հետ պարտադիր կերպով համապատասխանեցնելու անհրաժեշտությունից և փոխել հասարակական զարգացման պարադիգմը դեգրադացիայից դեպի առաջադիմություն[492]:

Միևնույն ժամանակ էվոլյուցիոնիզմի թույլ կողմերից էր պատմական գործընթացի պարզեցումը, զարգացման հայեցակարգերը զուրկ էին կոնկրետ պատմական, աշխարհագրական, էթնիկ առանձնահատկություններից:

Մյուս առանձնահատկությունը կենսաբանական և սոցիալական էվոլյուցիաների փոխկապակցվածության մասին դրույթն է, որն առանձնահատուկ զարգացում ստացավ Հ. Սպենսերի աշխատություններում: Այդ դրույթն իհարկե ու-

[490]**Музыка, Ковтунова** 2012: 193-194.
[491]**Крадин** 1995: 90.
[492]**Childe** 1951: 12.

նի իր ռացիոնալ միջուկը, մանավանդ եթե խոսքը մարդկության պատմության վաղնջագույն շրջանների մասին է, սակայն ժամանակի ընթացքում սոցիալական և մշակութային ձևերի փոխակերպումը ավելի և ավելի է կորցնում կախվածությունը ուղեկցող գենետիկ փոփոխություններից[493]: Եվ առհասարակ պետք է նշել, որ homo sapiens-ի կենսաբանական էվոլյուցիայում բնական ընտրության գործոնը սահմանափակվեց նախահասարակական փուլով, այնուհետ էվոլյուցիան ընթացավ սոցիալական զարգացման ճանապարհով[494]:

Էվոլյուցիոնիզմի ծայրահեղ դրսևորումներից են.

1) համաշխարհային պատմությունը միմիայն եվրոպական (և եվրոամերիկյան) սխեմաներով ներկայացնելը, որոնց մեջ առաջին պլան մղված է առաջընթացի գաղափարը:

2) առաջընթացը ռասայական առանձնահատկությամբ[495] պայմանավորելը. գիտության, տեխնոլոգիաների, իրավունքի, և ընդհանուր առմամբ գիտության առաջընթացը կապվում էր ռասայական պատկանելության հետ[496]:

3) սոցիալ-դարվինիզմը:

---

[493]**Harris** 1968: 131.

[494] Այս դրույթը էվոլյուցիոն հայեցակարգերում արծարծվել է Ջ. Լյոբոկից (Леббок 2011: 470-471) մինչև Հ. Նազարեթյան:

[495] Սակայն ինքը՝ Չ. Դարվինը, ակնհայտ հակառասիստական հայացքներ ուներ Տե՛ս, օրինակ, **Дарвин** 1953: 527-528, 538.

[496]**Harris** 1968: 135-137, 138. **Джонсон, Эрл** 2017: 15.

Այս դրսևորումները հանգեցրին գիտական նոր հայեցակարգերի ձևավորմանը, որոնք ընթացան առհասարակ էվոլյուցիոնիզմը ժխտելու ուղղությամբ:

XX դարասկզբին տեղական ճշգրիտ ժամանակագրությունների զարգացմանը զուգընթաց մասնագետները ավելի շատ ուշադրություն սկսեցին հատկացնել աշխարհագրական տեսակետից որոշակի սահմաններում գոյություն ունեցող հնագիտական «մշակույթների» ուսումնասիրմանը և հնագիտական գտածոների հիման վրա մշակույթի պատմության վերականգնմանը[497]: Մասնավորապես ամերիկյան պատմագիտության մեջ ձևավորվեց նոր դպրոց, այսպես կոչված ***«Պատմական դպրոցը»***, որի հիմնադիրն է Ֆրանց Բոասը: 1896 թ. իր հայտնի ելույթից սկսած՝ Ֆ. Բոասը պայքար սկսեց հասարակական զարգացման ցանկացած սխեմայի դեմ, որոնց թվում էին և՛ Հ.Սպենսերի, և՛ Լ.Մորգանի, և՛ մարքսիստական հայեցակարգերը, դրանք բոլորը համարելով «միագիծ էվոլյուցիոնիզմի» դրսևորումներ: Բոասը պայքար ծավալեց ռասիստական հայեցակարգերի դեմ, և պետք է նշել, որ հենց նա ամենամեծ ավանդն ունեցավ մարդաբանության մեջ պարադիգմերի փոփոխության հարցում. ռասային փոխարինեց մշակույթը, ավելի ճիշտ բազմաթիվ մշակույթները բոասյան մեկնաբանմամբ: Բոասյան պարադիգմը, որն այլ կերպ կոչվում է մշակութային ռելյատիվիզմ, գերակայում էր բրիտանական և ամերիկյան գիտության մեջ XX դարի առաջին տասնամյակներին[498]:

---

[497]**Dietler** 1996: 73.
[498]**Назаретян** 2004: 44.

Ընդհանրացնող տեսական հայեցակարգերին Բոասն ու իր աշակերտները[499] առաջարկում էին մեթոդ, որը պետք է հիմնվեր ազգագրական ճշգրիտ տվյալների հավաքագրման, օբյեկտիվության և գիտական զգուշավորություն օրինաչափությունների դուրսբերման վրա, հանդես էին գալիս յուրաքանչյուր մշակույթի առանձնահատկությունը ընդգծելու և տեսական սոցիոլոգիական *համակարգեր* ստեղծելու դեմ՝ գտնելով որ յուրաքանչյուր համակարգ անհրաժեշտ է դիտարկել միմիայն իր պայմաններից ելնելով և իր միջավայրում: Ոչ արևմտյան մշակույթները չպետք է ընկալվեին որպես «կենդանի հանածոներ»: Հենվելով էմպիրիկ ուսումնասիրությունների վրա՝ Բոասը գտնում էր, որ միշտ չէ, որ զարգացումն ընթանում է վերընթաց ուղիով, որ կան և՛ հորիզոնական, և հետընթաց զարգացումներ, ինչի հիման վրա նա մերժում էր առաջընթացն առհասարակ[500]:

Ինչպես գրում էր Ռ. Կարնեյրոն, բրիտանական սոցիալական մարդաբանները բազմաթիվ հանգամանալի աշխատություններ են գրել Աֆրիկայի տեղական պոլիտիաների մասին: Այդ պոլիտիաները կարելի է բաշխել մեծ մի սանդղակով՝ թափառող խմբերից մինչև հասուն պետության կարգավիճակ ունեցողները: Բայց նրանց նեղ ֆունկցիոնալիստական տեսադաշտը թույլ չէր տալիս նրանց տեսնել այն փաստը, որ այդ հանրույթները էվոլյուցիոն շարք են կազմում[501]:

---

[499]Alfred Louis Kroeber, Ruth Benedict և ուրիշներ.
[500]**Аверкиева** 1979: 83-84.
[501]**Carneiro** 2000: 85.

